2015 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության

Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի դիտորդական առաքելության

Ա Մ Փ Ո Փ Ի Չ Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

Երևան 2016 թ.

Սույն հրապարակումն ամփոփում է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության և Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմի կողմից ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի կազմակերպման և անցկացման նկատմամբ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED - National Endowment for Democracy), Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED - European Endowment for Democracy), Երևանում Գերմանիայի դաշնային հանրապետության դեսպանատան և Եվրոպական միության աջակցությամբ իրականացված դիտորդական առաքելության արդյունքները:

Հրապարակման մեջ տեղ գտած կարծիքները պատկանում են դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին և չեն արտացոլում ֆինանսավորող կազմակերպությունների տեսակետները:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը (հիմնադրվել է 2013թ.-ին) 4 հասարակական կազմակերպությունների կոալիցիա է, որի նպատակն է վերահսկել համապետական և տեղական ընտրությունները Հայաստանում և դրանց համապատասխանությունը ներպետական օրենսդրությանը և միջազգային ժողովրդավարական չափանիշներին:

Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմը (հիմնադրվել է 2012թ.-ին) 13 հասարակական կազմակերպությունների կոալիցիա է, որի նպատակն է աջակցել Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանում ընտրությունների հանրային վերահսկությանը և Եվրոպայում ժողովրդավարական ընտրական գործընթացների կայացմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 5

1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 6

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ 9

3.1 Ժամանակագրություն 9

3.2 Նախագծի բովանդակության հետ կապված մտահոգություններ 11

3.3 Փոփոխությունների ընդունման գործընթացի հետ կապված մտահոգություններ 12

4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ 16

4.1 Պաշտոնական դիրքի և ազդեցության օգտագործում 16

4.2 Քարոզչություն կրթական հաստատություններում 18

4.3 Բյուջետային և մասնավոր հիմնարկների աշխատողների նկատմամբ պարտադրանք 19

4.4 Ընտրացուցակների հետ կապված խնդիրներ 20

4.5 Ընտրակաշառքի խոստումներ և փորձեր 21

4.6 Նախագծի ընդդիմախոսների նկատմամբ ճնշումներ և քարոզչության խոչընդոտներ 23

4.7 Այլ խախտումներ 25

5. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ 26

5.1 Մեթոդաբանություն 26

5.2 Հավատարմագրման հետ կապված խոչընդոտներ 27

5.3 Նորարարական գործիքների կիրառում 29

6. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 29

6.1 Տեղամասերի նախապատրաստում 30

6.1.1 Քարոզչական նյութերի առկայություն տեղամասում և տեղամասի սխալ կահավորում 30

6.1.2 Տեղամասի անմատչելիություն սայլակով տեղաշարժվողների համար 31

6.2 Քվեարկության ընթացք 31

6.2.1 Տեղամասային հանձնաժողովների աշխատակարգի խախտում 31

6.2.2 Քվեատուփի լցոնում 32

6.2.3 Բազմակի քվեարկություն կամ այդպիսի փորձ 33

6.2.4 Ընտրակաշառքի բաժանում / խոստումներ 34

6.2.5 Ընտրողին օգնելու կարգի և քվեարկության գաղտնիության խախտում 35

6.2.6 Քվեաթերթիկի դուրս հանում տեղամասից 36

6.2.7 Քվեարկության այլ պարագաների դուրս հանում ընտրական տեղամասից 36
6.2.8 Կողմնակի անձանց և/կամ նույն կազմակերպությունից մեկից ավելի անձանց ներկայություն և նրանց կողմից քարոզչություն տեղամասում 37
6.2.9 Ընտրողների ուղղորդում տեղամասում և տեղամասից դուրս, ընտրողների խմբերի տեղափոխում 37
6.2.10 Ընտրողների կուտակումներ տեղամասում, մարդկանց կամ մեքենաների կուտակումներ տեղամասից դուրս 38
6.3 Արդյունքների ամփոփում 38
6.3.1 Արդյունքների ամփոփման կարգի խախտում 38
6.3.2 Քվեարկության արդյունքների կեղծում 39
6.4 Դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների խախտումներ 41
6.5 Տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունների քաղվածքների ուսումնասիրություն 43
6.6 Վերահաշվարկ 47
6.7 Բողոքարկում 48
6.8 Իրավապահ մարմինների արձագանքը 51
6.9 Նորարարական գործիքների կիրառման արդյունքները 52
7 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 54
8 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56
8.1 Ընտրողների ցուցակների հրապարակայնություն. 56
8.2 Վարչական ռեսուրսի օգտագործման արգելում և պատժում 57
8.3 Ընտրական վարչարարության բարելավում 58
8.4 Բողոքարկման գործընթացների արդյունավետության երաշխավորում 58
8.5 Դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների ընդլայնում 59
8.6 Հանրային վերահսկողության հնարավորությունների ընդլայնում 60
9 ԱՄՓՈՓՈՒՄ 60
ՀԱՎԵԼՎԱԾ 1 61
ՀԱՎԵԼՎԱԾ 2 88
ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ 98

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայության
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸՕ	Ընտրական օրենսգիրք
ԹԻՀԿ	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
ԺԱԱ	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
ԺԸԵՊ	Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմ
ԻԵՄ	«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿՀ (ԿԸՀ)	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով (Կենտրոնական ընտրական հանձնաժողով)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԿ	Հայաստանի հանրապետական կուսակցության
ՀՏՀ	Հանրաքվեի տարածքային հանձնաժողով
ՀՔԱՎ	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
ՍԴ	Սահմանադրական դատարան

1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքում դիտորդական առաքելությամբ հանդես է եկել «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը, որը ստեղծվել է 2013թ. «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ), «Իրավունքի Եվրոպա միավորում» (ԻԵՄ), «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) և «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» (ՀՔԱՎ) հասարակական կազմակերպությունների (ՀԿ) կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում համապետական և տեղական ընտրությունները և ներպետական օրենսդրությանն ու միջազգային ժողովրդավարական չափանիշներին դրանց համապատասխանությունը վերահսկելու նպատակով: Սահմանադրական հանրաքվեի վերահսկողության գործընթացում «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակում ներգրավվել են հայաստանյան 28 հասարակական կազմակերպություն մոտ 1000 անհատներով՝ իրականացնելով դիտորդական առաքելություն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) գրեթե բոլոր ընտրատարածքների 520 տեղամասերում (ընդհանուրի մեկ քառորդում): Հանրաքվեի վերահսկողությանը միացել է Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմը, որի փորձագետները նաև կատարել են հանրաքվեի պաշտոնական արդյունքների վիճակագրական վերլուծություն և գնահատել միջազգային դիտորդական առաքելությունների որակն ու անկողմնակալությունը:[1]

2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական հանրաքվեն չի համապատասխանել Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) *Հանրաքվեների օրինակելի պրակտիկայի կանոնագրքում* (անգլ.՝ Code of Good Practice on Referendums)[2] ամրագրված այնպիսի նորմերի, ինչպիսիք են ընտրական ցուցակների արժանահավատությունը, հավասար ընտրական իրավունքի ապահովումը, ընտրողների՝ կարծիք ձևավորելու և իրենց կամարտահայտման ազատության երաշխավորումը, հանրաքվեի պատշաճ դիտարկման հնարավորությունը և արդյունավետ բողոքարկման համակարգը. Ուստի, կարելի է պնդել, որ հանրաքվեի արդյունքները չեն արտացոլում Հայաստանի քաղաքացիների կամքը, դրանք մեծամասամբ պարտադրված և կեղծված են, և, այդպիսով, հանրաքվեն և դրա միջոցով ընդունված փաստաթուղթը չեն կարող համարվել լեգիտիմ:

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի քվեարկության օրը դիտորդական առաքելությունն արձանագրել է լայնածավալ, վերջին տարիների համար աննախադեպ և, կարծես թե, մոռացված կոպիտ խախտումներ ու կեղծիքներ՝ ինչպիսիք են դիտորդների և զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) ներկայացուցիչների, ինչպես նաև՝ վստահված անձանց իրավունքների համատարած սահմանափակումները և վերջիններիս լիազորությունների իրականացման խոչընդոտումը, քվեարկության ընթացակարգերի խախտումները, քվեատուփի լցոնումը, կաշառքը, ֆիզիկական ուժի կիրառումը, կրկնակի քվեարկությունները, ամփոփման ընթացքում քվեարկության արդյունքների նենգափոխումը, ամփոփիչ արձանագրությունների կեղծումը, որոնց վերաբերյալ առաքելության կազմում ներգրավված դիտորդներից և ԶԼՄ ներկայացուցիչներից ստացվել են թվով մոտ 1080

[1] Հավելվածներ 1 և 2
[2] http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282007%29008-e

ահազանգեր, որոնցից շուրջ 130-ը՝ վերաբերել են վերջիններիս իրավունքների խախտումներին և լիազորությունների իրականացման խոչընդոտներին: [3]

Կազմվել և հանրաքվեի ընտրատարածքային և կենտրոնական հանձնաժողովներ են ներկայացվել ընտրական գործընթացի խախտման վերաբերյալ թվով 156 տեղամասից ստացված ահազանգերի առնչությամբ դիմում-բողոքներ և շուրջ 258 տեղամասերի ամփոփիչ արձանագրությունների վավերության վերաբերյալ դիմում-բողոքներ: Դիմումների կապակցությամբ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի (ՀԿՀ) որոշումները վիճարկվել են ՀՀ վարչական և սահմանադրական դատարանում, սակայն վերջիններիս կողմից դրանք պատշաճ բովանդակային քննության չեն ենթարկվել: Ահազանգերի քարտեզում արձանագրված և ԶԼՄ-ներով լուսաբանված ընտրախախտումները, ինչպես նաև դրանց հիման վրա ՀԿՀ-ին ուղղված հրապարակային դիմում-բողոքները հիմք են հանդիսացել իրավապահ մարմինների կողմից ընտրակեղծիքների փաստերով նյութեր նախապատրաստելու համար:

Վերոնշյալ խախտումների նկատմամբ արձագանքը կամ, ավելի ճիշտ, պատշաճ արձագանքի բացակայությունը թե՛ ընտրական վարչարարությամբ զբաղվող իրավասու մարմինների՝ հանրաքվեի հանձնաժողովների, թե՛ իրավապահ մարմինների և թե՛ դատական համակարգի կողմից կարող են ակնարկել դրանց համակարգված և համընդհանուր բնույթ ունենալու, ինչպես նաև նշված պետական ինստիտուտների՝ իրենց օրինական գործառույթներն իրականացնելու անկարողության կամ ցանկության բացակայության մասին:

Բացի վերոնշյալը, դիտորդական առաքելության ընթացքում վեր են հանվել և հիմնավորվել համակարգային բնույթ կրող այլ խնդիրներ ևս, որոնց մի մասը պայմանավորված է առկա իրավակարգավորումների չկիրառմամբ, իսկ զգալի մասը՝ ընտրական օրենսդրության բացերով ու թերություններով: Մասնավորապես, ընտրողների ցուցակների վարման կարգի, վարչական ռեսուրսի օգտագործման, ընտրական վարչարարության, քաղաքացիական վերահսկողության, ընտրական վեճերի ոլորտներում առկա խնդիրները լուրջ խոչընդոտ են արդյունավետ ընտրական համակարգի կայացման ճանապարհին՝ վստահելի ընտությունների ապահովման և այդ գործընթացներում իրավունքների արդյունավետ պաշտպանության համար: Քանի որ այդ խնդիրների ազդեցությունն առանցքային դեր ունի ընտրական իրավունքի երաշխավորման տեսանկյունից, անհրաժեշտ է, որ դրանք հաշվի առնվեն ընտրական օրենսդրության վերանայման շրջանակներում և հետագայում կազմակերպվելիք ընտրական գործընթացներում:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2015 թ. դեկտեմբերի 6-ին անցկացված սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն միանշանակորեն Հայաստանի Հանրապետության համար առանցքային նշանակություն ունեցող միջոցառում էր: Այն կարևոր էր ոչ միայն նրանով, որ ժողովրդի քվեարկությանն էր ներկայացվել, ըստ էության, մի նոր սահմանադրություն, որով փոխվելու էր պետության

[3] Ընտրախախտումները, ինչպես նաև դրանց վերաբերյալ լուսանկարներն ու տեսանյութերը գրանցված են ահազանգերի քարտեզում՝ http://transparency.am/elections/2015-12-06/map հասցեով

կառավարման համակարգը և քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների շրջանակը, այլև նրանով, որ այն հնարավորությունն էր տալիս գնահատել հանրաքվեի կազմակերպման և անցկացման գործընթացում ներգրավված ինստիտուտների քաղաքական չեզոքությունը, ընտրողների ազատ կամարտահայտման երաշխավորումը, ապահովումը և ժողովրդավարական գործընթացների պատշաճ մակարդակը, մասնավորապես՝ հաշվի առնելով վերջին ժամանակահատվածի համապետական ընտրություններում միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից հնչեցված՝ ընտրական գործընթացներում շարունակական առաջընթացի վերաբերյալ հայտարարությունները:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում հանրաքվեի վերահսկողությունն իրականացնելու նպատակով համախմբվեցին մոտ երկու տասնյակ հասարակական կազմակերպություններ և ավելի քան 1000 անհատ, որոնք դիտորդի կամ ՁԼՄ ներկայացուցչի կարգավիճակով դիտորդական առաքելություն իրականացրեցին շուրջ 520 տեղամասերում՝ ընդհանուրի առմամբ մոտ մեկ քառորդում:

Սույն զեկույցը տրամադրում է փաստական, անկողմնակալ և անկախ դիտանկյուն սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի գործընթացների մասին՝ արտացոլելով դիտորդական առաքելության հիմնական արդյունքները, հանրաքվեի ընթացքում նկատված խախտումներն ու կեղծիքները, քաղված դասերը և վեր հանված խնդիրները հաղթահարելու որոշ եղանակներ և միջոցներ: Վերջիններս կարևորվում են հատկապես նրանով, որ առաջիկա ամիսների ընթացքում նախատեսվում է վերանայել գոյություն ունեցող ընտրական իրավակարգավորումները և ընդունել նոր ընտրական օրենսգիրք:

Զեկույցի հիմնական թիրախ են հանդիսանում՝

- *հանրությունն՝ ընդհանուր առմամբ*, որն, ըստ էության, հանդիսանում է ցանկացած ընտրությունների/հանրաքվեի դիտորդական առաքելության հիմնական «պատվիրատուն» և դրա արդյունքների հիմնական շահառուն,
- *քաղաքական որոշումներ ընդունող և դրանք կյանքի կոչող պետական մարմիններն՝* ի դեմս Ազգային Ժողովի (ԱԺ) և գործադիր իշխանության համապատասխան մարմինների, ինչպես նաև ընտրական վարչարարությամբ զբաղվող ինստիտուտների՝ ընտրական/հանրաքվեի հանձնաժողովները, Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի (ՀԿՀ) գլխավորությամբ, որոնք նաև պատասխանատու դեր են ստանձնելու նոր ընտրական համակարգի օրենսդրական կարգավորումների մշակման գործում,
- *հասարակական և քաղաքական միավորները*, որոնք շահագրգռված են Հայաստանի ընտրական համակարգի բարելավմամբ և նպատակ ունեն թե՛ իրավական կարգավորումների մշակման և թե՛ դրանց կիրառման փուլում գործուն մասնակցություն ունենալ,
- *միջազգային կազմակերպությունները,* որոնք աջակցում են ժողովրդավարական գործընթացների զարգացմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը և կարիք ունեն պատկերացում կազմելու հայաստանյան ընտրական համակարգում տիրող իրավիճակի, ինչպես նաև դրա բարելավման հնարավոր ուղղությունների մասին:

Զեկույցը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝

- Սահմանադրական փոփոխությունների նախապատմություն բաժինը համառոտ ներկայացնում է հանրաքվեի անցկացման ենթատեքստը, դրան նախորդած զարգացումների ժամանակագրությունը, ինչպես նաև համառոտ ակնարկ փոփոխությունների նախագծի բովանդակության և մշակման գործընթացի նկատմամբ բարձրաձայնված քննադատության մասին.
- Սահմանադրական փոփոխությունների քարոզչության բաժնում ներառված են տեղեկություններ հանրաքվեի քարոզչության ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործման և դրանով պայմանավորված խախտումների և ռիսկային գործընթացների վերաբերյալ.
- Դիտորդական առաքելության ընդհանուր նկարագրություն բաժնի հիմնական խնդիրն է ներկայացնել առաքելության մանրամասները, ներառյալ՝ կազմը և մեթոդաբանությունը, ինչպես նաև դրա կազմակերպման ընթացքում տեղ գտած խոչընդոտները.
- Դիտորդական առաքելության արդյունքները բաժինը սույն զեկույցի հիմնական մասն է, որտեղ ըստ 6 խմբերի և ավելի քան երկու տասնյակ ենթախմբերի ներկայացվում են դիտորդական առաքելության ընթացքում վեր հանված խախտումները և ընտրակեղծիքները.
- Եզրակացությունների բաժինն ամփոփում է դիտորդական առաքելության արդյունքում ձևավորված՝ հանրաքվեի ընդհանուր պատկերը և տալիս դրա գնահատականը.
- Առաջարկությունների բաժնում ուրվագծված են Հայաստանում քաղաքացիների ընտրական իրավունքի պատշաճ իրականացման համար առաջնահերթ և արմատական լուծում պահանջող հիմնական ուղղությունները.
- Ամփոփման բաժինը ներկայացնում է շահագրգիռ հիմնական կողմերից՝ քաղաքացիներից, պետական մարմիններից, հասարակական ու քաղաքական միավորներից և միջազգային կազմակերպություններից ակնկալվող քայլերը սույն զեկույցում վերհանված խնդիրների և լուծումների կապակցությամբ:

3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Սահմանադրական փոփոխությունների ողջ գործընթացը խնդրահարույց էր՝ սկսած այդպիսի համակարգային փոփոխությունների և նոր սահմանադրության համար անհրաժեշտ և բավարար օբյեկտիվ նախադրյալների, ինչպես նաև հանրային պահանջի բացակայության պայմաններում միանձնյա նախաձեռնությունից, հանձնաժողովի կազմի որոշումից ու նախագծի մշակումից՝ մինչև դրա առաջ մղման գործընթացը:

3.1 Ժամանակագրություն

ՀՀ նախագահի № ՆՀ-207-Ն հրամանագրով 2013թ. սեպտեմբերի 4-ին ստեղծվեց ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը (այսուհետ՝ սահմանադրական հանձնաժողով), որի գործառույթն էր մշակել սահմանադրական

բարեփոխումների հայեցակարգն ու նախագիծը: Հրամանագրի համաձայն՝ սահմանադրական բարեփոխումները պայմանավորված էին իրավունքի գերիշխանության սկզբունքի կիրառման, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական մեխանիզմների բարելավման, իշխանությունների տարանջատման/բաժանման ապահովման և հանրային կառավարման ավելի բարձր արդյունավետության հասնելու անհրաժեշտությամբ[4]:

2014թ հոկտեմբերի 15-ին սահմանադրական հանձնաժողովը հրապարակեց և ՀՀ նախագահին ներկայացրեց Սահմանադրական փոփոխությունների հայեցակարգը[5], որի վերաբերյալ իր կարծիքը ներկայացրեց նաև Վենետիկի հանձնաժողովը[6]:

2015թ. հուլիսի 15-ին սահմանադրական հանձնաժողովը հրապարակեց սահմանադրական փոփոխությունների 1-7 գլուխների և 10-րդ գլխի նախագիծը[7], իսկ օգոստոսի 4-ին 8-16 գլուխները և վերախմբագրված 1-7 գլուխները[8]: 2015թ. հուլիսի 17-ին Վենետիկի հանձնաժողովը ներկայացրեց 1-7 գլուխների և 10-րդ գլխի վերաբերյալ իր կարծիքը[9]:

2015թ. օգոստոսի 20-ին սահմանադրական հանձնաժողովն իր ամփոփիչ նիստում որոշեց հաստատել Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը[10] և ներկայացնել ՀՀ նախագահին:

2015թ. օգոստոսի 21-ին ՀՀ նախագահը Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագիծն ուղարկեց ՀՀ Ազգային ժողով (ԱԺ)[11] և նույն օրը նախագիծն ու կից հիմնավորումները հրապարակվեցին ՀՀ արդարադատության նախարարության կայքում[12]:

Ընդամենը 3 օր անց՝ 2015թ. օգոստոսի 24-ին Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչների՝ Երևան կատարած այցի ընթացքում սահմանադրական հանձնաժողովը Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչների հետ քննարկել և բանակցել է նախագծի մի տարբերակ, որն առնվազն 12 հոդվածով տարբերվում է ՀՀ Ազգային ժողով ներկայացված նախագծից. այսինքն եվրոպացի փորձագետների հետ համաձայնեցումները ծավալվել են մի փաստաթղթի շուրջ, իսկ ԱԺ-ն քննարկել է մեկ այլ փաստաթուղթ[13]:

Սեպտեմբերի 4-ին ՀՀ ԱԺ-ում անցկացվեցին նախագծի վերաբերյալ խորհրդարանական լսումներ:

Սեպտեմբերի 10-ին Վենետիկի հանձնաժողովը հրապարակեց իր կարծիքը Սահմանադրական բարեփոխումների նախագծի 1-7 գլուխների և 10-րդ գլխի

[4] http://www.president.am/hy/decrees/item/947/
[5] http://www.moj.am/storage/uploads/Sahmanadrakan_barepokhumner.14.10_.pdf
[6] http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD%282014%29027-e
[7] http://www.moj.am/article/1326
[8] http://www.moj.am/article/1353
[9] http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)015-e
[10] http://www.moj.am/storage/uploads/Nakhaqits.fn.docx
[11] http://www.president.am/hy/press-release/item/2015/08/21/President-Serzh-Sargsyan-Constitution-National-Assembly/
[12] http://www.moj.am/article/1361
[13] http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2015)019-arm

վերախմբագրված տարբերակի վերաբերյալ[14], իսկ սեպտեմբերի 11-ին՝ 8-16 գլուխների մասին[15]:

Սեպտեմբերի 15-18-ի քառօրյա նիստի ընթացքում սահմանադրական փոփոխությունների նախագիծը հանդիսացավ ՀՀ ԱԺ քննարկման հիմնական նյութը, իսկ արդեն հաջորդ նիստի ժամանակ՝ 2015թ. հոկտեմբերի 5-ի քառօրյա նիստին խորհրդարանն ընդունեց «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» որոշումը: Նույն օրը հրապարակվել էր Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոյի ուղերձը ԱԺ-ին, որտեղ նա ողջունել էր սահմանադրական փոփոխություններն ու դրական գնահատական տրվել նախագծի բովանդակությանը, ինչպես նաև կարևորել հանրաքվեի պատշաճ կերպով անցկացման անհրաժեշտությունը[16]:

ՀՀ ԱԺ որոշման հիման վրա ՀՀ նախագահը հոկտեմբերի 8-ին հրապարակեց հրամանագիր՝ հանրաքվեի օր նշանակելով 2015 թվականի դեկտեմբերի 6-ը: Հանրաքվեի պաշտոնական քարոզարշավը մեկնարկեց 2015 թվականի հոկտեմբերի 10-ից:

3.2 Նախագծի բովանդակության հետ կապված մտահոգություններ

Սահմանադրական փոփոխությունների նախագիծը նախատեսում էր պետության հիմնական իրավական փաստաթղթի համարյա ամբողջական վերանայում այդ թվում անփոփոխելի 114-րդ հոդվածի փոփոխություն՝ անփոփոխ թողնելով միայն առաջին երկու հոդվածները՝ միևնույն ժամանակ, փաստաթղթի ծավալն ու հոդվածների քանակը մեծացնելով մոտ երկու անգամ:

Բովանդակային առումով նորամուծություններից կարևորագույնը անցումն է կիսանախագահականից խորհրդարանական կառավարման համակարգի՝ արմատապես փոխելով զսպումների և հակակշիռների համակարգը և որոշումների ընդունման գրեթե բոլոր լծակներն ընձեռելով խորհրդարանին, որտեղ գլխավոր դերակատարումը վերապահված է կայուն մեծամասնություն ունեցող մեկ կուսակցությանը և այդ կայուն մեծամասնության պայմանը սահմանված է հենց սահմանադրությամբ:

Փոփոխությունների հարցում, մասնավորապես՝ կայուն մեծամասնության ձևավորման նպատակահարմարության և միակուսակցական համակարգի ռիսկերի առումով, կային լուրջ մտահոգություններ քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի շրջանում, որոնք, ենթադրաբար, կարելի էր փարատել համատեղ և ընգրկուն քննարկումների և փոխզիջումների միջոցով, ինչը չի արվել:

Սակայն, ի լրումն կառավարման համակարգի և դրա կազմակերպման հետ կապված խնդիրների, սահմանադրական փոփոխությունների նախագիծը պարունակում էր լրջագույն ռիսկեր մարդու իրավունքների և ժողովրդի իշխանության իրացման առումով:

[14] http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)015rev-e
[15] http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)019-e
[16] http://www.venice.coe.int/files/2015_05_10_statement_Yerevan.pdf

Նախագիծը նախատեսում է ակնհայտ հետընթաց ոչ միայն ՀՀ գործող Սահմանադրությունից, այլև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված չափանիշներից: Մասնավորապես, ըստ փոփոխությունների վատթարանում են անձնական ազատության, արդար դատաքննության իրավունքների, հաղորդակցության գաղտնիության իրավունքի, խղճի, միավորումների, հավաքների և արտահայտման ազատությունների, ինչպես նաև սոցիալական և առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքին առնչվող նորմերը[17]: Սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ Հայաստանի փաստաբանական համայնքի կողմից ներկայացվել է երկու բավականին խիստ քննադատական մասնագիտական կարծիք՝ հիմք ընդունելով նախագծի և գործող սահմանադրության և միջազգային փաստաթղթերի ու սկզբունքների հետ համեմատական վերլուծությունը[18]: Նախագծի բացասական հետևանքների վերաբերյալ կազմվել և տարածվել են բազմաթիվ նյութեր իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից[19]:

Հարկ է նշել, որ ՀՀ «Հանրաքվեի մասին» օրենքի 4-րդ հոդվածի «գ» կետի համաձայն[20] «հանրաքվեի չեն կարող դրվել ... մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող ... հարցերը», ուստի կային հիմքեր կասկածի տակ դնելու թե՛ ԱԺ-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» 2015թ. հոկտեմբերի 5-ի որոշման, թե՛ ՀՀ Նախագահի՝ սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու և հանրաքվե նշանակելու մասին հրամանագրի օրինականությունը[21]:

Չնայած հանրության շահագրգիռ և պրոֆեսիոնալ հատվածների կողմից ներկայացված բազմաթիվ բացասական գնահատականներին, դրանք անտեսվեցին սահմանադրության փոփոխությունների հեղինակների կողմից:

3.3 Փոփոխությունների ընդունման գործընթացի հետ կապված մտահոգություններ

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնությունը անսպասելի էր, քանի որ ոչ գործող նախագահ Ս.Սարգսյանը և ոչ էլ նրա կողմից ղեկավարվող ՀՀԿ-ն իրենց նախընտրական ծրագրերում չէին հայտարարել այդպիսի մտադրության մասին: Եվ թեպետ մի շարք կուսակցությունների կողմից տարիներ շարունակ տարվել էր աշխատանք կառավարման խորհրդարանական համակարգը խթանելու և ամբողջությամբ համամասնական ընտրական համակարգին անցնելու ուղղությամբ, սահմանադրական

[17] http://www.partnership.am/am/Constitutional_Amendments/38457
[18] http://www.lex.am/docs/lawyers%20opinion.pdf և http://advocates.am/images/handznazhoghovner/sahmanadrakan_31082015/Kartcik-Sahmanadrutyun-verjnakan_compressed.pdf
[19] http://www.partnership.am/am/Constitutional_Amendments/38457, http://hcav.am/publications/21-01-2016-555879/, http://apellainstitute.org/wp-content/uploads/2015/11/Opinion-on-Constitutional-Reforms-Apella-Institute-Armenian.pdf, https://www.youtube.com/watch?time_continue=89&v=s_jRH0JeQWI
[20] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=98878
[21] http://hcav.am/publications/21-01-2016-555879/

փոփոխությունները 2013թ. սեպտեմբերի 4-ի դրությամբ քաղաքական օրակարգի մաս չէին և, կարելի է հավաստել, որ նախաձեռնվել էին Ս.Սարգսյանի միանձնյա որոշմամբ:

ՀՀ նախագահի կողմից սահմանադրական փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես գալուց ի վեր ինչպես ընդդիմադիր քաղաքական ուժերի, այնպես էլ հասարակական կազմակերպությունների և անհատ գործիչների կողմից հնչեցվել են բազմաթիվ մտահոգություններ դրա աննպատակահարմարության, ինչպես նաև նախատեսվող հանրաքվեի՝ միջազգային ստանդարտներին անհամապատասխանության վերաբերյալ,[22] մասնավորապես հիմնավորելով տվյալ պնդումը նրանով, որ

- Հայաստանում չկան սահմանադրական փոփոխությունների համար ողջամտորեն անհրաժեշտ նախադրյալներ, ինչպես օրինակ՝ կառավարման ճգնաժամ, հանրային պահանջ, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման մասով և այլմիջազգային պարտավորությունների կատարման անհնարինություն.
- լրջագույն խնդիր էր ոչ թե ՀՀ գործող սահմանադրության անկատարությունը, այլ դրա կիրարկումը, որը մեծապես պայմանավորված է սահմանադրական ինստիտուտների ոչ պատշաճ գործունեությամբ.
- խիստ ցածր է ընտրական համակարգի նկատմամբ վստահության աստիճանը (համաձայն Գելափ ընկերության հարցման 12-13 տոկոսի շրջանում)[23] և բարձր՝ սահմանադրական փոփոխությունների գործընթացի նկատմամբ անվստահությունը (պատասխանողների 81 տոկոսը բոլորովին կամ ավելի շուտ չեն վստահում)[24], ինչը կարող է կասկածի տակ դնել հանրաքվեի լեգիտիմությունը.
- ընտրական համակարգի հետ կապված միջազգային դիտորդ կազմակերպությունների կողմից բազմիցս իշխանությունների ուշադրությանը ներկայացված թերացումները և խնդիրները մեծամասամբ անտեսվել են[25] և, մասնավորապես, չի գրանցվել որևէ առաջընթաց 2012թ. խորհրդարանական և 2013թ. նախագահական ընտրություններից հետո Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) կողմից ներկայացված առաջարկությունների իրականացման կապակցությամբ:

Առանձնակի մտահոգության առարկա էր դարձել ՀՀ նախագահի կողմից ստեղծված սահմանադրական հանձնաժողովը, որի կազմում պետական պաշտոն զբաղեցնողները և իշխող կուսակցության ներկայացուցիչները գերակշիռ թիվ էին կազմում: Այսպես՝ հանձնաժողովի 9 անդամներից 6-ը ուղղակիորեն կախված էին գործող նախագահից (2-ը՝ նախագահի կողմից ղեկավարվող իշխող Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) անդամներ են, 2-ը՝ ՀՀ նախագահի աշխատակազմի և նրա անմիջական հսկողության տակ աշխատող աշխատակիցներ են, 1-ը՝ ղեկավար պաշտոն է զբաղեցնում նախագահի ղեկավարությամբ գործող հոգաբարձուների խորհրդի կողմից կառավարվող Երևանի պետական համալսարանում), այսինքն, փաստացի, հանձնաժողովի հիշյալ անդամներն իրենց մասնագիտական գործունեությունն իրականացրել են հանրային և մասնավոր շահերի

[22] http://transparency.am/hy/news/view/1086
[23] http://www.gallup.com/poll/157997/women-worldwide-less-confident-men-elections.aspx
[24] http://www.aprgroup.org/images/Library/Constitution/report_constitution_web_q.pdf
[25] http://hcav.am/en/publications/implementation-of-international-election-observation-mission-recommendations-in-armenia-in-2003-2013/

բախման իրավիճակում: Լրջագույն խնդիր էր այն, որ սահմանադրական հանձնաժողովը ղեկավարում էր ՀՀ սահմանադրական դատարանի (ՍԴ) նախագահ Գագիկ Հարությունյանը, ով իր պաշտոնեական գործունեությանը և ի պաշտոնե երդմանը հակասող նախաձեռնության մեջ ներգրավվելուց բացի, ակտիվորեն անձամբ լծվել էր սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի քարոզչության գործին՝ սկզբից ևեթ կասկածի տակ դնելով նախատեսվող հանրաքվեի արդյունքների՝ ՍԴ-ում հնարավոր վեճի քննության անկողմնակալությունը և արդյունավետությունը:

Վերոնշյալ դրսևորումները, զուգակցվելով սահմանադրության նախագծի բովանդակության հետ կապված լրջագույն խնդիրներով և մտահոգություններով, հետագայում համալրվեցին նաև նախագծի մշակման և ընդունման ընթացքում տեղ գտած խնդիրներով, մասնավորապես հապճեպ և հանրային կարծիքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի փաստերով:

Ինչպես ցույց է տալիս սահմանադրական փոփոխությունների գործընթացի ժամանակագրությունը, սահմանադրական հանձնաժողովը նախագծի մշակման վրա ծախսել էր գրեթե 2 տարի, մինչդեռ հանրությունը ծայրահեղ սահմանափակ ժամանակ և հնարավորություն ունեցավ տեքստի մշակման գործընթացին մասնակցելու և դրան, առհասարակ, պատշաճ արձագանքելու համար: Ավելին, սահմանադրության նախագծի վերաբերյալ իրազեկման ծավալներն այնպիսին էին, որ կարելի է պնդել, որ դրա վերաբերյալ կամքի ազատ ձևավորման համար անհրաժեշտ և բավարար պայմաններն ապահովված չէին:

Նախագծի տեքստի առաջին մասը հանրությանը ներկայացվեց հուլիսի 15-ին, իսկ ամբողջականը՝ միայն օգոստոսի 21-ին՝ ՀՀ նախագահի կողմից նախագիծն ԱԺ ներկայացնելուց հետո: Փաստաթուղթը հրապարակվեց հանրային մասնակցության ամենապասիվ շրջանում, երբ շատ հասարակական կառույցներ գտնվում էին արձակուրդում և չէին կարող համապատասխանաբար արձագանքել հապշտապ տեղի ունեցող գործընթացներին: Հաշվի առնելով, որ սահմանադրական հանձնաժողովն էլ մինչ այդ չէր կազմակերպել հանրային քննարկումներ սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ, իսկ հայեցակարգի մշակման փուլի քննարկումներն անցկացվել էին միայն սահմանափակ խմբերի ներգրավմամբ, կարելի է փաստել, որ Հայաստանի հանրությանը չի տրամադրվել սահմանադրական փոփոխությունների մշակմանը արդյունավետ մասնակցելու և դիտողություններ ու առաջարկություններ ներկայացնելու, ինչպես նաև առաջարկվող նախագծի վերաբերյալ կարծիք ձևավորելու ոչ մի իրական հնարավորություն: Ինչ վերաբերում է սահմանափակ հնարավորությունների պարագայում, այդուհանդերձ, որոշ հասարակական կառույցների և մասնագետների կողմից հնչեցված կարծիքներին և առաջարկություններին, դրանք ամբողջովին անտեսվել են սահմանադրական փոփոխությունների նախագծի հեղինակների՝ սահմանադրական հանձնաժողովի, և, հետագայում, նաև ԱԺ կողմից: Հատուկ հիշատակման է արժանի այն, որ քաղաքացիական հասարակության կողմից հնչեցված մտահոգությունները արհամարհվել են նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից տրամադրված կարծիքներում:

Հանրային մասնակցության կարևորագույն հնարավորություններից մեկը՝ խորհրդարանական լսումները, նույնպես իրականացվեցին խիստ անբարենպաստ

պայմաններում և, փաստորեն, կրեցին ձևական բնույթ: Դրանք կազմակերպվեցին հապճեպ, սեղմ ժամկետներում՝ նախագիծն ԱԺ ուղարկելուց ընդամենը երկու շաբաթ անց: Խորհրդարանական լսումների տևողությունը սահմանվեց ընդամենը մեկ օր, մասնակիցների՝ իրենց կարծիքն արտահայտելու և փոփոխությունների նախագծի հեղինակներին հարցեր ուղղելու մեկական հնարավորությամբ:

Խորհրդարանական ուժերի կողմից նախագիծը քննարկելու հիմնական հնարավորությունը սեպտեմբերի 15-18-ի քառօրյա նիստն էր, սակայն դրա ընթացքում անգամ նախագծի տեքստը շարունակ փոփոխություն էր կրում և, ի վերջո, խորհրդարանի մեծամասնությունը կողմ քվեարկեց նախագծին առանց ունենալու տեքստի վերջնական տարբերակը: Ինչ վերաբերում է հանրությանը, նրան տեքստի վերջնական տարբերակի հրապարակումից հետո միայն, փաստորեն, տրամադրվեց ընդամենը 1.5 ամիս ժամանակ՝ ծանոթանալու հանրաքվեի դրված նախագծին:

Հարկ է նշել, որ ի տարբերություն թե՛ 2003թ. և թե՛ 2005թ. սահմանադրության փոփոխությունների նախագծերի, որոնք նախապես տպագրվել էին տասնյակ և հարյուր հազարավոր օրինակներով և բաժանվել քաղաքացիներին, 2015թ. սահմանադրության փոփոխությունների նախագիծը հասանելի էր դարձվել ՀՀ ԱԺ, արդարադատության նախարարության և ԿԸՀ կայքերում[26], հրապարակվել էր մինչև 3000 տպաքանակ ունեցող «Հայաստանի Հանրապետության» օրաթերթում[27], ինչպես նաև տպագրվել էր ՀԿՀ-ի կողմից 4500 տպաքանակով տեղամասային և ընտրատարածքային հանձնաժողովներում երկուական օրինակով ապահովելու նպատակով (հարկ է հիշել, որ ըստ պաշտոնական տվյալների 06.12.2015թ. հանրաքվեին քվեարկելու իրավունք ունեցողների թիվը կազմում էր 2.547.916 մարդ): ԹԻՀԿ կողմից կազմակերպված մարզային իրազեկման հանդիպումների ընթացքում[28] քաղաքացիները բողոքում էին սահմանադրական փոփոխությունների տեքստին ծանոթանալու հնարավորության բացակայությունից: Փոխարենը վարչական բոլոր մակարդակներում ակտիվորեն տարվել է քաղաքացիների համար անծանոթ նախագծին «այո» քվեարկելու ակտիվ քարոզչություն, իսկ քարոզչական նյութերի մի մասում, ինչպես նաև քարոզչության ընթացքում որոշ «այո» քարոզողների կողմից խեղաթյուրվում էր նախագծի բովանդակությունը[29]:

Հանրային մասնակցության և կարծիքի նկատմամբ հանրային իշխանության կողմից ցուցաբերած քամահրանքը, ՀՀ գործող Սահմանադրությունն ամեն գնով և հապճեպ փոխելու մոլուցքն ամրապնդում էին հանրության լայն շրջանակներում տարածված այն կասկածները, որ սահմանադրական փոփոխությունները նախաձեռնվել են գործող նախագահին երկրորդ ժամկետից հետո էլ իշխանության պահպանման հնարավորություն ստեղծելու, ինչպես նաև ՀՀԿ քաղաքական մենաշնորհն է՛լ ավելի ամրապնդելու համար:

[26] http://www.parliament.am/law_docs5/Sahmanadrutyun_06.12.2015.pdf, http://moj.am/article/1410, http://res.elections.am/images/doc/draft06.12.15.pdf
[27] http://www.mediamax.am/am/news/media/2358
[28] Հանդիպումները կազմակերպվել են 2015թ. նոյեմբեր ամսին Հայաստանի 18 քաղաքներում Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի աջակցությամբ
[29] https://www.youtube.com/watch?v=q8K3UFWpqVE

4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշվեց վերևում, սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի պաշտոնական քարոզարշավը մեկնարկել է 2015 հոկտեմբերի 10-ին և շարունակվել մինչև դեկտեմբերի 4-ը: Սահմանադրական փոփոխությունների կողմնակիցների քարոզարշավը կազմակերպվել և ընթացել է վարչական ռեսուրսի չարաշահման դրսևորումներով, ինչը ակնհայտորեն ստեղծել է անհավասար պայմաններ նախագծի կողմնակիցների և ընդդիմախոսների համար:

Ստորև ամփոփված են հանրաքվեի պաշտոնական քարոզարշավի ընթացքում վարչական ռեսուրսի ակնհայտ կամ հնարավոր օգտագործման վերաբերյալ տեղեկություններ, որոնց աղբյուր են հանդիսացել զանգվածային լրատվամիջոցներում տեղ գտած լուսաբանումները:

4.1 Պաշտոնական դիրքի և ազդեցության օգտագործում

2015թ. հոկտեմբերի 19-ին ՀՀԿ գործադիր մարմնի նիստում ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը նշանակվել է սահմանադրական հանրաքվեի ՀՀԿ նախընտրական շտաբի ղեկավար՝ ստանձնելով հանրաքվեի քարոզչության աշխատանքները կազմակերպելու պատասխանատվությունը: Ըստ ՀՀԿ մամլո խոսնակի հայտարարության՝ վարչապետն արձակուրդ չի մեկնի և կհամատեղի վարչապետի և շտաբի պետի պաշտոնները[30]: «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով առկա չէ վարչական ռեսուրսի օգտագործումն արգելող կամ սահմանափակող որևէ դրույթ, իսկ քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց չի արգելվում քարոզչություն իրականացնելը[31]: Չնայած որ 2015թ. հունիսի 10-ին Էական փոփոխություններ են կատարվել այս օրենքում, սակայն նշված դրույթները մնացել են անփոփոխ, ինչով և իշխանությունները հիմնավորել են վարչապետի կողմից տվյալ պաշտոնի ստանձնման օրինականությունը:

Հոկտեմբերի 24-ին Սահմանադրական հանրաքվեի կենտրոնական շտաբի անդրանիկ նիստում շտաբի պետ Հովիկ Աբրահամյանի տեղակալներ են նշանակվել ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, ՀՀԿ խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանը, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, ՀՀ վերահսկիչ պալատի նախագահի տեղակալ Լևոն Յոլյանը, ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության պետ Հովհաննես Հովսեփյանը, ՀՀԿ պատգամավոր Կարեն Կարապետյանը: Այս անձանց մեծամասնությունն իրենց պաշտոնների բերումով ուղղակի ազդեցություն ունեն Հայաստանի Հանրապետության բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների վրա, և առկա էր մեծ ռիսկ նրանց կողմից պաշտոնական դիրքը իրենց կուսակցական շահը հետապնդելու նպատակով օգտագործելու առումով:

ՁԼՄ հրապարակումների համաձայն՝ մարզպետները, որոնք նշանակվել են մարզերում «այո»-ի շտաբի համակարգողներ, քարոզարշավի սկզբում հանդիպումներ են ունեցել համայնքի ղեկավարների հետ և նրանց վրա դրել պարտավորություն՝ ապահովելու «այո» քվեի որոշակի թիվ[32]: Քանի որ, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների

[30] http://www.azatutyun.am/content/article/27315713.html
[31] «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 5
[32] http://www.chi.am/index.cfm?objectid=7CE13620-72A6-11E5-81980EB7C0D21663

մեծամասնությունը ՀՀԿ-ական է[33] և, արդեն իսկ կուսակցական պատկանելության բերումով, փաստորեն, ստանձնելու էր «այո» քարոզչություն իրականացնողի գործը:

Նոյեմբերի 3-ին Ազգային ժողովում «ՀՀ 2016.թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկմանը մասնակցած Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը լրագրողներին վստահեցրել է, որ դեկտեմբերի 6-ին կայանալիք հանրաքվեում «այո»-ի ամենաբարձր ցուցանիշը հենց իր մարզն է ապահովելու և ինքը կորոշի՝ քանի տոկոս[34]:

Ախուրյանի սոցծառայության աշխատակիցներն, ըստ ԳԱԼԱ-ի, գյուղապետերի, դպրոցների տնօրենների ուղեկցությամբ շրջել են թիվ 35 ընտրատարածքի գյուղերի տներով՝ հիմնականում թակելով նպաստի համակարգից օգտվողների դռները: Նրանք ընտրողներին հանձնարարել են ընտանիքի բոլոր անդամներով քվեարկեն «այո»-ի օգտին՝ դա չանելու դեպքում սպառնալով զրկել նրանց նպաստից օգտվելու հնարավորությունից[35]:

«Ժառանգություն» կուսակցության ներկայացուցչի ահազանգի հիման վրա, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակն (ՀՔԱՎ) ուսումնասիրել է բոլոր հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների կազմը և հայտնաբերել, որ ԸՕ պահանջի խախտմամբ ընդհանուր առմամբ 203 ավագանու անդամ է ներգրավված տեղամասային ընտրական հանձնաժողովներում, որից Արագածոտնում՝ 18, Արարատում՝ 30, Արմավիրում՝ 7, Գեղարքունիքում՝ 32, Լոռիում՝ 22, Կոտայքում՝ 17, Շիրակում՝ 38, Սյունիք՝ 17, Վայոց Ձոր՝ 14, Տավուշ՝ 8: Ընդ որում, նրանցից 83-ը ներկայացված է համապատասխան հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովի կողմից, 50-ը՝ Հայաստանի հանրապետական կուսակցության, 22–ը Հայ հեղափոխական դաշնակցության, 21-ը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, 12-ը «Օրինաց երկիր» կուսակցության, 10-ը Հայ ազգային կոնգրեսի և 5-ը «Ժառանգություն» կուսակցության կողմից[36]:

Ըստ «Ազատություն» ռադիոկայանի նոյեմբերի 6-ի թողարկման, հայտնի է դարձել, որ ՀՀ վարչապետից ու մարզպետներից բացի, «այո»-ի քարոզարշավին մասնակցելու են նաև ՀՀԿ-ական նախարարները. իրենց պնդմամբ՝ բացառապես երեկոյան ժամը 6-ից հետո: Մասնավորապես, ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը նախատեսում էր «այո» քարոզչություն անել «իր տարածքում»՝ Գեղարքունիքի մարզում[37]:

ՀՀ կրթության և գիտության նախարար, «այո»-ի կենտրոնական շտաբի անդամ Արմեն Աշոտյանը 2015թ. նոյեմբերի 6-ից սկսել է վարել հանրային հեռուստաընկերության նոր՝ «Եռանկյունի» քաղաքական բանավեճի հաղորդաշարը, որի առաջին հաղորդումը եղել է սահմանադրական հանրաքվեի քարոզչության թեմայով[38]; Եվրոպայի խորհրդի փորձագետ Լորան Ռույը բացարձակապես անընդունելի է համարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի կողմից հանրաքվեի քարոզարշավի ժամանակահատվածում

[33] http://www.hhk.am/hy/rpa-in-local-self-governance/
[34] http://www.azatutyun.am/content/article/27343063.html
[35] http://galatv.am/hy/news/132382
[36] http://hcav.am/events/04-12-2015-04/
[37] [9]http://www.azatutyun.am/content/article/27349562.html
[38] http://www.azatutyun.am/content/article/27349562.html

քաղաքական հաղորդում վարելու փաստը ընդունված չափանիշների և լավագույն փորձի տեսանկյունից:

Նոյեմբերի 8-ից հրապարակվել է մի տեսահոլովակ, որում ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն անմիջականորեն մասնակցում էր «այո»-ի քարոզչությանը[39]: Չնայած որ դրանով «Հանրաքվեի մասին» օրենքը ֆորմալ առումով չի խախտվել, սակայն ՀՀ պաշտպանության նախարարի խոսքը կարող էր ուղղակիորեն ազդել զինծառայողների կարծիքի ազատ ձևավորման և կամարտահայտման վրա[40]:

Նոյեմբերի 6-ին Մեղրիում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ կողմից կազմակերպվել է սահմանադրական փոփոխություններին նվիրված իրազեկման հանդիպում, որին մասնակցել է նաև Մեղրիի քաղաքապետը և հայտարարել, որ ժողովուրդը իրազեկվելու և որևէ քարոզչություն լսելու կարիք չունի, քանի որ ինքն է ընտրված քաղաքապետը և իր համայնքի բնակիչները կքվեարկեն այնպես, ինչպես ինքը կասի:

4.2 Քարոզչություն կրթական հաստատություններում

2015թ. հոկտեմբերի 22-ին Երևանի պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետում սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ տեղի ունեցած քննարկման ժամանակ փաստացի հանդես են եկել միայն «այո»-ի ջատագովները՝ սահմանադրական փոփոխությունների նախագիծը մշակած սահմանադրական հանձնաժողովի անդամներ Գագիկ Ղազինյանը և Գևորգ Դանիելյանը՝ բուհի ղեկավարությանն ու ընտրյալ ուսանողներին ներկայացնելով իրենց մշակած և սահմանադրական հանրաքվեի դրված փաստաթուղթը[41]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գ. Ղազինյանը ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկանն է, իսկ Գ. Դանիելյանը՝ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչը, ապա նրանց կողմից տարվող քարոզչությունը կարող էր լուրջ ազդեցություն ունենալ ուսանողների կարծիքի ձևավորման վրա:

Ի լրումն վերոնշյալի, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանն այդ քննարկմանը հաջորդած հարցազրույցում հայտարարել է, որ ոչ ոքի թույլ չի տալու դրսից գալ իր բուհ և նախագծի դեմ քարոզ իրականացնել[42]: Այսպիսով, ԵՊՀ-ում սկսվել էր կողմնակալ քարոզարշավ, կանխելով սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ հավասարակշռված տեղեկատվության տրամադրումը և քարոզող կողմերի հավասարությունը:

Նոյեմբեր ամսվա առաջին կեսին «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ կազմակերպությունները, ինչպես նաև լրատվամիջոցները ստացել են բազմաթիվ ահազանգեր, որ հանրապետության տարբեր դպրոցներում և մանկապարտեզներում

[39] https://www.facebook.com/409027245925029/videos/482099295284490/?fref=nf
[40] http://www.azatutyun.am/content/article/27356494.html
[41] https://www.youtube.com/watch?v=cHcNnR7gZ5w, http://www.azatutyun.am/content/article/27321152.html, http://www.azatutyun.am/content/article/27316749.html
[42] http://www.azatutyun.am/content/article/27316749.html

իրականացվում է քարոզչություն և ցուցակագրում են աշխատակիցներին ու նրանց հարազատներին և սաների ծնողներին՝ «այո»-ի ձայներ ապահովելու համար[43]:

Նոյեմբերի 20-ին ՀՀԿ-ական պատգամավոր Տաճատ Վարդապետյանը «Առավոտի»-ի թղթակցի հետ զրույցում խոստովանել է, որ «այո»-ի քարոզչության նպատակով այցելելու է դպրոցներ, մասնավորապես՝ Գառնիի թիվ 2 դպրոց: Մեր թղթակցի հարցին, թե «Այո»-ի շտաբի՞ց են դպրոցների ցուցակն իրեն տվել, Տաճատ Վարդապետյանն ասել է, թե իհարկե որպես ՀՀԿ-ական ինքն իր քայլերը համաձայնեցնում է շտաբի հետ[44]:

Դեկտեմբերի 3-ին լրագրողների հետ հանդիպմանը ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը հերքել է այն տեղեկությունները, թե դպրոցներում «այո»-ի քարոզչություն է իրականացվում և այդ առիթով կերուխում է կազմակերպվում: Նա ասել է, որ ունեն մեկ հաստատված ահազանգ Գառնու ավագ դպրոցի վերաբերյալ, և այդ դպրոցի տնօրենի պաշտոնակատարը խիստ նկատողություն է ստացել[45]:

4.3 Բյուջետային և մասնավոր հիմնարկների աշխատողների նկատմամբ պարտադրանք

Նոյեմբերի 8-ին «Առավոտ» օրաթերթը հաղորդել է, որ ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավոր Սամվել Ալեքսանյանին պատկանող Մալաթիա բժշկական կենտրոնի աշխատակիցները տնօրինության կողմից հանձնարարություն են ստացել տասական ձայն հավաքել դեկտեմբերի 6-ին սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի օգտին: Հանձնարարությունը կատարելու համար աշխատակիցներին հատուկ բլանկներ են բաժանել, պահանջել դրանցում գրառել անուն, ազգանուններ և անձնագրի համար[46]:

Ըստ «Հայկական ժամանակ»-ի նոյեմբերի 19-ի հրապարակման՝ ՀՀ Ազգային ժողովի «Հանրապետական» խմբակցության պատգամավոր, «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի սեփականատեր Արտակ Սարգսյանը ցանցի աշխատակիցների առջև պայման է դրել ութական «այո» ապահովել՝ ներկայացնելով 8 ընտրողի անձնագրի պատճեն: Մարզերում բնակվող աշխատակիցներին ասվել է, որ նրանց կողմից ներկայացվող ընտրողներին ավտոմեքենաներով կտեղափոխեն մայրաքաղաքի տեղամասեր՝ քվեարկության[47]:

Նոյեմբերի 20-ին «Ժառանգություն» կուսակցության վարչության անդամ Սուսաննա Մուրադյանը տեղեկացրել է, որ ստացել է ահազանգներ այն մասին, որ Մարտունու, Գավառի և Արմավիրի դպրոցներում և մանկապարտեզներում ցուցակներ են հավաքել: Քաղաքացիները վախեցել են անուններ նշել, պարզապես մոտեցել և տեղեկացրել են այդ մասին: Իսկ ժողովրդի հետ հանդիպման ընթացքում հարց տվողներին ՀՀԿ-ի մարզային կառույցի ղեկավարը հարցրել է, թե որտեղ են նրանք աշխատում[48]:

Նոյեմբերի 24-ին «Հրապարակ» թերթում հրապարակվել է «Այո»-ի ձեռքը կրակն են ընկել» վերտառությամբ նյութը, ըստ որի Էջմիածնի ոստիկաններն իրենց դժգոհություն են հայտնել,

---

[43] http://armtimes.com/hy/read/73533, http://top-news.am/7/1/news/54824.html, http://top-news.am/7/1/news/54824.html, http://www.aravot.am/2015/11/13/628512/
[44] http://www.1in.am/1774869.html
[45] http://www.aravot.am/2015/12/03/635315/
[46] http://www.aravot.am/2015/11/08/626755/
[47] http://armtimes.com/hy/read/74141
[48] http://www.aravot.am/2015/11/20/631026/

որ իրենց պարտադրվել է բերել ինչպես ընտանիքի անդամների, այնպես էլ հարևան-բարեկամների անձնագրերը՝ նշելով այն տեղամասի հասցեն ու համարը, որտեղ քվեարկելու են նրանք: Ընդ որում, դժգոհող ոստիկաններից մեկը նեղվել էր այն բանից, որ ինքը չի կարող հարևանին համոզել «այո» քվեարկել՝ հիմնավորելով, որ հակառակ դեպքում ինքը կկորցնի իր աշխատանքը[49]:

Դեկտեմբերի 1-ին Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը մարզպետարանում է հավաքել մարզի բոլոր բժիշկներին ու հիվանդանոցների տնօրեններին և խիստ հրահանգել, որ «այո» ասեն սահմանադրական հանրաքվեին: Հակառակ պարագայում մարզպետն սպառնացել է, որ աշխատանքից կհեռացնի անհնազանդներին: Իսկ օրվա երկրորդ կեսին Մասիս քաղաքում նա հավաքել է հարակից բոլոր գյուղերի ղեկավարներին և հրահանգել ակտիվորեն աշխատել «այո»-ի օգտին[50]:

4.4 Ընտրացուցակների հետ կապված խնդիրներ

2015թ. հոկտեմբերի 25-27-ը ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցան քննարկումներ ՀՀ քաղաքացիներին նույնականացման քարտով քվեարկելու հնարավորություն տալու վերաբերյալ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ավելի քան կես միլիոն քաղաքացի ստացել են նույնականացման քարտ, ընդ որում նրանցից ավելի քան 180 000-ն ունեն միայն նույնականացման քարտ, իսկ մնացածը՝ կրում են անձը հաստատող երկու փաստաթուղթ՝ և՛ անձնագիր, և՛ նույնականացման քարտ: Նոյեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովը հաստատեց օրինագիծը, որի արդյունքում փաստացի վերացվեց ընտրական օրենսգրքով սահմանված կրկնաքվեարկության բացառման երաշխիքը՝ անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքումը, քանի որ նույնականացման քարտերը ըստ օրենքի չեն դրոշմակնքվում: Կրկնաքվեարկությունը բացառելու համար վերահսկողության լրացուցիչ մեխանիզմներ ներդնելու ընդդիմության ներկայացրած բազմաթիվ առաջարկներից նախագծի հեղինակները ընդունեցին միայն երկուսը. համաձայնեցին քվեարկության օրը ընտրողների ցուցակի լրացուցիչ նշումների սյունակում նշել, որ քաղաքացին քվեարկել է նույնականացման քարտով, իսկ քվեարկության արդյունքների արձանագրություններում հաշվարկել և նշել նույնականացման քարտով քվեարկողների թիվը: Այդուհանդերձ, քանի դեռ ընտրողների ցուցակները մնում են գաղտնի, այս տվյալները ստուգման և համադրման չեն կարող ենթարկվել և, ըստ էության, այս մեխանիզմները որևէ նշանակություն չեն կարող ունենալ քվեարկության վերահսկողության և արդյունքների արժանահավատության առումով, ուստի դրանք պատրանքային երաշխիքներ են:

Հոկտեմբերի 26-ին ՀՀ ոստիկանության կայքում հրապարակվեցին հանրաքվեին քվեարկելու իրավունք ունեցողների ցուցակները (հետայսու՝ նաև ընտրողների ցուցակներ): Սկսվեցին ստացվել բազմաթիվ ահազանգեր այդ ցուցակներում տեղ գտած խնդիրների վերաբերյալ՝ հերթական անգամ կասկածի տակ դնելով ցուցակների վստահելիությունը և իրական դեմոգրաֆիական տվյալներին համապատասխանությունը: Մասնավորապես, «Հայ ազգային կոնգրես» կուսակցության Գյումրու կառույցից հայտնել են, որ չնայած 2011թ. մարդահամարի տվյալներով Գյումրում եղել է 123 հազար բնակիչ, ընտրացուցակներում

[49] http://www.hraparak.am/?p=94923&l=am/ayo-i+dzerqy+krakn+en+ynkel
[50] http://armtimes.com/hy/read/75085

ներառված անձանց քանակը կազմում է 126 հազար ընտրող[51]: Ըստ ՀՔԱՎ-ի ահազանգի, Լոռու մարզում ընտրողների թիվը կազմում է մշտական բնակչության 102%-ը, իսկ Վանաձորում՝ 113%-ը[52]: Ըստ Իլուր լրատվամիջոցի բացահայտման, հրապարակված ընտրացուցակների համաձայն՝ Աբովյանում և Արտաշատում ողջ բնակչությունը ընտրողներ են, իսկ Ալավերդի քաղաքում ընտրողների թիվը մոտ 3 հազարով ավել է բնակչության պաշտոնական թվից[53]:

Ավելի ուշ ՀՀ ոստիկանությունն Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) և ՀՀ ընտրողների ռեգիստրի տվյալների միջև մոտ 300,000-ի հասնող հակասությունը[54] բացատրել է երկրից մեկ տարուց ավելի բացակայողների տվյալները ԱՎԾ հրապարակումներում չներառելու, այսինքն՝ միայն մշտական բնակչության թվաքանակը ընդգրկելու հանգամանքով: Ընտրողների քանակի աճն՝ ի հակադրություն բնակչության թվի նվազման, իսկ որոշ դեպքերում՝ առաջինի ավելի մեծ լինելը բացատրվել է նրանով, որ ՀՀ ընտրական օրենսգրքի (ԸՕ) համաձայն ընտրացուցակներում պահպանվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող քաղաքացիների անունները, քանի որ ոստիկանությունն իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ օտարերկրյա պետությունում գտնվող և տվյալ համայնքում հաշվառում ունեցող անձին հանելու ընտրողների ցուցակներից[55]:

4.5 Ընտրակաշառքի խոստումներ և փորձեր

ԳԱԼԱ հեռուստաընկերության նոյեմբերի 24-ի թողարկման համաձայն՝ Գյումրու Մուշ թաղամասի, Կոշտոյան, Մանուշյան, Վազգեն Սարգսյան և մի շարք այլ փողոցներում այդ տարածքների նախակրթարանների ու համատիրությունների աշխատակիցներն ակտիվ ցուցակագրել են քաղաքացիներին՝ ընտրակաշառք բաժանելու նպատակով: Նրանք հավաքել են անձնագրային տվյալներ՝ նշելով, որ առաջիկա հանրաքվեին «այո» քվեարկելու դիմաց տրամադրվող ընտրակաշառքի չափը կկազմի 10 հազար դրամ[56]:

Նոյեմբերի 23-ին «Հայկական ժամանակ» թերթի խմբագրությունը ստացել է ահազանգ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բնակիչներից այն մասին, որ վերջին մեկ շաբաթվա մեջ արդեն երկրորդ անգամ նույն անծանոթ մարդը՝ ընտրողների ցուցակներով այցելել է իրենց բնակարան և փորձել պարզել տվյալ հասցեում գրանցված ընտրողների դիրքորոշումը՝ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի վերաբերյալ: Այցելուն հանդես է եկել «Այո»-ի շտաբի անունից և խնդրել է իրեն հստակ պատասխան տալ՝ «այո» են ասելու, թե «ոչ»: Երբ բնակիչը հետաքրքրվել է ընտրակաշառքի մասին, անծանոթ այցելուն պատասխանել է, որ դեռ չի կարող ոչինչ ասել, բայց չի բացառվում, որ յուրաքանչյուր «այո»-ի համար շտաբը գումար կվճարի[57]:

[51] http://www.aravot.am/2015/10/28/623247/
[52] http://www.ilur.am/news/view/50014.html
[53] http://www.ilur.am/news/view/45738.html#sthash.CEKelyQP.dpuf
[54] http://galatv.am/hy/anatylitcs/3-302-424/, http://www.ilur.am/news/view/50365.html
[55] http://www.police.am/news/view/p71115.html
[56] http://galatv.am/hy/news/10-22
[57] http://armtimes.com/hy/read/74472

«Չորրորդ իշխանություն» թերթը գրել է, որ նոյեմբերի 24-ին «Երևանի տարբեր համայնքներում սկսել է ընտրակաշառքի բաժանման գործընթացը: Նոր Նորքի 8-րդ և 9-րդ զանգվածներում ընտրակաշառք բաժանողների մի քանի թիմ է միաժամանակ աշխատել: Շենգավիթ համայնքում մարդկանց տներ են այցելել նախորդ ընտրություններում ՀՀԿ-ի օգտին աշխատող թաղային հեղինակությունների «ներկայացուցիչները», որոնք ցուցակագրել են մարդկանց՝ որպես «այո»-ի կողմնակիցներ: Մալաթիա-Սեբաստիա համայնքում խոստացվել են հեռախոսներ և ամանորյա սննդային տոպրակներ՝ «այո»-ի դիմաց[58]:

Նոյեմբերի 13-ից «Արմնյուզ» հեռուստաընկերությունով և «Ա1+» ինտերնետային կայքով հեռարձակվող «Այո & Ոչ» հաղորդման ընթացքում «այո»-ի կողմնակիցները տվել են խնդիրները լուծելու խոստումներ: Մասնավորապես, Մեղրի քաղաքում ԱԺ ՀՀԿ-ական պատգամավոր Կարինե Աճեմյանը խոստացել է բարձրաձայնել բնակիչների գազի խնդիրը, իսկ նույն խմբակցության պատգամավոր Վարդան Այվազյանը առաջարկել է կազմակերպել արտադրություն[59]: Հարկ է նշել, որ քարոզչության ժամանակ խոստումներ տալն արգելված է «Հանրաքվեի մասին» օրենքի 20-րդ 11-րդ մասի «բ» կետի և ՀՀ ԸՕ 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն և առաջացնում է վարչական պատասխանատվություն:

Նոյեմբերի 24-ին «Ազատություն» ռադիոկայանով «Ոչ»-ի շտաբի և Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ) խմբակցության ղեկավար Լևոն Զուրաբյանը բարձրաձայնել է իրենց ներկայացուցիչների վրա ճնշումների և կաշառքի փորձերի մասին[60]: Նա ՀՀ գլխավոր դատախազությանն է փոխանցել տեսագրություն, որում երևում է, թե ինչպես են կաշառում հանրաքվեի Երևանի ընտրատարածքային հանձնաժողովներից մեկի իրենց ներկայացուցչին՝ առաջարկելով 100 հազար դրամ: Մեկ այլ տեղամասային հանձնաժողովի ՀԱԿ-ի ներկայացուցչի կոնկրետ կաշառք են տվել, որպեսզի նա աչք փակի օրինախախտումների վրա[61]: ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի պնդմամբ՝ հանձնաժողովի «Ժառանգության» անդամներին առաջարկել են հանրաքվեի օրը չգնալ տեղամասեր՝ դրա դիմաց ստանալով պետության կողմից իրենց հասանելիք գումարի կրկնապատիկը[62]:

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում Լ. Զուրաբյանի հաղորդման՝ Հանրաքվեի հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը նյութապես շահագրգռելով առերևույթ խոչընդոտելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և այն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ նախաքննություն կատարելու համար[63]:

---

[58] http://armtimes.com/hy/read/74566
[59] http://hraparak.am/?p=94032&l=am%2F
[60] http://www.azatutyun.am/media/video/27384661.html
[61] http://www.azatutyun.am/content/article/27390006.html
[62] http://www.azatutyun.am/media/video/27384661.html
[63] http://prosecutor.am/am/news/6388/

4.6 Նախագծի ընդդիմախոսների նկատմամբ ճնշումներ և քարոզչության խոչընդոտներ

Նոյեմբերի 26-ի ԳԱԼԱ հեռուստաընկերության հրապարակման համաձայն, վերջին շրջանում պետական մարմինները պարբերական հարձակման թիրախ են դարձրել ընդդիմադիր գործիչ, «Հիմնադիր խորհրդարանի» ղեկավար և Նոր Հայաստան հանրային փրկության ճակատի խորհրդի անդամ Ժիրայր Սէֆիլյանի կնոջը՝ Նանոր Բարսեղյան-Սէֆիլյանին: Նոյեմբերի 25-ի երեկոյան իր ավտոմեքենայով տուն գնացող Ն. Բարսեղյանին հետապնդել է ՎԱԶ 2121 (Նիվա) մակնիշի 20 օս 700 պետհամարանիշի մուգ ապակիներով ավտոմեքենան, ընդ որում՝ ոչ միայն բացահայտ, այլև ցուցադրական և ահաբեկող, քանի որ մի քանի անգամ փակել է Սէֆիլյանի ճանապարհը՝ փորձելով ստեղծել ավտոմեքենաների բախման և ֆիզիկական բռնության հավանականության տպավորություն: 2015թ. նոյեմբերի 26-ին, ժամը 16:30-ի սահմաններում, երբ Նանոր Բարսեղյանը դուրս է եկել Ամիրյան փողոցի վրա գտնվող «Բիբլոս» բանկի մասնաճյուղի շենքից, հարձակվել են նրա վրա, քաշքշել և, հափշտակելով նրա պայուսակը, որտեղ եղել են գումար, փաստաթղթեր և անձնական իրեր, փախուստի են դիմել: Չնայած որ Ժ. Սէֆիլյանի և նրա թիմակիցների նկատմամբ իշխանությունների կողմից հաճախ են կիրառվել տարբեր հետապնդումներ, վերջին ժամանակահատվածում դրանք դարձել են ավելի ինտենսիվ՝ ամենայն հավանականությամբ կապված «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի՝ սահմանադրական փոփոխությունների դեմ ծավալած գործունեության հետ[64]:

Դեկտեմբերի 1-ին Երևանի Ազատության հրապարակում կայանալիք հանրահավաքից առաջ փակվել են որոշ երթուղիներ: «Հրապարակի» խմբագրությունը ահազանգեր է ստացել, որ մի շարք մարզային երթուղիներ՝ մասնավորապես Կոտայքի մարզի Չարենցավանից, Աբովյանից, Եղվարդից և Հրազդանից, չեն աշխատել, և մարդիկ չեն կարողացել հասնել Երևան: Իսկ որևէ պատճառաբանություն, թե ինչու չեն աշխատում երթուղայինները, այդպես էլ չի տրվել[65]՝ բացառությամբ Աբովյան-Երևան երթուղայինը սպասարկող կազմակերպությունից, որը երևույթը փորձել է բացատրել մեքենաների անսարքությամբ[66]: «Հետք» կայքէջը արձանագրել է նաև Բյուրեղավան, Գառնի, Նոր Հաճն և Բուժական քաղաքներից Երևան հասնող տրանսպորտի բացակայությունը[67]. տվյալ դեպքում որպես պատճառ նշվել է հանրահավաքի անցկացումը:

«Ընդդիմության միասնական շտաբ»-ը տեղեկացրել է, որ նորանոր ահազանգեր է ստանում դեպի Երևան մարզերի քաղաքացիների տեղաշարժը ոստիկանության կողմից խոչընդոտելու մասին: Եղեգնաձորում ոստիկանությունը կանգնեցրել է դեպի Երևան ուղևորվող ավտոմեքենաները, վերցրել է վարորդների փաստաթղթերը, ինչի պատճառով բազմաթիվ ուղևորներ ցուրտ եղանակին մնացել են ճանապարհին: Արմավիրի մարզում նույնպես երթուղիներից հանել են ավտոբուսները: Վանաձորից «Ժառանգություն» կուսակցության անդամներն ու աջակիցները երկու ավտոբուս են վարձել Երևան գալու համար, սակայն ոստիկանության և տրանսպորտի ու կապի նախարարության միջամտությամբ դրանք հանվել են երթուղուց[68]:

---

[64] http://galatv.am/hy/news/131489/
[65] http://www.hraparak.am/?p=95701&l=am/hanrahavaqin+yndaraj+marzayin+ertuxinerin+tuyl+chen+talis+hasnel+erevan
[66] http://www.a1plus.am/1421244.html
[67] http://hetq.am/arm/news/64026/kotayqi-marzi-bnakichnern-asum-en-ayo-khapanvats-ertevekutyany.html
[68] http://www.a1plus.am/1421251.html

Հիմնադիր խորհրդարանի Գյումրու կառույցի ղեկավար Արամ Հակոբյանը ահազանգել է՝ վարորդներին տեռորի են ենթարկում: Նախնական պայմանավորվածության համաձայն՝ դեկտեմբերի 1-ին միկրոավտոբուսներից մեկի վարորդը պետք է Երևան տեղափոխեր 25 հոգու: Պայմանավորված ժամին վարորդը եկել է, սակայն հրաժարվել է Երևան գալ: «Ասեց կներեք, չնեղանաք, ուզում եք քշեմ մինչև Մոսկվա, բայց Երևան չեմ քշելու, ես վախենում եմ»,- «Ա1+»-ին է փոխանցել Հակոբյանը: Նրա խոսքերով՝ մինչ այդ վարորդին են մոտեցել մի խումբ երիտասարդներ և ահաբեկել: «Վախեցած են բոլորը, այսպիսի համակարգ է ստեղծված երկրում: Սարսափելի է այս ամենը քարոզարշավի ժամանակ, բոլորի աչքի առաջ»,- ասել է Գյումրու կառույցի ղեկավարը[69]:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ահազանգել է, որ դեկտեմբերի 1-ին Երևանի Ազատության հրապարակում կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակով Վանաձորից Երևան մեկնող քաղաքացիները մնացել են կեսճանապարհին, քանի որ քաղաքացիների պնդմամբ, նրանց տեղափոխող 3 մեքենաներից երկուսի վարորդներին արգելել են շարժվել դեպի Երևան, թույլ չտալով դուրս գալ Վանաձորից և սպառնացել են զրկել վարորդական լիցենզիաներից: Հավելենք, որ երեք մեքենաներից մեկը ընդհանրապես հրաժարվել է տեղափոխել քաղաքացիներին՝ տեսնելով ստեղծված իրավիճակը[70]:

Երևանի «Double Tree by Hilton» հյուրանոցը կրկին խախտել է «Չեք անցկացնի» քաղաքացիական նախաձեռնության հետ ունեցած պայմանավորվածությունը՝ նոյեմբերի 30-ի Ոչ-ի Երիտասարդական ֆորումի համար վճարովի հիմունքներով դահլիճ տրամադրելու վերաբերյալ: «Սա առաջին դեպքը չէ, երբ հյուրանոցները նախ հաստատում են, իսկ հետո, իշխանությունների հրահանգով, խախտում մեզ հետ ունեցած պայմանավորվածությունները՝ հարուցելով խնդիրներ Ոչ-ի քարոզչության համար»,- ասված է եղել քաղաքացիական նախաձեռնության հայտարարությունում[71]:

«ՉԻ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ մարզպետներից շատերը, ովքեր նաև ղեկավարել են «այո»–ի մարզային շտաբները, փորձել են տարբեր ճնշումներ գործադրել «ոչ»–ի ճակատի ընդդիմադիր ակտիվիստների նկատմամբ: Այդ հարցում ամենաակտիվը, ըստ օրաթերթի, Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանն է եղել: «Նա անձամբ զանգահարում, իր մոտ է հրավիրում ընդդիմադիրներին և փորձում բացատրական աշխատանքներ տանել՝ հորդորելով չխանգարել իրենց, նաև՝ հանրաքվեի օրը տեղամասերում իրենց համար խոչընդոտներ չստեղծել»,–գրում է թերթը[72]:

Դեկտեմբերի 1-ին ժամը 18-ի սահմաններում Երևանի Ազատության հրապարակից ոստիկանները բերման են ենթարկել «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Գևորգ Սաֆարյանին: Մինչ այդ ոստիկանները Ազատության հրապարակում խուզարկել են քաղաքացիներին[73]: Դրանից քիչ առաջ Ազատության հրապարակից ոստիկանները բերման են ենթարկել քաղաքացիական ակտիվիստ Միքայել Նահապետյանին՝ պայուսակում շինարարական սաղավարտ ունենալու համար, ասելով, որ պետք է բերման ենթարկեն՝

[69] http://www.a1plus.am/1421248.html
[70] http://www.a1plus.am/1421261.html
[71] http://www.aravot.am/2015/11/27/633441/
[72] http://armtimes.com/hy/read/74837
[73] http://168.am/2015/12/01/569059.html

ճշտումներ անելու համար[74]: Ոստիկանությունից տեղեկացրել են, որ «Հիմնադիր խորհրդարանի» անդամներ Գևորգ Սաֆարյանը և Սմբատ Բարսեղյանը բաժին են տարվել՝ «Հավաքների ազատության» մասին օրենքով նախատեսված հավաքի մասնակցի պարտականությունները խախտելու կասկածանքով»[75]: Մեկ ու կես ժամ անց բերման ենթարկվածներն ազատ են արձակվել[76]: Որպես խոչընդոտման դրսևորման օրինակ դիտարկվել է նաև Երևանի քաղաքապետարանի կողմից «Նոր Հայաստան» քաղաքական միավորմանը Ազատության հրապարակում վրաններ տեղադրել արգելելը՝ պատճառաբանությամբ, որ այն մշակութային հուշարձան է և այնտեղ վրաններ, ինչպես նաև շարժական զուգարաններ տեղադրելը կարող է վնասել հուշարձանին[77]:

Նոյեմբերի 19-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի կողմից հայտարարություն է տարածվել, ըստ որի ճնշումներ են իրականացվել Վարդենիսի գրասենյակի պատասխանատու Մարտիրոս Հակոբյանի նկատմամբ: Մասնավորապես, մտերիմներին աշխատանքից ազատելու սպառնալիքով ստիպել են, որ նա հեռանա իր վարձակալած բնակարանից և ազատի գրասենյակի համար վերցրած տարածքը, ինչպես նաև նրա կողմից ԱՊՊԱ պայմանագիր չքնելու նոր «հայտաբերված» փաստով նրա նկատմամբ տուգանք է նշանակվել և մշտապես հսկվել է տեղաշարժը[78]: Մարտիրոս Հակոբյանը «Ա1+»-ին հայտնել է, որ այդ ամենը ղեկավարում է Գավառի ոստիկանության վարչության պետի տեղակալը, որն էլ հրահանգավորում է ԱԱԾ-ից[79]:

4.7 Այլ խախտումներ

Ըստ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի օգտատեր Արթուր Վահանյանի՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը թիվ 25 ընտրատարածքում, որը ներառում է Հրազդան, Ծաղկաձոր քաղաքները և հարակից 11 գյուղեր, իր հանձնաժողովի բոլոր տեղերը տվել է Հայաստանի Հանրապետական կուսակցությանը:[80]

Ըստ Գյումրիում շրջանառվող լուրերի՝ «հատուկ» մարդիկ բանակցություններ են տարել թաղամասերի էլեկտրաէներգիայի հսկիչ-տեսուչների հետ, պարտադրել կամ համոզել են ընտրության օրը անջատել թաղամասի լույսերը: «Հրապարակ»-ի զրուցակիցը, ով չի ցանկացել, որ նշվի իր անունը, պատմել է, որ քաղաքապետարանից նման հանձնարարական է ստացել իրեն շատ մոտ մարդկանցից մեկը. «Ասել են, մի բան պիտի անեք, լույսերն անջատեք, արդեն լցոնած արկղեր կան, որոնք պիտի տեղավորենք»: Թերթի թղթակցի տեղեկություններով էլ, «հատուկ» մարդիկ փորձել են համաձայնության գալ նաև ՀԼՄ ներկայացուցիչների հետ, որպեսզի վերջիններս նույնպես աչք փակեն: Մարզպետի, քաղաքապետի կամ համայնքապետերի հեռախոսահամարներն կամ անհասանելի են եղել, կամ նրանք չեն պատասխանել զանգերին, ուստի հարցին որևէ պարզաբանում չի տրվել[81]:

---

[74] http://168.am/2015/12/01/569067.html
[75] http://www.azatutyun.am/archive/news/20151201/2031/2031.html?id=27400653
[76] http://galatv.am/hy/news/132007/
[77] http://galatv.am/hy/news/131983/
[78] http://www.aravot.am/2015/11/19/630728/
[79] http://www.a1plus.am/1420518.html
[80] http://blognews.am/arm/news/322691/isk-vahan-babayany-karox-e-meknabanel-ays-khaytarakutyuny.html
[81] http://www.hraparak.am/?p=95874&l=am/mi+ban+piti+aneq+luysern+anjateq+shiraki+marzayin+ishxanutyunery+ahabekvac+en

5. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

5.1 Մեթոդաբանություն

2015թ. դեկտեմբերի 6-ին սահմանադրական հանրաքվեի վերահսկողության գործընթացում ԹԻՀԿ, ԻԵՄ, ՀՔԱՎ և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) ՀԿ կողմից 2013թ. հիմնադրված «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությանը միացան ևս 14 կազմակերպություն՝ «Ընդդեմ իրավական կամայականությունների» ՀԿ (ԸԻԿ), «Լոգոս» ՀԿ[82], «Տարածաշրջանային զարգացման և հետազոտությունների կենտրոն» (ՏԶՀԿ) ՀԿ, «Համայնքների համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ, «Լոռեցիների միավորում» ՀԿ, «Սոսե» ՀԿ, «Մարտունու կանանց խորհուրդ» ՀԿ, «Ժողովրդավար Արարատ» ՀԿ, Իջևանի ինֆոտուն, Կանանց ռեսուրս կենտրոն ՀԿ, «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ, «Սոցիոսկոպ» ՀԿ, ինչպես նաև ԺԱԱ կողմից մարզկենտրոններում բացված Քաղաքացիական երիտասարդական կենտրոնները: Դիտորդական առաքելության ներկայացուցիչները հանդես են եկել որպես ԹԻՀԿ, ԻԵՄ, ՀՔԱՎ, ԸԻԿ, ՏԶՀԿ և «Ժողովրդավարական Արարատ»-ը ներկայացնող՝ ՀԿՀ կողմից հավատարմագրված դիտորդներ կամ «Ասպարեզ» օրաթերթի կամ Asparez.am կայքի ներկայացուցիչներ:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կազմում 5.2 բաժնում ներկայացված խնդիրների պատճառով ներգրավվել են նաև արտասահմանյան գործընկեր «Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմ» (ԺԸԵՊ) և Կատալոնիայի «Դիպլոկատ» ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք հանդես են եկել Asparez.am կայքի և ռուսաստանյան «Գոլոս» ՁԼՄ ներկայացուցիչների կարգավիճակով:

Վերոնշյալ կազմակերպությունները մեկտեղել են իրենց ջանքերը՝ կարճաժամկետ դիտորդական առաքելություն իրականացնելով ընդհանուր առմամբ 1000-ից ավելի դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների միջոցով՝ ապահովելով ներկայություն հանրաքվեի մոտ 520 տեղամասերում: Դիտարկման համար ընտրվել են առավել մեծ թվով ընտրողներ ունեցող համայնքները, ինչպես նաև իրավախախտումների տեսանկյունից առավել խոցելի տեղամասերը՝ հաշվի առնելով նախորդ համապետական ընտրությունների գործընթացը և քվեարկության արդյունքները:

Կարևորելով դիտորդների պատշաճ գիտելիքների մակարդակը, «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում մշակվել են մի շարք տեղեկատվական և աջակցող բնույթի ուղեցույցեր և իրականացվել է վերապատրաստում՝ ի լրումն Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի (ՀԿՀ) կողմից հավատարմագրման նպատակով գիտելիքների ստուգման գործընթացի: Դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների կողմից արդյունավետ վերահսկողություն ապահովելու նպատակով մշակվել են իրավունքների և

[82] «Լոգոս» ՀԿ-ն հանդես է եկել որպես «Ժողովրդավարական սահմանադրական հանրաքվե» նախաձեռնող խումբ:

պարտականությունների մասին ուղեցույց, վարքագծի կանոններ, վերահսկողության ձևաթղթեր և իրավախախտումների մասին ահազանգման մեխանիզմներ[83]:

Դիտորդական խմբերն աշխատել են զույգերով՝ հնարավորինս արդյունավետ վերահսկողություն, ինչպես նաև դիտորդների անվտանգությունն ապահովելու նպատակով: Հաշվի առնելով ընտրախախտումների և կեղծիքների վերաբերյալ՝ տեղամասի գրանցամատյաններում ՏՀ-ների կողմից գրառում կատարելու օրենսդրական պարտադիր պահանջի բացակայությունը և վերջիններիս հայեցողությունն այդ հարցում՝ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդները և ՁԼՄ ներկայացուցիչները հնարավորինս օգտագործել են տեսա և լուսանկարահանման միջոցներ՝ վեր հանված խնդիրների ապացուցողական հիմքն ապահովելու համար:

Քվեարկության օրը դիտորդական առաքելությունը համակարգելու նպատակով ստեղծվել է միասնական համակարգման կենտրոն՝ դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչներին իրավունքի և/կամ քվեարկության գործընթացում ընթացակարգային խախտումների վերաբերյալ ահազանգերն ընդունելու և համապատասխան իրավաբանական աջակցություն տրամադրելու նպատակով: Խախտումների վերաբերյալ ահազանգերը ստացվել են տեսակավորված SMS հաղորդագրությունների միջոցով, որոնք անմիջապես հրապարակվել են առցանց քարտեզագրման եղանակով[84]: Հարկ է նշել, որ կենտրոնը ստացել է նաև ահազանգեր բազմաթիվ քաղաքացիներից և վստահված անձանցից, այդ թվում այլ՝ չվերահսկվող, տեղամասերում տեղի ունեցող խախտումների վերաբերյալ:

Ահազանգերի հիման վրա ՀՀ օրենսդրությանը համապատասխան ընթացակարգերով դիմումներ և/կամ բողոքներ են կազմվել՝ ներկայացնելով ՀՀ պետական լիազոր մարմիններին՝ հանրաքվեի կենտրոնական և տարածքային հանձնաժողովներ, ինչպես նաև վարչական և սահմանադրական դատարաններ:

5.2 Հավատարմագրման հետ կապված խոչընդոտներ

Դիտորդական առաքելության կազմակերպման գործընթացում ծագեցին հետևյալ խնդիրները.

- Համաձայն օրենսդրության՝ դիտորդի դերում հանդես գալ ցանկացող ՀԿ-ն պետք է հավատարմագրված լինի քվեարկությունից առնվազն 10 օր առաջ, սակայն նախապես ՀԿ-ի ներկայացուցիչները պետք է հաջողությամբ հանձնած լինի ՀԿՀ կողմից անցկացվող ստուգարքը, ինչը հիմք է հանդիսանում վկայագիր ստանալու համար[85]: Ընդ որում, ստուգարքները կարող են կազմակերպվել ոչ պակաս քան 20 հոգու համար[86]: Առաջին անգամ հանդես գալով մեծամասշտաբ նախաձեռնությամբ՝ «Քաղաքացի դիտորդն» արձանագրեց օրենսդրության իրավակարգավորումների խնդիրներ, որոնք խոչընդոտներ են հարուցում դիտորդական առաքելության մտադրություն ունեցող ՀԿ-ների համար: Ստուգարքների իրականացմանը և դրանց

[83] Հարկ է նշել, որ սույն ձևաթղթերը տեղամասերում դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների ձեռքից հաճախ խլվում և ոչնչացվում էին:
[84] http://transparency.am/elections/2015-12-06/map/
[85] ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 31
[86] ԿԸՀ 29.07.2011թ. N 36-Ն որոշում, կետ 24

մասնակիցների քանակին վերաբերող պահանջները էապես ավելացրել են ՀԿ-ների վարչարարական, կազմակերպչական և ֆինանսական բեռը, քանի որ հարկ էր լինում տարբեր մարզերում վարձակալել դահլիճներ և մի վայրից մյուսը տեղափոխել ստուգարք հանձնող անձանց: Իսկ սեղմ ժամկետները խնդիր էին ստեղծել հենց ՀԿՀ համար, որը չէր հասցնում պատշաճ կարգով կազմակերպել ստուգարքները և ժամանակին տրամադրել դիտորդական վկայականներ: Թեև ակնհայտ էին ՀԿՀ ջանքերը՝ հնարավորինս սահուն կերպով կազմակերպելու հավատարմագրման գործընթացը՝ հանրաքվեի գործընթացը ցույց տվեց, որ ստուգարքի անցկացման և հավատարմագրման առկա կարգավորումները կարիք ունեն վերանայման:

- Ըստ օրենսդրության՝ ցանկացած ընտրող իր հաշվառման վայրից դուրս գտնվելու դեպքում կարող է իր անունը հիմնական ցուցակից ժամանակավորապես հանել և գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակում ներառելու միջոցով մասնակցել քվեարկությանը հանրապետության ցանկացած տեղամասում[87]: Հաշվի առնելով, որ շատ դիտորդներ իրենց առաքելությունն իրականացնելու էին ոչ այն համայնքում, որտեղ հաշվառված են, փորձեցին օգտվել այս հնարավորությունից, սակայն հանդիպեցին խոչընդոտների: Ոստիկանության անձնագրային բաժինների մի շարք աշխատակիցներ տեղյակ չէին համապատասխան ընթացակարգին և սխալ ցուցումներ էին տալիս դիմումատուներին, մասնավորապես՝ դիմել քվեարկության օրը գտնվելու վայրի անձնագրային բաժին կամ դիմումում նշել կոնկրետ գտնվելու վայրի բնակարանի հասցեն, կամ առաջարկել են հաշվառումից դուրս գալ: Նշված խոչընդոտները հաղթահարվեցին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Մնացական Բիչախչյանի անմիջական միջամտությամբ, ակնհայտ էր անձնագրային բաժինների աշխատակիցների մասնագիտական անպատրաստությունը և նրանց՝ իրենց գործառույթների իմացության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը:
- ՀՀ օրենսդրության համաձայն, ընտրությունների և հանրաքվեի ընթացքը կարող են վերահսկել նաև միջազգային դիտորդներ, որոնց շարքին են դասվում նաև արտասահմանյան հասարակական կազմակերպությունները[88]: Վերջիններիս դիտորդական առաքելություն իրականացնելու համար հրավերք ուղարկելու իրավունք ունեն բացառապես չորս պետական մարմին՝ ՀՀ նախագահը, ԱԺ նախագահը, վարչապետը և ԿԸՀ-ն[89]: ԺԸԵՊ կազմակերպությունը, որը Գերմանիայում տեղակայված 13 հասարակական կազմակերպությունների կոալիցիա է և նպատակ ունի աջակցել Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանում ընտրությունների հանրային վերահսկությանը և Եվրոպայում ժողովրդավարական ընտրական գործընթացների կայացմանը, բազմիցս կապի մեջ մտնելով ՀՀ արտաքին գործերի նախարարության (մեկ անգամ նաև՝ ՀԿՀ-ի) հետ, փորձել է ստանալ դիտորդական առաքելություն իրականացնելու համար հրավեր, սակայն նրան պարբերաբար խորհուրդ են տվել դիմել մեկ այլ գրասենյակ կամ պաշտոնյայի՝ մինչև լրացել է հավատարմագրման վերջնաժամկետը: Արդյունքում, կազմակերպությունը փաստացիորեն զրկվել է Հայաստանում միջազգային դիտորդի կարգավիճակով հանդես գալու հնարավորությունից: Տվյալ խնդիրը հնարավոր չի եղել լուծել, ուստի ԺԸԵՊ և Դիպլոկատ կազմակերպությունների դիտորդներն, ի

[87] ՀՀ ԸՕ, հոդված 8 մաս 3
[88] ՀՀ ԸՕ հոդված 29, մաս 1
[89] ՀՀ ԸՕ, հոդված 29, մաս 2

վերջո, ներգրավվել են «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կազմում՝ որպես ՁԼՄ ներկայացուցիչներ:

5.3 Նորարարական գործիքների կիրառում

Բացի դիտորդական առաքելության իրականացման ավանդական եղանակներից ու գործիքներից, «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում կիրառվել են նաև մի շարք նորարարական մոտեցումներ:

- Ընտրողների ցուցակներում առկա խնդիրները վեր հանելու մեկ այլ մոտեցում է պաշտոնական ցուցակների էլեկտրոնային մոնիտորինգը, որն իրականացվել է ԹԻՀԿ կողմից՝ նախնական և վերջնական ցուցակների համադրման և դրանց բովանդակության վերլուծության միջոցով[90]: Մասնավորապես, դիտարկվել են քվեարկության իրավունք ունեցող անձանց քանակը և վերլուծվել ընտրողների տվյալներն ըստ հասցեների և ծննդյան ամսաթվի: Կատարվել է նաև քվեարկության ընթացքում ընտրողների մասնակցության վերլուծություն:
- Հաշվի առնելով ընտրողների ուռճացված ցուցակների հնարավոր չարաշահման հետ կապված ռիսկերը և քվեարկության մասնակիցների ստորագրված ցուցակները գաղտնազերծելու միջոցով այդ մտահոգությունները փարատելու քաղաքական կամքի բացակայությունը, մշակվել է բացակաների քվեարկության նկատմամբ վերահսկողության նոր գործիք: Մի կողմից, «Վերահսկի՛ր հանրաքվեն» ինտերնետային կայքի[91] միջոցով ընտրողները տեղեկացրել են, Հայաստանի Հանրապետությունից բացակայելու, հանրաքվեին այլ պատճառով չմասնակցելու և/կամ ցուցակներում ընդգրկված մահացած անձանց մասին, մյուս կողմից, նախատեսվել է դիտորդների աշխատանքի շնորհիվ արձանագրել մասնակցող ընտրողների հերթական համարները՝ կայքի տվյալների հետ համադրելու և բացակա ընտրողների անունից հնարավոր ընտրությունը բացահայտելու համար:
- Հաջորդ գործիքը եղել է պաշտոնական տվյալների վիճակագրական վերլուծությունը, որն իրականացվել է ԺԸԵՊ փորձագետների կողմից՝ վերջին տասնամյակում արագ զարգացում ապրող «ընտրական խախտումների փորձաքննության» (electoral forensics) գիտական մեթոդների օգնությամբ:
- Չորրորդը՝ միջազգային դիտորդական առաքելությունների վերլուծությունն է, որն իրականացվել է վերջերս ԺԸԵՊ կողմից մշակված մեթոդաբանության համաձայն:

6. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դիտորդական առաքելության արդյունքները ներառում են քվեարկության օրվա տարբեր ժամանակահատվածներում՝ նախքան տեղամասերի բացումը, քվեարկության ընթացքում և արդյունքների ամփոփման ժամանակ բացահայտված առավել կոպիտ ընթացակարգային խախտումներն ու կեղծիքները՝ խմբավորված ըստ տեսակների[92], ինչպես նաև դիտորդների

[90] Մոնիտորինգն իրականացվել է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի աջակցությամբ
[91] Մանրամասների համար տե՛ս http://hanraqve.com
[92] Խախտումների և կեղծիքների վերաբերյալ ահազանգերի նկարագրությունները, ինչպես նաև համապատասխան տեսանյութերի ցանկը հասանելի է համացանցում http://transparency.am/elections/2015-12-06/map/ հասցեով:

և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների խախտումները: Առաքելությունը նաև ամփոփել է տեղամասերի քվեարկության արդյունքերի արձանագրությունների քաղվածքների ուսումնասիրության բացահայտումները, վերահաշվարկի և բողոքարկման գործընթացների ելքերը, ինչպես նաև՝ նորարարական մեթոդներով իրականացված վերահսկողության արդյունքները:

6.1 Տեղամասերի նախապատրաստում

6.1.1 Քարոզչական նյութերի առկայություն տեղամասում և տեղամասի սխալ կահավորում

3/30 տեղամասում քվեախցերը դրված էին վարագույրների մոտ: Դիտորդի կողմից հանձնաժողովի անդամներին սխալ կահավորման մասին զգուշացնելուց հետո տեղափոխվել են դեպի պատ:

8/15 տեղամասում քվեատուփը կնքված չի եղել: Դիտորդի ներկայանալուց հետո միայն քվեատուփը կնքվել է:

8/25 տեղամասում ժամը 07:04 սահմաններում դիտորդը արձանագրել է ընտրատեղամասի սխալ կահավորում: Նույն դպրոցում 2 տեղամաս էր, որոնք բաժանված են եղել կապույտ պոլիէթիլենային վարագույրով: Քվեախցերը տեղադրված էին այնպես /3 հատ/, որ մեկ տեղամասի ընտրողը տեսանելի էր մյուս տեղամասի քվեախցի ընտրողին: Քվեախցերից մեկի հետնամասում առկա էր դուռ, որով ելումուտ էին անում հանձնաժողովի անդամները և վստահված անձինք՝ խախտելով քվեարկության գաղտնիությունը:

8/27 տեղամասում կահավորումը չի համապատասխանել օրենքով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ քվեախցերի հետևում եղել են դռներ, որտեղից եղել է ելումուտ: Նույն տեղամասում ժամը 18:19 սահմաններում դիտորդն արձանագրել է լուսավորության խնդիր, որը ստիպել է ընտրողին դուրս գալ քվեախցից, ինչը խախտել է ընտրողի քվեարկության գաղտնիությունը: Այս փաստերը հանձնաժողովի կողմից չեն արձանագրվել գրանցամատյանում:

10/29 տեղամասում քվեատուփի վերևում կախված է ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի նկարը: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է այն հանել:

29/8 տեղամասում առկա են քարոզչական նյութեր. ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի լուսանկարը փակցված է եղել քվեարկության սենյակում:

33/77 տեղամասում քվեախցերը տեղադրված են այնպես, որ դրանց հետևում ազատ տեղաշարժվելու տարածք է և հենց քվեախցերի հետևում առկա է դեպի ներս գնացող մի դուռ, որից ելումուտ են անում և այդ դիրքից հնարավոր է տեսնել ընտրողի քվեարկությունը քվեախցում:

34/12 տեղամասը կահավորված չի եղել օրենքի պահանջների համապատասխան, մասնավորապես՝ սեղանները դրված են եղել ետնապատին կից, ինչը խոչընդոտել է դիտորդի՝ առաքելության արդյունավետ իրականացմանը: Դիտորդի՝ տեղափոխություն անելու

առաջարկը, հանձնաժողովի նախագահի կողմից մերժվել է այն պատճառաբանությամբ, որ տարածքը փոքր է: Արդյունքում, դիտորդը զրկվել է դիտորդական առաքելության արդյունավետ իրականացման համար քվեարկության սենյակում ազատ տեղաշարժվելու իր իրավունքից, ավելին հանձնաժողովի նախագահը հրաժարվել է դիտորդի պահանջով խախտման կապակցությամբ գրանցամատյանում կատարել գրառում:

35/42 տեղամասում քվեախցի կողքին առկա է եղել պատուհան, որով վտանգվում էր քվեարկության գաղտնիությունը:

6.1.2 Տեղամասի անմատչելիություն սայլակով տեղաշարժվողների համար

22/22, 25/2, 25/10, 31/59 և տասնյակ այլ տեղամասերում արձանագրվել է անմատչելիություն սայլակով տեղաշարժվողների համար:

Այդ պատճառաբանությամբ, 3/30 և 29/21 տեղամասերում դեպքեր են եղել, երբ տեղաշարժման դժվարություն ունեցող ընտրողների համար հանձնաժողովի նախագահը, խախտելով օրենքը, դուրս է հանել քվեաթերթիկը տեղամասից, մուտքի մոտ քվեարկել են և բերել գցել քվեատուփի մեջ:

Մեկ այլ դեպքում, 29/21 տեղամասում նույն պատճառով դրսում քվեարկելու հնարավորություն է տրվել ընտրողին, առանց ընտրողների ցուցակը տանելու և նրա կողմից ստորագրվելու (կրկին թույլ տալով օրենքի խախտում):

6.2 Քվեարկության ընթացք

6.2.1 Տեղամասային հանձնաժողովների աշխատակարգի խախտում

3/5, 3/10, 3/20, 3/30 , 9/1 , 11/22, 32/53, 34/28 տեղամասերում խախտվել է հանձնաժողովի անդամների՝ ըստ վիճակահանության 2-ժամյա պարբերականությամբ գործառույթների հերթափոխը և/կամ հանձնաժողովի անդամները տևական ժամանակով և պարբերաբար բացակայել են տեղամասից: Մի շարք տեղամասերում նախագահն անտեսել է դիտորդի պահանջը՝ գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ:

8/28, 12/37 և 25/29 տեղամասերն ընտրողների համար բացվել են ուշացումով:

9/28 և 10/2 տեղամասերում հանձնաժողովների աշխատանքները սկսվել են 7:00-ից ուշ, թեև հասցրել են տեղամասերը ընտրողների համար բացել ժամը 8:00-ին:

18/32 տեղամասում հանձնաժողովի անդամները մի քանի ժամը շարունակ չեն իրականացնել գործառույթների հերթափոխ:

31/7 տեղամասում տեղամասային հանձնաժողովի կողմից կատարվել է վիճակահանություն, սակայն դերերը այդ վիճակահանությանը համապատասխան չեն բաշխվել անդամների միջև: Դիտորդի դիտողությանը ի պատասխան նախագահը միջոցներ չի ձեռնարկել՝ կարգը վերականգնելու համար:

Բազմաթիվ տեղամասերում խախտվել է հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման նպատակով անցկացվող վիճակահանության կարգը, իսկ քվեարկության ընթացքում խախտվել է նրանց երկու ժամյա պարբերականությամբ ռոտացիայի կարգը:

6.2.2 Քվեատուփի լցոնում

5/19 տեղամասում դիտորդը տեսագրել է, թե ինչպես է հանձնաժողովի անդամը անհայտ անձի կողմից փոխանցվող ծրարները լցոնում քվեատուփի մեջ:

9/27 տեղամասում դիտորդների և ընտրողների ներկայությամբ իրականացվել է լցոնում թաղային հեղինակություն Ռուբեն Սիմոնյանի (Բոգո) կողմից՝ մի խումբ կողմնակի անձանց մասնակցությամբ՝ ահաբեկելով դիտորդներին: Դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում:

9/28 տեղամասում ՁԼՄ ներկայացուցիչը 18:10-ից 18:40-ի սահմաններում դիտարկել է, որ հանձնաժողովի քարտուղարը վերցրել է քվերաթերթիկ, քվերակել է ու գցել քվեատուփի մեջ հենց այն ժամանակ, երբ իրարանցում է եղել: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:

10/8 տեղամասում ժամը 14:00-ի դրությամբ ընտրողների ցուցակում եղել է 130 ստորագրություն, սակայն ըստ քվեաթերթիկների հաշվարկի՝ քվեարկության մասնակցիներին հատկացված է եղել 150 քվեաթերթիկ:

11/35 տեղամասում դիտորդը հայտնել է, որ 20:07-ի սահմաններում տեղի է ունեցել քվեատուփի լցոնում՝ շուրջ 100 քվեարկության ծրարներով, իսկ տեղամասի փակումից հետո հանձնաժողովի անդամները փորձել են լրացնել ընտրողների ստորագրած ցուցակները՝ մասնակիցների թիվը լցոնված քվեաթերթիկներին համապատասխանեցնելու նպատակով: Այս դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում:

25/1 ընտրատեղամասում ժամը 13:44 սահմաններում ՁԼՄ ներկայացուցչի կողմից նկատվել է հանձնաժողովի անդամների կուտակումը ընտրատեղամասի նախագահի սեղանի մոտ և միաժամանակ բազմաթիվ լցոնումներ: Ժամը 14:05 սահմաններում նույն ՁԼՄ ներկայացուցիչը հայտնել է տեղամասում կուտակումների և կողմնակի՝ վկայական չունեցող անձանց ներկայությունը: Հանձնաժողովի նախագահը չի արձանագրել վերոնշյալ դեպքերը և փորձել է ամեն կերպ խոչընդոտել դիտորդի աշխատանքը:

28/16 ընտրատեղամասի դիտորդը հայտնել է օրվա ընթացքում բազմաթիվ լցոնումների, ինչպես նաև տարբեր ժամերին կողմնակի անձանց տեղամաս կրկնակի մուտք գործելու մասին:

33/69 տեղամասում ժամը 15:39 հանձնաժողովի քարտուղարը փորձել է լցոնում կատարել, ինչը տեսել է դիտորդը: Դրանից հետո քարտուղարը հեռացել է տեղամասից: Հանձնաժողովի նախագահը փորձել է բանակցել դիտորդի հետ՝ դեպքը թաքցնելու նպատակով պայմանավորվածություն ձեռք բերելու համար, սակայն դիտորդը այս առաջարկը մերժել է: Ավելին, դիտորդը տրամադրել է տեսանյութ հանձնաժողովի անդամների կողմից

քվեաթերթիկները սեղանի տակից հանելու և ծրարների և ցուցակների կնքում իրականացնելու վերաբերյալ: Դիտորդի առաջարկները խախտումները վերացնելու և գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ մերժվել են:

34/28 տեղամասում դիտորդը ժամը 20:40 սահմաններում տեսագրել է քվեատուփի լցոնման մի քանի դեպք:

25/21 տեղամասում դիտորդը բազմիցս նկատել է լցոնումներ, սակայն հանձնաժողովի անդամները փորձել են ամեն կերպ շեղել նրա ուշադրությունը: Դիտորդի առաջարկները խախտումները վերացնելու և գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ մերժվել են:

29/25 տեղամասում մի խումբ երիտասարդներ (շուրջ 15 մարդ) մի քանի անգամ փորձ են կատարել լցոնում իրականացնել: Փորձերից մեկի ժամանակ նրանցից մի քանիսին հաջողվել է լցոնում անել: Խմբի անդամներին հեռացրել են տեղամասից և կազմվել է արձանագրություն:

34/28 տեղամաս են եկել մի քանի երիտասարդներ և լցոնել են քվեատուփը: Դիտորդը հասցրել է բռնել նրանցից մեկի ձեռքը, տեսագրել է այդ ամենը, սակայն հանձնաժողովից որևէ մեկը չի արձագանքել այդ ապօրինությունը

37/13 տեղամասում դիտորդը նկատել է քվեատուփի լցոնում: Հանձնաժողովի նախագահը տեղյակ է եղել խախտման մասին, որևէ քայլ չի արել այն կանխելու համար, հակառակը, ըստ դիտորդի, նույնիսկ մասնակցել է լցոնման գործընթացին: Լցոնումը պարբերաբար կրկնվել է:

ԺԸԵՊ դիտորդները 16/9, 16/40, 16/42, 17/4 տեղամասերում նկատել են, որ քվեատուփերը կնքված չեն, իսկ դրանցում բացահայտել են տասնյակ ծրարներով կոկիկ դասավորված տրցակներ, որոնք կարող էին հայտնվել այնտեղ միայն քվեատուփերը բացելու ու դրանք տեղավորելու կամ հենց տրցակով քվեատուփ նետելու միջոցով:

6.2.3 Բազմակի քվեարկություն կամ այդպիսի փորձ

2/2, 2/15, 3/2, 3/4, 3/6, 3/22, 3/24, 3/28, 3/29, 4/5, 7/1, 7/26, 9/17, 10/20, 11/35, 34/19, 34/20 տեղամասերում մի շարք քաղաքացիներ բացահայտել են, որ իրենց կամ իրենց՝ դեռևս քվեարկության չեկած կամ երկրում չգտնվող ընտանիքի անդամների, իսկ առանձին դեպքում նաև մահացած ընտանիքի անդամի անվան դիմաց արդեն ստորագրված է ընտրողների ցուցակներում: Որպես կանոն հանձնաժողովի նախագահը և անդամները սա բացահայտել են այն հանգամանքով, որ սխալմունք է տեղի ունեցել, առաջարկել քվեարկել մեկ այլ քաղաքացու անվան դիմաց ստորագրելով կամ առանց ստորագրության քվեաթերթիկ ստանալով: Նման դեպքերը գրանցամատյանում արձանագրելու քաղաքացիների և դիտորդների առաջարկները որպես կանոն արհամարհվել և մերժվել են, իսկ առանձին դեպքում նաև խաբեությամբ հավաստիացրել են, թե արձանագրվել է, սակայն ընտրողը իրավունք չունի ծանոթանալու գրանցամատյանի համապատասխան բաժնին:

6/6, 8/21, 8/25, 10/8, 10/20, 21/14, 11/3 տեղամասերում դիտորդներն արձանագրել են նույն անձի կողմից բազմակի քվեարկության կամ դրա փորձերի դեպքեր: Առավել հաճախ սա իրականացվել է նույնականացման քարտերով կամ լրացուցիչ ցուցակներով ընտրողների պարագայում: Գրանցվել են դեպքեր, երբ տեղամասում գտնվող ՁԼՄ ներկայացուցիչը, դիտորդը կամ հանձնաժողովի անդամը ճանաչել են մեկ անգամ արդեն քվեարկած քաղաքացուն, որից հետո վերջինս դիմել է փախուստի, սակայն այդքանից հետո նախագահը հրաժարվել է արձանագրել կատարվածը:

8/14 տեղամասում քվեարկողը եկել է քվեարկելու, դիտորդը նկատել է, որ անձնագիրը արդեն կնքված է, մինչև փորձել է հանձնաժողովի նախագահի ուշադրությունը գրավել, այդ քաղաքացին հեռացել է քվեաթերթիկը վերցնելով իր հետ: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:

8/25 տեղամասում դիտորդը մոտ մեկ ժամվա ընթացքում ականատես է եղել կրկնակի քվեարկության կամ դրա փորձի միանգամից չորս դեպքի: Քաղաքացին քվեարկության է եկել արդեն իսկ կնքված անձնագրով, երկու դեպքում նրանց հաջողվել է ծրարը գցել քվեատուփը, որից հետո է միայն ստուգվել անձնագրերում կնիքի առկայությունը: Հանձնաժողովի նախագահը մերժել է արձանագրել խախտումը և դիտորդին սպառնացել է ձեռքից վերցնել տեսագրությունը:

3/20, 7/2, 7/15, 8/35, 31/59 և 39/32 տեղամասերում պարբերաբար հայտնաբերվել են այլ անձանց փոխարեն քվեարկելու դեպքեր, որոշներն էլ կանխվել են դիտորդի աչալրջության շնորհիվ: 7/15 տեղամասում կնոջ անձնագրով քվեարկության եկած տղամարդուն հայտնաբերելուց հետ դիտորդը բարձրաձայնել է, իսկ հանձնաժողովի անդամը արագ փակել է անձնագիրը և քաղաքացուն ուղղորդել է այլ տեղամաս: 8/35 տեղամասում հանձնաժողովի անդամը պատրաստվել է գրանցել ուրիշի անձնագրով ներկայացած ընտրողին, սակայն հանձնաժողովի անդամներից մեկը տեղեկացրել է խախտման մասին ՏԸՀ նախագահին, որն էլ հեռացրել է նրան՝ ասելով, թե քաղաքացին շփոթվել է: Խախտումը չի արձանագրվել: 39/32 տեղամասում ՁԼՄ ներկայացուցիչը նկատել է 3 տղամարդու, ովքեր իրենց անձնագրերում դրված թղթերի վրա գրառված այլ անձանց տվյալներով ստացել են քվեաթերթիկներ և քվեարկել:

Ըստ ԺԸԵՊ դիտորդների բացահայտումների, 4/5 տեղամասում մի ընտրող հայտնաբերել է, որ քվեարկություն է կատարվել իր հոր և Հայաստանից դուրս բնակվող դստեր փոխարեն, իսկ 6/16 տեղամասում մեկ այլ ընտրող պարզել է, որ քվեարկություն է արվել Հայաստանից դուրս բնակվող իր որդու փոխարեն: 10/12 տեղամասի մոտակայքում նկատվել են քվեարկության մասնակիցների բազմակի այցելություններ մոտակա տեղամասեր, ընդ որում նրանց «փոխհատուցումը» տվյալ գործընթացի համակարգողների կողմից եղել է հենց այդ տեղում:

6.2.4 Ընտրակաշառքի բաժանում / խոստումներ

3/5 տեղամասում դիտորդը տեղամասի շրջակայքում նկատել է հավաքված քաղաքացիների, ովքեր խոսել են ընտրակաշառքից:

30/35 տեղամասում հանձնաժողովի անդամների կողմից եղել են կաշառքի խոստումներ:

33/75 տեղամասում ժամը 14:05 դիտորդին առաջարկվել է կաշառք՝ խախտումների վրա աչք փակելու պայմանով, որից առաջացել է վիճաբանություն, ավելին՝ դիտորդն ականատես է եղել ընտրակաշառքի մի շարք դեպքերի: Այս ամենը չի արձանագրվել գրանցամատյանում:

6.2.5 Ընտրողին օգնելու կարգի և քվեարկության գաղտնիության խախտում

3/33 տեղամասում տեղի է ունեցել քվեարկության գաղտնիության խախտում՝ պարբերաբար քվեախուց են մտել միաժամանակ մեկից ավել քվեարկողներ:

4/1 տեղամասում ժամը 11:30-ի սահմաններում դիտորդն արձանագրել է քվեարկության գաղտնիության խախտում, մասնավորապես՝ ՕԵԿ վստահված անձ Մարզպետ Դալլաքյանը, ԲՀԿ վստահված անձ Միերը և հանձնաժողովի նախագահ Արմեն Ազոյանը մոտեցել և ուշադիր զննել են քաղաքացու քվեարկելու պահը քվեախցի մոտ՝ երկար մնալով:

8/21 տեղամասում ժամը 10:56 սահմաններում ՁԼՄ ներկայացուցիչն արձանագրել է քվեարկության գաղտնիության խախտում: Վստահված անձն անարգել մտել է քվեախուց և հետևել քաղաքացիներին ընտրություն կատարելիս: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրել խախտումը կամ կանխել՝ արգելել վստահված անձին մուտք դեպի քվեախուց:

8/25 տեղամասում ժամը 11:30 սահմաններում դիտորդն արձանագրել է քվեարկողին օգնելու կարգի խախտում: Դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում:

8/27 տեղամասում ժամը 11:49 սահմաններում դիտորդն արձանագրել է ընտրողին օգնելու կարգի խախտում: Ընտրողին աջակցողների անունները չեն գրանցվել գրանցամատյանում:

10/2 տեղամասում դիտորդը տեսել է, որ տեսախցիկներ են տեղադրված պատի վրա՝ քվեախցերի անմիջապես վերևում: Հանձնաժողովի նախագահ Հակոբյան Հակոբը, ում հետ խոսել է դիտորդը, խոսել է նաև «Քաղաքացի դիտորդ» համակարգման կենտրոնի օպերատորի հետ և պնդել, որ քվեախցերը տեղափոխել չի կարող, իսկ տեսախցիկները անջատված են, սակայն այլ գործողություններ չի կատարել՝ ճշտելու թե արդյոք այդ տեսախցիկների դիտարկում իրականացվում է թե ոչ, կամ ում կողմից են դրանք տեղադրված, եղել են արդյոք մինչև քվեարկությունը, հանձնաժողովի նախագահը շենքի տնօրինության հետ կապ չի հաստատել: Դրա վերաբերյալ արձանագրություն չեն կազմել և քվեարկության ողջ օրվա ընթացքում տեսախցիկները եղել են տեղամասի պատին:

29/21 տեղամասում դիտորդը հետևել է, թե ինչպես հանձնաժողովի անդամներից մեկը քվեարկության գրեթե ողջ ընթացքում քվեարկության խցիկի մոտ կանգնած հետևել է, թե ինչպես են քվեարկում քաղաքացիները, որով խախտել է քվեարկության գաղտնիությունը: Այս դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում: Նույն տեղամասում բազմաթիվ հաշմանդամների համար քվեաթերթիկը հանձնաժողովի նախագահի և վստահված անձի կողմից տարվել է տեղամասից դուրս, լրացվել է, այնուհետ քվեաթերթիկը բերվել և գցվել է արկղի մեջ: Բոլոր դեպքերում էլ գրանցամատյանում գրանցումներ չեն կատարվել:

28/30 տեղամասում՝ Բալահովիտի զորամասի տարածքում տեղի է ունեցել բաց քվեարկություն:

31/47 տեղամասում երկու անգամ բաց քվեարկություն է եղել, ընտրատեղամասի նախագահը տեղյակ է դրա մասին:

11/28, 34/31 տեղամասերում ծերերին օգնել են քվեարկել՝ առանց այդ մասին մատյանում գրանցում կատարելու:

34/31 տեղամասում ժամը 14:24-ին թոռնուհին քվեարկել է տատիկի փոխարեն, խախտման վերաբերյալ դիտորդի առաջարկը՝ գրանցամատյանում գրառելու վերաբերյալ թողնվել է անհետևանք: Ավելին, ժամը 12:19-ի սահմաններում առավոտյան արդեն քվեարկած անձը քվեարկել է երկրորդ անգամ և դիտորդի առաջարկը՝ խախտումը վերացնելու և գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ հանձնաժողովի նախագահը ևս թողել է անհետևանք:

6.2.6 Քվեաթերթիկի դուրս հանում տեղամասից

6/3 տեղամասում դիտորդը արձանագրել է, որ տեղամասում քվեաթեթիկները ժամանակավորապես անհետացել են:

7/1 տեղամասում ժամը 16:10 սահմաններում ՁԼՄ ներկայացուցիչը դիտարկել է քվեաթերթիկի դուրս հանում տեղամասից և ներս բերում: Այս փաստը հայտնվել է հանձնաժողովի նախագահին, սակայն չի արձանագրվել գրանցամատյանում:

8/14 տեղամասում ժամը 14:21 սահմաններում դիտորդն արձանագրել է քվեաթերթիկի դուրս հանում տեղամասից և ներս բերում:

6.2.7 Քվեարկության այլ պարագաների դուրս հանում ընտրական տեղամասից

4/26 Հանձնաժողովի անդամը՝ Ղուկասյան Վահրամը, դրոշմակնիքով դուրս է եկել տեղամասից որոշ ժամանակով:

7/2 տեղամասում ժամը 20:46 սահմաններում ՁԼՄ ներկայացուցիչը դիտարկել է քվեարկության պարագաների դուրս բերում ընտրական տեղամասից, մասնավորապես, նա տեսել է թե ինչպես է հանձնաժողովի անդամը դուրս եկել կնիքով և որոշ ժամանակ անց նորից վերադարձել տեղամաս: Վերոգրյալ փաստերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում, սակայն հանձնաժողովի նախագահը տեղեկացված է եղել:

9/17 տեղամասում դիտորդը նկատել է, որ տեղամասի կնիքը 14:03-ի սահմաններում հայտնվել է հանձնաժողովի ՀՅԴ անդամ Սոնա Փարսադանյանի մոտ, իսկ վերջինիս անհատական դրոշմակնիքը կորել է: Այդ մասին տեղեկացրել են ՀԿՀ-ին և դադարեցրել քվեարկությունը՝ դրոշմակնիքը գտնելու համար: Որոշ ժամանակ անց կորած դրոշմակնիքը գտել են աղբամանից: Նշված փաստը չի արձանագրվել: Միջադեպին ներկա են եղել լրագրողներ 168.am-ից, news.am-ից, Հ3-ից:

9/23 տեղամասում ԶԼՄ ներկայացուցիչը դիտարկել է, թե ինչպես է հանձնաժողովի անդամը երկու անգամ հանձնաժողովի կնիքը դուրս հանել տեղամասից միջանցք: Երրորդ անգամ դիտորդը տեսանկարահանել է փաստը: Դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում:

34/28 տեղամասում դիտորդը նկատել է, որ տեղամասի փակվելուց քիչ առաջ քվեատուփի մոտ գտնվող հանձնաժողովի անդամի մոտից անհայտ մի անձ վերցրել է տեղամասի կնիքը և դուրս հանել տեղամասից: Որոշ ժամանակ կնիքն իբր փնտրել են և չեն գտել, ապա այն նորից հայտնվել է տեղամասում: Խախտման վերաբերյալ դիտորդի առաջարկը՝ միջոցներ ձեռնարկելու և գրանցամատյանում գրառելու մասին հանձնաժողովի նախագահի կողմից մերժվել է:

6.2.8 Կողմնակի անձանց և/կամ նույն կազմակերպությունից մեկից ավելի անձանց ներկայություն և նրանց կողմից քարոզչություն տեղամասում

3/10 տեղամասում է գտնվել անհայտ անձ, ով ցուցակներ է լրացրել: Հանձնաժողովի նախագահին տեղեկացվել է խախտման մասին, վերջինս անգործություն է դրսևորել:

1/36, 3/29, 4/1, 4/2, 5/25, 7/1, 7/15, 8/25, 9/16, 25/2, 29/25, 30/35, 31/53, 32/1, 34/23, 35/29 և բազմաթիվ այլ տեղամասերում դիտորդներ նկատել են կողմնակի անձանց, ովքեր քվեարկության ընթացքում ներկայացել են որպես վստահված անձ կամ դիտորդ (առավել հաճախ ՀՀԿ ներկայացնող), սակայն առանց որևէ փաստաթուղթ ներկայացնելու կամ պատշաճ կարգով կրելու, մասնակցություն են ունեցել քվեարկության ընթացքին՝ առանձին դեպքերում ուղղորդելով ընտրողների հոսքը և իրականացնելով քարոզչություն (11/25, 38/1 և այլն): Նույն տեղամասերում գրանցվել են նաև առանձին դեպքեր, երբ մեկից ավելի մարդիկ (ընդհուպ մինչև 5) ներկայացել են նույն կազմակերպության անունից: Չնայած այն հանգամանքին, որ նշված խախտումների մեծամասնությունն ունեն փաստական ապացույց (ձայնագրվել և տեսագրվել են դիտորդների և ԶԼՆ-ների կողմից), ինչպես և շատ այլ խախտումների պարագայում տեղամասային հանձնաժողովների նախագահները ցուցաբերել են անգործություն և դրանք չեն արձանագրել գրանցամատյանում:

6.2.9 Ընտրողների ուղղորդում տեղամասում և տեղամասից դուրս, ընտրողների խմբերի տեղափոխում

4/1 տեղամասում հանձնաժողովի նախագահը 3 անգամ մտել է քվեախուց ընտրողին օգնելու համար, որոնցից մի անգամ հստակ լսվել է, որ ասում է «ձախը կնշես» արտահայտությունը նաև մի քանի անգամ առանց քվեախցին մոտենալու է հուշել քաղաքացիներին:

6/6 տեղամասում ՀՀԿ վստահված անձ Վլադիմիր Գալստյանը քվեարկության սկզբից մինչև վերջ ուղղորդել է քվեարկողներին, մասնավորպես 2-3 անգամ մտել է նրանց հետ քվեախուց: Նախագահից պահանջել են արձանագրել խախտումը, սակայն չի արձանագրել:

Նմանատիպ վարք դիտարկվել է շուրջ մեկ տասնյակ այլ տեղամասերում (5/15, 7/4, 8/14 , 8/27, 9/1, 9/16, 10/20, 12/11, 12/34, 37/8, 38/2), որտեղ հանձնաժողովի անդամները, վստահված անձինք, ինչպես նաև կողմնակի՝ վկայական չունեցող անձանց կողմից իրականցվել է ընտրողների ուղղորդում դեպի քվեախուց: Որպես կանոն այս խախտումները

ևս չեն արժանացել պատշաճ արձագանքի հանձնաժողովի նախագահների կողմից և չեն արձանագրվել գրանցամատյաններում:

Ըստ ԺԸԵՊ ներկայացուցիչների դիտարկումների, 5/6 և 10/13 տեղամասերում ընտրողներին մեքենաներով կազմակերպված բերել են քվեարկության: Առաջինում գործընթացը կազմակերպվել է երեք մեքենայով և ղեկավարվել է ՀՀԿ վստահված անձի կողմից:

Ընտրողների դեպի տեղամաս տեղափոխման և տեղամասում ուղղորդման գործողություններ իրականացվել են մի շարք այլ վայրերում: Մասնավորապես 4/1, 5/15, 5/16, 7/15, 10/4, 13/22, 34/23, 35/29 տեղամասերում պարբերաբար ընտրողների խմբեր են հայտնվել՝ որպես վստահված անձիք ներկայացող մարդկանց ուղեկցությամբ, ինչի հետևանքով հաճախ խախտվել է տեղամասում միաժամանակ 15 ընտրողից ավելի ընտրող ներս թողնելու նորմը, ստեղծվել է խառնաշփոթ, դժվարացել է հանձնաժողովի և մյուս մասնակիցների պարտականությունների իրականացումը: Որպես կանոն, այս խախտումները ևս չեն արժանացել պատշաճ արձագանքի հանձնաժողովների նախագահների կողմից և չեն արձանագրվել գրանցամատյաններում:

6.2.10 Ընտրողների կուտակումներ տեղամասում, մարդկանց կամ մեքենաների կուտակումներ տեղամասից դուրս

Միաժամանակ 15 ընտրողից ոչ ավել ընտրողի՝ տեղամասում ներկա գտնվելու սահմանափակումը խախտվել է նաև առնվազն մեկ տասնյակ այլ տեղամասերում (2/22, 3/30, 4/1, 6/6, 7/1, 8/25, 9/1, 9/13, 9/16, 9/28, 14/5, 29/8), ինչի արդյունքում սահմանափակվել է քվեարկության գործընթացը լիարժեք վերահսկելու դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների հնարավորությունը, հանձնաժողովի նախագահը որևէ քայլ չի կատարել կուտակումները վերացնելու համար, ինչպես նաև չի արձանագրել խախտումը գրանցամատյանում:

Քվեարկության գործընթացի պատշաճ և սահուն կազմակերպման համար կարևոր մեկ այլ նորմ է մարդկանց կամ մեքենաների կուտակումները տեղամասից 50 մետր շառավղով արգելող դրույթը: Այն ևս խախտվել է մեր կողմից դիտարկված մի շարք տեղամասերում՝ 3/10, 7/15, 8/25, 8/27, 9/1, 9/13, 32/53, 33/77, 34/33:

6.3 Արդյունքների ամփոփում

6.3.1 Արդյունքների ամփոփման կարգի խախտում

4/2 տեղամասում ժամը 01:00-ի սահմաններում հանձնաժողովի նախագահ Արման Եփրեմյանը արդյունքների ամփոփման արձանագրությունը չի տեղադրել պարկի մեջ:

5/10 տեղամասում ՁԼՄ ներկայացուցիչն արձանագրել է, որ հաշվարկի ժամանակ «այո»-ի ձայները չեն հաշվել, ասելով, որ միայն «ոչ»-ի ձայները կհաշվեն և մասնակիցների թվից հանելով, կստանան «այո»-ի քանակը: Մի քանի «ոչ» քվեաթերթիկ տեղափոխել են «այո»-ի տրցակ, և դիտորդի այն հարցին, թե ինչու են այդպես անում ասել են, որ այդպես է պետք:

7/15 տեղամասում ժամը 20:23 սահմաններում ԶԼՄ ներկայացուցիչները դիտարկել են, որ հանձնաժողովը անորոշ ժամանակով ամփոփիչ նիստի ընդմիջում է հայտարարել: Այս փաստը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:

8/27 տեղամասում ժամը 21:55-ի, 22:22-ի, 23:13-ի, 00:07-ի, 00:35-ի սահմաններում դիտորդը դիտարկել է, որ տեղի է ունեցել արդյունքների ամփոփման կարգի խախտում: Մասնավորապես, հաշվարկը պարբերաբար ընդհատվել է և հանձնաժողովի նախագահը առանց պատճառաբանության լքել է տեղամասը: Այս դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում:

8/35 տեղամասում ժամը 23:27 սահմաններում ԶԼՄ ներկայացուցիչը արձանագրել է արդյունքների ամփոփման կարգի խախտում: Տեղամասում անջատել են լույսերը և շրջել սեղանները, դրանց վրայից գետնին են թափվել քվեաթերթիկները և ծրարները: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:

11/35 տեղամասում դիտորդը արձանագրել է, որ հաշվարկը սկսվել է մեկ ժամ ուշացումով: Տեղամասի փակվելուց հետո հանձնաժողովի անդամները փորձել են ստորագրություններ դնել ընտրողների ցուցակում: Այս դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում: Ընտրողների ստորագրված ցուցակներում քվեարկության մասնակիցների իրական թիվը չի համապատասխանել քվեատուփում առկա քվեաթերթիկների թվին:

12/27 տեղամասում քվեաթերթիկները բոլորին ցույց չեն տվել, հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են քվեարկել քվեաթերթիկի անվավեր ճանաչվելու դեպքում: Նաև անվավեր են ճանաչել առանց լուրջ պատճառի: Քվեաթերթիկների «այո» կամ «ոչ» քվեարկությունը բարձրաձայն չեն հայտարարվել:

34/28 տեղամասում ժամը 20:46 անորոշ պատճառներով սկսված չի եղել քվեարկության արդյունքների ամփոփման նիստը և քվեարկության արդյունքների հաշվարկման գործընթացը:

Բացի վերոգրյալը բազմաթիվ տեղամասերում ժամը 22:00-ից արձանագրվել են ամփոփիչ նիստերի ընդհատման դեպքեր ընդհուպ մինչև մի քանի ժամ տևողությամբ: Ամփոփիչ նիստերի ընդհատումները ևս չեն արձանագրվել գրանցամատյաններում:

6.3.2 Քվեարկության արդյունքների կեղծում

4/5 տեղամասում ժամը 01:00-ի սահմաններում դիտորդներն արձանագրել են, որ քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում վստահված անձանցից մեկի և հանձնաժողովի նախագահի միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որից հետո որոշում է ընդունվել կրկին հաշվարկել ձայները՝ ինչը որևէ կերպ չի արձանագրվել: Միջադեպից առաջ «այո»-ի քանակը կազմել է 205, իսկ «ոչ»-ը՝ 609, իսկ վերահաշվարկից հետո «ոչ»-ը՝ 300, «այո»-ն՝ 500:

4/26 տեղամասում ժամը 22:25-ին արդյունքների ամփոփման ժամանակ հանձնաժողովի նախագահը պարզապես ոչնչացրել է «ոչ»-ի քվեաթերթիկների մի մասը: Դրա վերաբերյալ հանձնաժողովի անդամ Թոքմաջյանը հատուկ կարծիք է թողել արձանագրության մեջ:

4/28 տեղամասում դիտորդը հայտնաբերել է, որ սկզբնական հաշվարկի ժամանակ հաշվարկվել է 484 «ոչ», 350 «այո» և 52 «անվավեր» քվեաթերթիկ, որոնք վերահաշվարկվել են՝ ինչի արդյունքում համամասնությունը փոխվել է հետևյալ կերպ՝ շուրջ 720 «այո» և 150 «ոչ»: Այս հանգամանքները հանձնաժողովի նախագահից պահանջել են արձանագրել գրանցամատյանում Սարգսյանը և ՀԱԿ-ի վստահված անձ Անահիտ Ավանեսյանը, ինչպես նաև ՀԱԿ հանձնաժողովի անդամը, սակայն հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրել:

5/13 տեղամասում «ոչ» քվեաթերթիկները հաշվում էին որպես «այո»: Խախտումը կրկնվել է 3-4 անգամ:

7/2 տեղամասում ժամը 01:07 սահմաններում դիտորդը դիտարկել է քվեարկության արդյունքների կեղծում: Տեղամասում հաշվարկի ժամանակ ակնհայտ անհամապատասխանություն է եղել հանձնաժողովի հայտարարած թվերի և քվեարկության մասնակիցների թվերի միջև, քանի որ ավելի քիչ են մասնակցել և դիտորդը դրանք գրանցել է: Հաշվարկի ժամանակ «այո» և «ոչ»-ի ձայների գրեթե հավասար են եղել մինչ տեղամասի լույսերն անջատվելը: Լույսերը միացնելուց հետո «ոչ»-ի տրցակից հանձնաժողովի անդամները վերահաշվարկելու արդյունքում հանկարծ հայտնաբերել և հանել են մի շարք անվավեր քվեաթերթիկներ, սեղանին դրված «այո»-ի տրցակը կտրուկ մեծացել է և արդյունքում տվյալ տեղամասում «այո»-ն հաղթել է ձայների մեծ տարբերությամբ:

7/15 տեղամասում ժամը 23:35 ԶԼՄ ներկայացուցիչները դիտարկել են քվեարկության արդյունքների կեղծում: Տեղամասում հաշվարկի ժամանակ անջատել են լույսերը: Ներկաներից մեկը վերցրել է քվեաթերթիկների մի տրցակը և փորձել դուրս վազել սենյակից: Մինչև լույսերը անջատելը տեղամասում հաղթել է «ոչ»-ը, սակայն լույսերը միացնելուց հետո կատարվել է վերահաշվարկ, ինչի արդյունքում կտրուկ ավելացել է անվավեր քվեաթերթիկների թիվը որոնց մեջ են հայտնվել «ոչ»-ի քվեաթերթիկներ: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:

8/25 տեղամասում ժամը 23:02 սահմաններում դիտորդն արձանագրել է քվեարկության արդյունքների կեղծում: Ամփոփման ժամանակ տեղամասում են եղել մի քանի վստահված անձիք նույն կազմակերպությունից (ՀՀԿ, 4-6 հոգի): Քվեաթերթիկի արդյունքները բարձրաձայն չէին հայտարարվում՝ առնվազն 30 հատ «ոչ» որպես «այո» է հաշվարկվել: «Այո»-ի դեպքում միշտ վավեր են հաշվարկվել նշումներով քվեաթերթիկները, «ոչ»-ի դեպքում՝ անվավեր: Այս դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում:

8/27 տեղամասում ժամը 01:18 սահմաններում դիտորդն արձանագրել է քվեարկության արդյունքների կեղծում: Հանձնաժողովի նախագահը ավելացրել է «այո»-ի թերթիկները՝ իջեցրել է սեղանի տակ և այնտեղից հանել է ավելի շատ քվեաթերթիկնեը: Հրաժարվել են գրանցել ահազանգը:

11/22 տեղամասում հանձնաժողովի կողմից քվեարկության ավարտից հետո քվեարկության արդյունքների հաշվարկի ժամանակ կազմվել է արձանագրություն, որի համաձայն արձանագրվել են հետևյալ արդյունքները. «ոչ»՝ 526 քվեաթերթիկ, «այո»՝ 126 քվեաթերթիկ: Արձանագրության օրինակը տրամադրվել է դիտորդներին և վստահված անձանց, ինչպես նաև այլ իրավունք ունեցող անձանց: Սակայն հրապարակվել են ճիշտ հակառակ արդյունքները: Մասնավորապես նշվել է հետևյալ. «այո»՝ 526 քվեաթերթիկ, «ոչ» 126 քվեաթերթիկ: Հանձնաժողովի անդամներից մեկի հատուկ կարծիքը չի արտացոլվել արձանագրությունում:

Հարկ է ավելացնել, որ հաշվարկի ընթացքում ամենայն հավանականությամբ զգալով, որ չի ստացվում «այո»-ների և «ոչ»-երի ցանկալի համամասնությունը, հանձնաժողովների նախագահները բեմականացնում էին ինքնազգացողության վատացման տեսարաններ և կանչում էին շտապ օգնություն: Այդպիսի դեպքեր գրեթե նույն ժամանակահատվածում արձանագրվեցին բազմաթիվ տեղամասերում:

6.4 Դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների խախտումներ

Հանրաքվեի օրը համատարած գրեթե բոլոր տեղամասերում սահմանափակվել կամ խոչընդոտվել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության ներկայացուցիչների՝ դիտորդների ու ՁԼՄ ներկայացուցիչների, երբեմն նաև՝ վստահված անձանց իրավունքի իրացումը՝ քվեարկության գործընթացի ընթացքում ծանոթանալու ընտրողների ստորագրված ցուցակներին և ընտրողների քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ կատարելու սեփական նշումներ. Բացի այդ բազմաթիվ տեղամասերում ընտրողների ցուցակները կարված էին այնպես, որ դրանցում նշված քվեարկողների հերթական համարները չէին երևում և դիտարկողները զրկված էին այդ համարները տեսնելու հնարավորությունից:

Դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների գործունեության խոչընդոտում իրականացվել է կամ հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահի, իսկ շատ դեպքերում նաև այլ անդամների, ուղղակի մասնակցությամբ կամ նրանց գործողությունների, անգործության, օրենքով իրենց վրա դրված պարտականությունները չիրականացնելու պատճառով, այդ թվում՝ նաև ընտրատեղամասում օրենքին համապատասխան կարգուկանոնը չապահովելու, անհայտ և չլիազորված անձանց ներկայությունը չսահմանափակելու, ժամանակին և պատշաճ կերպով ոստիկանության աջակցությունը չհայցելու պատճառներով:

Քվեարկության օրն արձանագրված դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների խախտումների կապակցությամբ ՀԸՀ-ներ և ՀԿՀ ներկայացվել են մոտ 87 տեղամասերում տեղ գտած՝ 150 անձի իրավունքների խախտման փաստերով դիմում-բողոքներ:

Դիտորդների իրավունքների խախտումները կարելի է ներկայացնել հետևյալ 4 խմբերով.

- Ընտրողների ցուցակներին և քվեարկության այլ փաստաթղթերին ծանոթանալուն, դրանցից գրառումներ անելուն ապօրինի արգելելը տեղի է ունեցել դիտարկված մոտ երեք տասնյակ ընտրական տեղամասերում (1/22, 3/20, 3/29, 4/5, 5/8, 5/15, 5/16, 9/1, 9/27, 12/16, 12/21, 12/27, 14/21, 14/23, 19/7, 19/8, 20/3, 21/9, 21/12, 21/18, 29/8, 29/11, 30/37, 32/1, 34/7, 35/30, 38/17, 38/56): Այս ապօրինի արգելքից զատ,

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության բազմաթիվ դիտորդներ և ՁԼՄ ներկայացուցիչների մոտ գտնվող ընտրողների ցուցակների հետ կապված նշումներ անելու ձևաթղթերը բռնությամբ վերցվել են նրանցից և ոչնչացվել: Այս խախտումները այնքան համատարած էին, որ արդեն քվեարկության օրվա ընթացքում ԻԵՄ, ԹԻՀԿ, ԸԻԿ հասարկական կազմակերպության դիտորդները և «Ասպարեզ» օրաթերթի և Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչները ստիպված են եղել բողոք-դիմում ներկայացնել ՀԿՀ նախագահ Տիգրան Մուկուչյանին՝ խախտման վերացման, խախտում կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց համար օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ և ըստ անհրաժեշտության քրեաիրավական բնույթի խախտումները ըստ ենթակայության վերահասցեագրելու մասին: Այդուհանդերձ, ցուցակներին անարգել ծանոթանալու խախտումը շարունակել է տեղ գտնել հանրաքվեի ողջ ընթացքում, ինչպես նաև վերահաշվարկի ընթացքում:

- Ավելի քան երեք տասնյակ տեղամասերում (3/20, 29/8, 4/1, 4/2, 4/5, 4/26, 4/28, 9/1, 9/16, 9/27, 12/11, 12/16, 12/21, 12/27, 14/23, 20/3, 21/12, 25/1, 25/2, 26/9, 29/8, 29/21, 31/59, 33/69, 33/75, 34/12, 34/20, 34/23, 34/25, 34/28, 34/31, 35/29, 35/37) հանձնաժողովի նախագահը հրաժարվել է բացահայտված խախտումը գրանցամատյանում արձանագրելուց և/կամ հրաժարվել է այդ խախտումը վերացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելուց:
- Նկարահանումներ իրականացնելու և տեղամասում ազատ տեղաշարժվելու ապօրինի արգելքի դեպքեր գրանցվել են մոտ մեկուկես տասնյակ տեղամասերում (1/36, 3/5, 3/29, 4/26, 5/8, 29/8, 5/16, 6/6, 10/17, 10/20, 32/1, 34/7, 34/12, 34/25, 38/5):
- Դիտորդի և ՁԼՄ ներկայացուցչի նկատմամբ ճնշում, ահաբեկում, սպառնալիք կամ ֆիզիկական բռնության դեպքեր գրանցվել են 17 տեղամասերում (3/5, 4/1, 4/5, 4/11, 5/8, 5/16, 6/6, 8/27, 9/23, 9/27, 11/21, 12/11, 12/27, 29/11, 30/5, 35/30, 38/62), որոնք սակայն համարվում են դժվար բացահայտվող խախտման տեսակներ՝ հաշվի առնելով այն ակնհայտ փաստը, որ ահաբեկման կամ ֆիզիկական բռնության ենթարկվածը միշտ չէ, որ պատրաստ է հանրայնացնել այդ հանգամանքը: Սա փաստվել է հանրաքվեի օրվանից հետո, երբ դիտորդների հետ խոսակցություններով պարզվել է, որ նրանց նկատմամբ ճնշում է կիրառվել տեղամասերի զգալի մասում: Հատկապես լայն տարածում է ստացել դիտորդներին անձնական, ազգակցական և ծառայողական կապերի և լծակների միջոցով ճնշումներ բանեցնելու պրակտիկան, որը կիրառվել է նախքան և հատկապես հանրաքվեի օրը, ինչպես նաև հետընտրական ժամանակահատվածում՝ արձանագրված խախտումներից կամ ներկայացված հաղորդումներից հրաժարվելուն հակելու կամ հարկադրելու նպատակով:

Հարկ է նշել, որ առաջին երեք խումբ խախտումները բավական լայն հնարավորություն են տվել հանձնաժողովների անդամներին, ինչպես նաև տեղամասերում գտնվելու իրավունք չունեցող անձանց անպատիժ իրականացնել իրենց ապօրինի գործունեությունը կամ անգործությունը:

6.5 Տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունների քաղվածքների ուսումնասիրություն

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կողմից դիտարկված 475 տեղամասերի արձանագրությունների քաղվածքների ուսումնասիրության արդյունքում դրանցից մոտ 440-ում հայտնաբերվել են բազմաթիվ խնդիրներ:

Մասնավորապես, հետևյալ արձանագրություններում բացակայում են ելակետային տվյալները (ինչը հնարավորություն է տալիս կատարել շտկումներ և լրացումներ) կամ դրանք չեն համապատասխանում ԿԸՀ-ի կայքում հրապարակված պաշտոնական թվերի հետ.

- ընտրողների ցուցակում ընդգրկվածների ընդհանուր թիվը բացակայում է թվով 22 տեղամասերի արձանագրություններում (տեղամասեր՝ 2/37, 5/18, 6/15, 7/2, 13/1, 11/25, 12/16, 17/2, 17/8,17/10,17/11, 21/9, 21/14, 23/2, 23/44, 30/23, 31/43, 31/45, 32/39, 34/30, 35/1, 35/38), իսկ թվով 71 տեղամասերում չի համապատասխանում ԿԸՀ հրապարակած տվյալներին (տեղամասեր՝ 1/2, 1/4, 1/23, 2/34, 2/37, 3/6, 4/2, 5/13, 5/18, 6/6, 6/15, 6/20, 7/2, 10/2, 10/5, 11/3, 11/16, 11/32, 12/6, 12/10, 12/23, 12/24, 13/1, 13/2, 15/29, 16/3, 16/40, 16/45, 17/8, 17/10, 19/8, 19/5, 19/20, 20/5, 21/4, 22/24, 23/1, 23/42, 25/17, 25/21, 26/7, 26/10, 28/10, 28/24, 31/36, 31/39, 31/59, 32/1, 32/5, 32/28, 32/39, 33/51, 33/78, 34/15, 34/16, 34/34, 35/1, 35/4, 35/7, 35/10, 35/26, 35/38, 35/44, 37/3, 38/10, 38/13, 38/14, 38/17, 38/28, 38/37, 41/22, 41/28)
- հիմնական ցուցակներում ընդգրկվածների թիվը չի համապատասխանում ԿԸՀ հրապարակած տվյալներին թվով 35 տեղամասի արձանագրություններում (տեղամասեր՝ 2/34, 4/2, 6/15, 6/20, 7/2, 10/31, 11/3, 11/6, 11/25, 11/32, 12/23, 12/24, 16/40, 19/8, 19/15, 19/20, 20/5, 21/4, 23/42, 25/1, 26/10, 32/28, 33/51, 35/4, 35/7, 35/10, 35/44, 36/1, 36/34, 38/5, 38/14, 38/17, 38/28, 38/48, 41/22)
- լրացուցիչ ցուցակում ընդգրկվածների թիվը բացակայում է թվով 2 տեղամասերի արձանագրություններում (11/25, 29/28), իսկ 33 տեղամասերում չի համապատասխանում ԿԸՀ հրապարակած տվյալներին (տեղամասեր՝ 1/2, 1/4, 2/22, 3/6, 5/13, 6/6, 6/20, 7/2, 7/21, 11/25, 15/29, 16/3, 16/40, 16/42, 19/15, 19/20, 23/1, 23/42, 25/17, 25/21, 28/24, 31/59, 32/5, 32/39, 34/15, 34/16, 34/34, 37/23, 38/10, 38/13, 38/14, 38/37, 41/28)

- քվեարկության մասնակիցների թիվը բացակայում է թվով 49 տեղամասերի արձանագրություններից (տեղամասեր՝ 2/37, 5/18, 5/22, 6/15, 6/20, 7/2, 7/4, 7/34, 9/14, 10/2, 10/5, 11/25, 12/16, 12/24, 13/1, 17/2, 17/8, 17/10, 21/3, 21/9, 21/11, 21/14, 22/14, 22/24, 23/2, 23/42, 23/44, 24/34, 25/18, 28/10, 29/2, 29/25, 30/23, 31/39, 31/41, 31/43, 32/36, 32/39,33/71, 33/78, 34/22, 34/30, 35/1, 35/7, 35/16, 35/38, 37/7, 38/7, 38/19), իսկ թվով 36 տեղամասի արձանագրությունների քաղվածքներում քվեարկության մասնակիցների թիվը չի համապատասխանում ԿԸՀ հրապարակած տվյալներին (տեղամասեր՝ 4/9, 6/6, 9/28, 11/8, 12/25, 15/30, 16/3, 16/40, 16/42, 18/1, 19/1, 19/5, 19/15, 20/5, 23/1, 23/40, 25/19, 26/11, 29/18, 29/21, 31/35, 31/59, 32/28, 32/32, 32/65, 33/66, 34/10, 34/27, 34/38, 35/7, 37/73, 38/1, 38/13, 41/3, 41/27, 41/28)
- հիմնական ցուցակով քվեարկության մասնակիցների թիվը բացակայում է թվով 4 տեղամասերի արձանագրություններից (տեղամասեր՝ 21/3, 22/24, 22/30 34/9)

- նույնականացման քարտով քվեարկության մասնակիցների թիվը բացակայում է թվով 69 տեղամասի արձանագրություններից (տեղամասեր՝ 1/36, 2/10, 2/37, 3/6, 4/2, 5/18, 5/22, 6/15, 6/20, 7/2, 7/4, 7/34, 9/14, 10/2, 10/5, 11/25, 12/16, 12/24, 13/1, 17/2, 17/8, 17/10, 18/17, 19/20, 21/3, 21/9, 21/11, 21/14, 21/18, 22/14, 22/24, 23/2, 23/4, 23/8, 23/44, 24/34, 25/18, 25/20, 26/10, 28/8, 28/10, 29/2, 29/25, 31/36, 31/39, 31/43, 32/36, 32/39, 33/71, 33/73, 33/78, 34/2, 34/22, 34/26, 34/27, 34/30, 34/31, 34/40,35/1, 35/7, 35/24, 35/38, 36/33, 37/7, 37/21, 38/7, 38/19, 41/23, 41/24), իսկ 21 տեղամասի արձանագրությունների քաղվածքներում այն չի համապատասխանում ԿԸՀ հրապարակած տվյալներին (տեղամասեր՝ 3/7, 5/15, 8/10, 8/15, 9/14, 11/3, 16/40, 19/5, 23/3, 23/40, 29/25, 32/28, 32/36, 34/3, 34/7, 34/10, 37/13, 37/23, 38/3, 38/13, 41/21)
- հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը բացակայում է թվով 184 տեղամասի արձանագրություններից (1/17, 1/36, 2/1, 2/10, 2/15, 2/22, 3/6, 3/7, 3/20, 3/23, 3/30, 4/2, 4/22, 5/2, 5/13, 5/16, 5/18, 5/19, 5/33, 6/6, 6/25, 6/31, 7/2, 7/14, 7/21, 7/26, 8/8, 8/11, 8/14,8/15, 9/4, 9/13, 9/14, 9/17, 9/21 , 9/28, 10/2, 10/5, 11/28, 11/31, 12/20, 12/26, 12/28, 12/29, 12/32, 12/33, 13/22, 13/27, 13/30, 13/31, 15/30, 17/2, 17/8, 17/10, 18/3, 18/7, 18/12, 19/1, 19/3, 19/8, 19/15, 20/1, 20/4, 20/5, 21/1, 21/3, 21/4, 21/11, 21/12, 22/15, 22/16, 22/22, 22/26, 22/27, 23/1, 23/2, 23/8, 23/11, 23/39, 23/40, 23/42, 24/3,25/1, 25/5, 25/15, 25/27, 26/7, 26/9, 26/10, 26/14, 26/17, 28/6, 28/8, 28/12, 28/14, 28/16, 29/18, 29/27, 30/10, 30/23, 31/1, 31/35, 31/36, 31/37, 31/39, 31/40, 31/43, 31/62, 32/1, 32/39, 33/56, 33/70, 33/75, 33/76, 33/77, 33/78, 33/79, 34/8, 34/9, 34/16, 34/20, 34/23, 34/27, 34/33, 34/35, 34/37, 34/38, 34/39, 34/41, 35/8, 35/16, 35/24, 35/25, 35/26, 35/27, 35/29, 35/31, 35/32, 35/36, 35/38 35/39, 35/41, 35/45, 36/37, 37/2, 37/4, 37/13, 37/15, 37/23, 37/39, 37/44, 37/51, 38/9, 38/11, 38/14, 38/16, 38/20, 38/22, 38/24, 38/30, 38/60, 39/32, 41/21, 41/22, 41/23, 41/24, 41/25, 41/26, 41/27)
- ելունդների հերթական համարները բացակայում են թվով 213 տեղամասերի արձանագրություններից (տեղամասեր՝ 1/2, 1/17, 1/19, 1/22, 1/36, 2/1, 2/10, 2/15, 3/6, 3/7, 3/23, 3/30, 3/33, 4/2, 4/22, 5/2, 5/13, 5/16, 5/18, 5/19, 5/22, 6/6, 6/25, 6/31, 7/2, 7/14, 7/21, 7/26, 8/11, 8/14, 8/15, 8/16, 8/17, 9/4, 9/13, 9/14, 9/16, 9/17, 9/21, 9/28, 10/2, 10/5, 11/25, 11/28, 11/31, 12/20, 12/26, 12/28, 12/29, 12/32, 13/14, 13/22, 13/27, 13/30, 13/31, 15/30, 15/31, 17/2, 17/8, 17/10, 18/1, 18/3, 18/7, 18/12, 19/1, 19/3, 19/8, 19/15, 20/4, 20/5, 21/3, 21/4, 21/11, 21/12, 21/33, 22/14, 22/15, 22/16, 22/22, 22/24, 22/26, 22/27, 23/1, 23/8,23/9, 23/11, 23/39, 23/40, 23/42, 23/44, 24/3, 25/1, 25/2, 25/5, 25/10, 25/15, 25/27, 26/7, 26/9, 26/10, 26/13, 26/14, 26/17, 28/6, 28/8, 28/12, 28/14, 28/16, 28/20, 29/18, 29/28, 30/10, 30/23, 30/30, 31/1, 31/37, 31/35, 31/36, 31/40, 31/41, 31/43, 31/45, 31/62, 32/1, 32/39, 33/56, 33/69, 33/70, 33/75, 33/76, 33/77, 33/78, 33/79, 34/1, 34/3, 34/7, 34/8, 34/9, 34/13, 34/16, 34/20, 34/23, 34/26, 34/27, 34/33, 34/35, 34/37, 34/38, 34/39, 34/41, 35/5, 35/8, 35/16, 35/24, 35/25, 35/26, 35/27, 35/29, 35/31, 35/32, 35/36, 35/38, 35/39, 35/40, 35/41, 35/45, 36/37, 37/2, 37/4, 37/13, 37/15, 37/23, 37/39, 37/40, 37/44, 37/51, 38/6, 38/9, 38/11, 38/14, 38/16, 38/19, 38/20, 38/22, 38/24, 38/30, 38/51, 38/57, 38/60, 39/32, 41/7, 41/21, 41/22, 41/23, 41/24, 41/5, 41/26, 41/27)
- մարված քվեաթերթիկների թիվը բացակայում է թվով 29 տեղամասերի արձանագրություններից (տեղամասեր՝ 7/2, 8/11, 8/14, 9/14, 11/32, 16/7, 17/10,

22/26, 23/2, 28/10, 29/28, 30/7, 31/36, 31/41, 32/1, 32/39, 33/78, 34/10, 34/16, 34/39, 35/8, 35/24, 35/26, 35/28, 37/9, 38/3, 41/24)

- քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը բացակայում է թվով 73 տեղամասերի արձանագրություններից (տեղամասեր՝ 1/21, 2/1, 3/7, 3/20, 4/2, 5/18, 5/24, 6/15, 7/2, 8/8, 8/11, 8/14, 8/16, 9/4, 9/13, 9/14, 12/16, 12/20, 16/40, 16/7, 17/2, 17/10, 19/2, 19/3, 21/9, 21/14, 21/18, 22/9, 22/15, 22/20, 22/28, 23/39, 23/41, 23/42, 25/2, 25/5, 25/17, 25/18, 25/20, 28/6, 28/8, 28/23, 29/28, 30/10, 31/1, 31/36, 31/62, 32/1, 32/28, 32/39, 33/51, 33/70, 33/79, 34/9, 34/16, 34/29, 34/41, 35/16, 35/24, 35/26, 35/29, 35/38, 36/1, 36/5, 36/34, 37/2, 37/15, 37/39, 38/2, 38/3, 38/8, 38/11, 38/20, 38/25, 38/28, 39/32, 41/5, 41/21, 41/24, 41/28), իսկ 24 տեղամասում այն չի համապատասխանում ԿԸՀ հրապարակած տվյալներին (տեղամասեր՝ 2/10, 3/14, 5/2, 5/19, 5/33, 7/4, 7/34, 8/8, 9/4, 11/3, 21/19, 24/5, 24/34, 25/19, 31/13, 32/32, 33/68, 33/79, 34/6, 34/20, 34/27, 34/31, 35/32, 35/38)
- անվավեր քվեաթերթիկների թիվը բացակայում է թվով 1 տեղամասի արձանագրությունից՝ 33/74, իսկ 12 տեղամասում այն չի համապատասխանում ԿԸՀ հրապարակած տվյալներին (տեղամասեր՝ 4/2, 7/28, 9/14, 9/22, 12/16, 16/40, 24/5, 29/36, 34/4, 34/16, 34/27, 37/39)
- «այո» և «ոչ»-ի թվերը չեն համապատասխանում ԿԸՀ-ի հրապարակած տվյալների հետ թվով 6 տեղամասի արձանագրությունների քաղվածքներում (տեղամասեր՝ 12/16, 25/5, 32/32, 34/25, 35/10, 41/23), ընդ որում վերջին երկու տեղամասի «այո» և «ոչ»-ի թվերը հակառակ են ներկայացված:

Համադրելով քաղվածքներում արձանագրված ելակետային տվյալները՝ բացահայտվել են թվաբանական հետևյալ անճշտությունները.

- հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկները թիվը փոքր է հիմնական ցուցակում ընդգրկված ընտրողների թվից թվով 3 տեղամասերում (տեղամասեր՝ 33/78, 35/33, 36/1), իսկ մեկ տեղամասում (տեղամաս 41/6) գերազանցում է ընտրողների ցուցակում ընդգրկվածների ընդհանուր թվի 3%-ը:
- հիմնական ցուցակում և լրացուցիչ ցուցակում ընդգրկվածների թվի գումարը չի համապատասխանում ընդգրկվածների ընդհանուր թվին թվով 1 տեղամասում՝ 41/22:
- ընդգրկվածների ընդհանուր թիվը փոքր է մարված, անվավեր, «այո» քվեարկած, «ոչ» քվեարկած քվեաթերթիկների գումարից թվով 1 տեղամասում (տեղամասեր՝ 37/15)
- մարված, անվավեր, «այո» քվեարկած, «ոչ» քվեարկած քվեաթերթիկների թիվը չի համապատասխանում քվեարկության մասնակիցների թվին թվով 20 տեղամասերում (տեղամասեր՝ 22/20, 33/67, 34/4, 34/31, 35/1, 35/16, 35/25, 35/29, 35/32,35/33, 35/36, 35/38, 35/40, 35/41, 36/27, 37/9, 37/44, 41/3, 41/25)
- մարված, անվավեր, «այո» քվեարկած, «ոչ» քվեարկած քվեաթերթիկների թիվը չի համապատասխանում հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների ընդհանուր թվին թվով 84 տեղամասերում (տեղամասեր՝ 1/13, 1/14, 1/19, 1/21, 1/35, 2/26, 2/31, 2/37, 3/5, 3/35, 4/5, 4/9, 5/15, 6/15, 6/22, 6/33, 7/4, 7/19, 7/34, 8/14, 9/16, 9/23, 10/31, 11/3, 11/8, 11/16, 11/20, 11/35, 12/6, 12/10, 12/21, 12/23, 12/25, 12/37, 13/8, 13/14, 13/37, 19/6, 19/20, 21/18, 22/14, 22/20, 23/5, 23/41, 24/34,25/2, 25/20, 28/18,29/19, 29/36, 30/5, 30/17, 30/30, 31/8, 31/13, 31/53, 31/54, 31/59, 32/66, 33/57, 33/63,

33/66, 33/67, 33/70, 33/79, 34/1, 34/2, 34/3, 34/4, 34/5, 34/6, 34/7, 34/17, 34/21, 34/22, 34/24, 34/29, 34/30, 34/31, 34/34, 34/35, 34/40, 35/1, 35/10, 35/22, 35/29, 35/33, 35/34, 35/36, 35/40, 36/1, 36/35, 36/36, 36/40, 37/9, 38/12, 38/15, 38/27, 41/3, 41/5)

- «այո» քվեարկած, «ոչ» քվեարկած և անվավեր քվեաթերթիկների ընդհանուր գումարը չի համապատասխանում քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների թվին թվով 31 տեղամասերում (տեղամասեր՝ 1/19, 3/6, 3/18, 3/23, 4/9, 5/2, 5/8, 5/19, 5/33, 6/22, 7/4, 9/22, 11/3, 11/16, 12/21, 12/28, 19/6, 22/9, 23/2, 23/3, 25/19, 28/24, 29/18, 29/29, 31/37, 31/47, 33/78, 34/20, 37/44, 41/3, 41/25)
- քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը չի համապատասխանում քվեարկության մասնակիցների ընդհանուր թվին թվով 108 տեղամասերում (տեղամասեր՝ 1/13, 1/14, 1/17, 1/19, 1/22, 1/35, 2/10, 2/15, 2/22, 2/26, 2/31, 3/5, 3/6, 3/18, 3/23, 3/35, 4/1, 4/9, 4/22, 5/2, 5/13, 5/15, 5/16, 5/19, 6/6, 6/22, 6/33, 9/16, 9/22, 9/23, 9/28, 10/31, 11/3, 11/8, 11/28, 11/32, 11/35, 12/21, 12/25, 12/26, 13/8, 13/37, 15/30, 18/7, 19/5, 19/6, 19/15, 20/5, 22/9, 23/5, 24/3, 24/5, 25/19, 25/27, 28/24, 29/36, 30/17, 30/30, 31/6, 31/8, 31/13, 31/25, 31/40, 31/53, 31/54, 33/63, 33/68, 33/72, 34/1, 34/2, 34/6, 34/7, 34/8, 34/12, 34/17, 34/20, 34/22, 34/23, 34/27, 34/29, 34/30, 34/31, 34/34, 34/35, 34/37, 34/40, 35/1, 30/5, 35/7, 35/10, 35/24, 35/25, 35/32, 35/33, 35/36, 35/40, 35/41, 36/35, 36/37, 37/44, 38/12, 38/13, 38/22, 38/27, 41/3, 41/22, 41/27):

Որոշ արձանագրություններում/քաղվածքներում չեն պահպանվել արձանագրությունների վավերապայմանները.

- արձանագրությունը ստորագրած հանձնաժողովի անդամների թիվը բացակայում է թվով 79 տեղամասերի արձանագրություններից (տեղամասեր՝ 1/8, 1/22, 2/1, 2/15, 2/22, 2/37, 3/7, 3/18, 3/33, 4/22, 5/6, 5/24, 5/32, 7/4, 7/21, 7/34, 8/11, 8/14, 8/16, 8/17, 9/17, 9/22, 10/2, 11/8, 11/14, 12/6, 12/26, 16/3, 16/40, 17/8, 18/1, 18/10, 20/1, 20/5, 21/3, 22/20, 22/26, 23/1, 23/2, 23/4, 23/9, 23/39, 23/44, 25/10, 25/20, 28/8, 28/10, 29/9, 30/33, 31/36, 31/41, 32/39, 33/55, 33/62, 33/77, 34/2, 34/9, 34/30, 34/41, 35/8, 35/29, 35/39, 35/41, 35/44, 35/45, 36/33, 37/7, 37/15, 38/5, 38/13, 38/16, 38/20, 38/57, 38/59, 39/32, 41/7, 41/28)
- արձանագրությունը ստորագրված չէ հանձնաժողովի որևէ անդամի կողմից կամ ստորագրված է անբավարար թվով անդամների կողմից թվով 31 տեղամասերում (տեղամասեր՝ 12/23, 23/40, 28/14, 28/18, 29/27, 29/28, 31/1, 32/1, 33/75, 34/10, 34/13, 34/14, 34/15, 34/16, 34/23, 34/28, 34/31, 35/6, 35/8, 35/35, 35/39, 35/40, 35/41, 35/44, 35/45, 36/5, 36/6, 36/33, 37/15, 38/3)
- արձանագրության կնիքը բացակայում է թվով 43 տեղամասերի արձանագրությունների քաղվածքներից (տեղամասեր՝ 1/2, 1/14, 2/28, 2/37, 3/7, 3/20, 3/33, 3/35, 4/5, 5/6, 5/24, 7/26, 11/25, 19/1, 20/1, 21/1, 22/9, 22/16, 22/17, 22/26, 22/27, 22/28, 23/1, 23/2, 23/3, 30/23, 31/40, 31/45, 33/66, 34/6, 34/15, 34/16, 35/7, 35/28, 35/39, 35/40, 36/5, 37/2, 37/44, 38/6, 38/28, 38/51, 38/56)

- արձանագրությունը կազմելու օրը և/կամ ժամը բացակայում է թվով 16 տեղամասերի արձանագրություններից (տեղամասեր՝ 5/32, 10/3, 22/24, 23/2, 31/43, 33/56 33/71, 34/14, 34/15, 34/16, 34/22, 35/6, 35/8, 37/15, 38/20)
- հանձնաժողովի արձանագրությունը ստորագրել է 5-7 անդամ թվով 10 տեղամասերում (տեղամասեր՝ 12/33, 13/22, 13/27, 20/3, 23/1, 23/7, 23/27, 33/35, 33/67, 35/24, 35/28)
- բացակայում է հատուկ կարծիքի առկայության մասին տեղեկությունը կամ այն ստորագրած անդամների թիվը թվով 160 տեղամասերում (տեղամասեր՝ 1/8, 1/19,1/22, 1/35, 2/1, 2/22, 2/31, 2/37, 3/7, 3/18, 4/2, 4/22, 5/6, 5/15, 5/16, 5/18, 5/19, 5/24, 5/32, 6/15, 6/31, 6/33, 7/4, 7/14, 7/21, 8/8, 8/14, 8/17, 9/17, 9/22, 10/2, 10/4, 10/5, 10/17, 10/20, 11/3, 11/14, 11/28, 11/32, 12/6, 12/21, 12/28, 12/29, 16/3, 16/40, 17/8, 17/10, 18/1, 18/7, 18/10, 19/2, 19/3, 19/6, 19/10, 19/20, 20/1, 21/2, 21/3, 21/11, 21/12, 21/14, 22/14, 22/15, 22/18, 22/20, 22/23, 22/24, 22/26, 23/1, 23/2, 23/3, 23/4, 23/6, 23/9, 23/39, 23/40, 23/42, 23/44, 25/10, 25/20, 26/7, 26/13, 28/6, 28/8, 28/10, 28/14, 28/18, 29/2, 29/9, 30/22, 30/33, 31/1, 31/41, 31/42, 31/45, 31/54, 32/1, 32/39, 32/52, 33/56, 32/66 33/63, 33/65, 33/66, 33/72, 33/75, 33/77, 33/79, 34/1, 34/2, 34/3, 34/6, 34/9, 34/21, 34/22, 34/23, 34/27, 34/28, 34/30, 34/31, 34/44, 35/6, 35/8, 35/26, 35/27, 35/29, 35/31, 35/35, 35/39, 35/40, 35/43, 35/44, 36/33, 36/37, 37/7, 37/15, 37/40, 37/51, 38/1, 38/3, 38/5, 38/7, 38/9, 38/10, 38/13, 38/14, 38/16, 38/20, 38/30, 38/51, 38/55, 38/57, 38/59, 39/32, 41/28):

Վերը նշված անհամապատասխանությունների մի շարք փաստերի վերաբերյալ 2015թ. դեկտեմբերի 13-ին ժամը 15:00-ին ՀԿՀ է ներկայացվել դիմում-բողոք/հաղորդում, սակայն դրանք ՀԿՀ-ն հրաժարվում էր ընդունել մինչև ժամը 21:30, որից հետո ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խմբի ներգրավումից և մի քանի ժամ տևած բանակցություններից և հանրաքվեի արդյունքները պաշտոնապես ամփոփելուց հետո հիշյալ և մի քանի այլ դիմում-բողոքներ ընդունեց ՀԿՀ իրավաբանական վարչության պետը, սակայն դրանք հետագայում ամբողջությամբ մերժվեցին առանց ըստ էության քննարկման՝ ձևական պատճառաբանություններով, որոնցից ամենաէականն այն էր, որ հանրաքվեի արդյունքներն արդեն ամփոփվել են:

Փաստացի ստացվում է, որ, մի կողմից, մեծաքանակ խախտումների պարագայում գործնականում անհնար է դրանք հավաքագրելը, վերլուծելը և լիազոր մարմիններին ներկայացնելը օրենքով սահմանված սեղմ ժամկետներում, իսկ, մյուս կողմից, ՀԿՀ-ն պատշաճ ջանադրություն չի գործադրում արձանագրված խախտումներն արդյունավետ քննելու ուղղությամբ: Այդպիսով, կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում չկա ընտրական իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց:

6.6 Վերահաշվարկ

Քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ ՀԿՀ կայքում տեղեկատվության բացակայության պատճառով հնարավոր չի եղել նախապես տեղեկանալ վերահաշվարկվող տեղամասերի, անցկացման վայրի և ժամին մասին և մասնակցել դրան: Վերահաշվարկի վերաբերյալ կցկտուր տեղեկություններ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը ստացել է կուսակցությունների շտաբներից: Մասնակցելով մի քանի ընտրատարածքներում

վերահաշվարկի գործընթացին՝ դիտորդական առաքելության կողմից վեր են հանվել մի շարք ընդհանրական խնդիրներ: Մասնավորապես, վերահաշվարկները հաճախ կազմակերպվել են ՀՀԿ կուսակցության դիմումների հիման վրա, մինչդեռ այդ տեղամասերի արդյունքների ամփոփման արձանագրություններում դրանց կազմման պահին հանձնաժողովների ՀՀԿ-ական անդամների կողմից հատուկ կարծիք ունենալու մասին նշումներ չեն եղել:[93]: Հավանական է, որ արձանագրությունների քաղվածքներում հատուկ կարծիքի վերաբերյալ նշումի բացակայությունը, հնարավորություն է տվել հետագայում, ըստ անհրաժեշտության, նշում կատարել այս մասին՝ հակակշռելով ՀԱԿ-ի ներկայացրած հատուկ կարծիքները ՀՀԿ-ի հատուկ կարծիքներով:

Որոշ դեպքերում վերահաշվարկի վերաբերյալ ՀԱԿ կուսակցության ներկայացուցիչների դիմումները չեն ընդունվել ձևական սխալի տարբեր պատճառաբանություններով: Օրինակ՝ թիվ 11 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովի նախագահին հանձնաժողովի ՀԱԿ անդամի կողմից 2015թ. դեկտեմբերի 8-ին ժամը 17:00-ի սահմաններում ներկայացվել է թիվ 11/22 տեղամասում վերահաշվարկ կատարելու դիմում, սակայն այն չի ընդունվել ՀԸՀ նախագահի կողմից հասցեն ոչ ճիշտ գրված լինելու պատճառով:

Վերահաշվարկի ընթացքում տեղի են ունեցել նաև դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների խախտումներ: Մասնավորապես, չնայած ԸՕ սահմանված հնարավորությանը՝ թիվ 5 և թիվ 14 ընտրատարածքային հանձնաժողովներում թույլ չեն տվել դիտորդներին քաղվածքներ կատարել ընտրողների ստորագրված ցուցակներից: Թիվ 2, 5 և 8 ընտրատարածքային հանձնաժողովներում վերահաշվարկի ժամանակ արձանագրվել են նաև դիտորդների՝ քվեարկության այլ պարագաներին ծանոթանալուն արգելելու և դրանց ու ընթացակարգի այլ խախտումների մասին գրանցամատյանում համապատասխան գրառումներ չկատարելու դեպքեր:

6.7 Բողոքարկում

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում հանրաքվեի գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ընթացքում պարբերաբար անհրաժեշտություն է առաջացել դիմում-բողոքներ ներկայացնել տարբեր լիազոր մարմինների՝ խախտումները վերացնելու և օրենքի պահանջները ապահովելու նպատակով:

Ընդհանուր առմամբ դիմում-բողոքներ է ներկայացվել 202 ընտրատեղամասերի վերաբերյալ, որոնցից 69՝ ԸԸՀ-ներ, 164՝ ԿԸՀ: Թվով 50 դիմում ներկայացվել է ինչպես ԸԸՀ, այդպես էլ՝ ՀԿՀ: ԸԸՀ-ների կողմից կայացրած որոշումները վերադասության կարգով բողոքարկվել են ԿԸՀ, իսկ ԿԸՀ-ի և մի քանի ԸԸՀ-ների որոշումները բողոքարկվել են վարչական դատարան՝ ներկայացնելով 64 հայցադիմում:

Դրանցից ժամանակագրական առումով առաջինը ներկայացվել է ՀԿՀ հենց հանրաքվեի օրը, երբ մոտ երեք տասնյակ տեղամասերում խոչընդոտվել էր «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների աշխատանքը: Մանրամասնորեն նկարագրելով այդ բոլոր տեղամասերում տեղ գտած իրավախախտումները, դիմումով

[93] https://www.youtube.com/watch?time_continue=376&v=2BjT8klF7jo

պահանջ էր ներկայացվել քվեարկության օրվա մնացյալ ընթացքում վերացնել նախաձեռնության դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների աշխատանքը խոչընդոտող խախտումները, քայլեր ձեռնարկել խախտում կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու համար պատասխանատու անձանց օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ և ըստ անհրաժեշտության վերահասցեագրելու քրեաիրավական բնույթի խախտումներն՝ ըստ ենթակայության: Ի պատասխան սույն դիմումի՝ ՀԿՀ նախագահ Տիգրան Մուկուչյանը զանգահարել է դիմումում նշված դիտորդներից մեկին և նենգափոխելով ստացված բողոքի բովանդակությունը ու մոլորության մեջ գցելով՝ համոզել է վերջինիս հրաժարվել իր դիմումից:

Հանրաքվեի հաջորդ օրը՝ դեկտեմբերի 7-ին կազմվել է դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների մոտ 40 լրջագույն խախտումների մասին հաղորդող դիմում-բողոք՝ դրանք ներկայացնելով նախ ՀԿՀ (հաշվի առնելով այն որ ՀԸՀ-ները աշխարհագրական առումով բողոքների ներկայացման համար սահմանված սեղմ ժամկետների պայմաններում անհասանելի էին), իսկ այդ դիմում-բողոքների պատճենները փոստային ծառայության միջոցով ուղարկելով նաև ՀԸՀ-ներ: Դեկտեմբերի 8-11 ընկած ժամանակահատվածում կազմվել և նույն մարմիններին է ներկայացվել ևս 64 դիմում-բողոք: Ի լրումն այս դիմում-բողոքների դեկտեմբերի 11-ին «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը ՀԿՀ է ներկայացրել մեկ ծավալուն հաղորդում, որտեղ նկարագրվել է հանրաքվեի օրը մոտ 100 տեղամասերում տեղի ունեցած շուրջ 170 օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումներ:

2015թ. դեկտեմբերի 11-ին ՀԿՀ ներկայացվել է 44 էջից կազմված դիմում-բողոք՝ հանրաքվեի 150-ից ավելի տեղամասերում «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների՝ դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների կողմից արձանագրված ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ, այդ թվում՝ քվեարկության նկատմամբ վերահսկողության դեպքեր, այլ անձանց փոխարեն քվեարկության, հանրապետությունից բացակայող անձանց փոխարեն քվեարկություն, մահացած անձանց փոխարեն քվեարկություն, միևնույն անձի կողմից բազմակի քվեարկություն, միևնույն անձի անվան տակ բազմակի քվեարկություն, այլ անձանց անձնագրերով քվեարկության փորձեր, հանձնաժողովի անդամների կողմից քվեարկողների ցուցակներում նշումների կատարում, ստորագրությունների և/կամ անհատական դրոշմակնիքներով դատարկ տողերի կնքում, դատարկ տողերում անձնագրային և/կամ նույնականացման քարտերի տվյալների լրացումներ, մեկ անձի կողմից միաժամանակ ներկայացված մեկից ավելի քվեարկության ծրարների կնքում, մեկ անձին մեկից ավելի քվեարկության ծրարներ քվեատուփի մեջ նետելու թույլատվություն, ինքնուրույն (առանց քվեարկողի) քվեարկության ծրարների կնքում և քվեատուփի մեջ նետում, անհատական դրոշմակնիքների, ինչպես նաև տեղամասային հանձնաժողովի կնիքի տեղամասից դուրս բերում, անհատական դրոշմակնիքների փոխանակում հանձնաժողովի անդամների միջև, քվեարկողների ստորագրած ցուցակների առևանգում, քվեատուփերի լցոնման դեպքեր բազմաթիվ տեղամասերում և այլն:

Հիշյալ հաղորդմամբ/դիմում-բողոքով պահանջ էր ներկայացվում ՀԿՀ-ին ի պաշտոնե վարույթ հարուցել և արդյունավետ քննության առնել նշված խախտումները և դրանց ազդեցությունը հանրաքվեի արդյունքների վրա:

Նույն օրը «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը միջնորդություն է ներկայացրել ՀԿՀ-ին՝ հետաձգել հանրաքվեի արդյունքների ամփոփումը և հնարավորություն ընձեռել բոլոր սուբյեկտներին լիարժեք ներկայացնելու իրենց կողմից դիտարկված և հայտնաբերված խախտումները՝ դրանց ազդեցությունը հանրաքվեի արդյունքների վրա գնահատելու նպատակով: Այս միջնորդության անհրաժեշտությունը պայմանավորված էր այն փաստով, որ բողոքներ բերելու համար սահմանված ժամանակահատվածը (քվեարկության հաջորդ օրը ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն) բավարար չէր մինչ քվեարկությունը, քվեարկության ընթացքում և դրանից հետո առաջացած խնդիրները պատշաճ կերպով ներկայացնելու և արդյունավետորեն քննելու համար: Նախաձեռնության կարծիքով, դա ոչ միայն խորացնելու էր հանրության կասկածները հանրաքվեի թափանցիկության և արդարության վերաբերյալ այլ նաև վերացնում էր խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցը: Հիշյալ միջնորդության համար հիմք էր հանդիսացել նաև այն փաստը, որ միայն դեկտեմբերի 11-ին էին ՀԸՀ-երը սկսել գումարել «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կողմիցներկայացված դիմում-բողոքների մասին որոշումներ ընդունելու համար նախատեսված նիստեր:

Դեկտեմբերի 12-ին գումարված նիստի ժամանակ ՀԿՀ-ն մերժեց դիմում-բողոքները և հրաժարվեց վարույթ հարուցել դրանցում նկարագրված փաստերի հիման վրա՝ խախտելով ՀՀ Սահմանադրությունը, վարչրարության հիմունքների և վարչական վարույթի մասին, ինչպես նաև հանրաքվեի մասին օրենսդրության և ԸՕ պահանջները: ՀԿՀ-ն հրաժարվեց անգամ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը ներկայացնող դիտորդներից որևէ մեկին պատշաճ կարգով հարցաքննելուց և լսված լինելու իրավունքի ապահովումից:

Հարուցված վարույթների բացարձակ անարդյունավետության վառ ապացույց էր 5/16 տեղամասում առաքելություն իրականացրած դիտորդի՝ Վարդան Համբարձումյանի, օրինակը, ով պնդում էր, որ ՏՀՀ նախագահ Գուրգեն Ավագյանը քվեարկության ժամանակ գտնվելով տեղամասում հարվածել է իր գլխին: Չնայած այն հանգամանքին, որ իր դիմում-բողոքին կցված էր տեսաձայնագրություն, ՀԿՀ հայտարարեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսաձայնագրության մեջ դիտորդի գլուխը չի երևում, այն չի կարող համարվել որպես ապացույց: Դիտորդի արձագանքն առ այն, որ միջադեպը գրի է առնվել տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում ՀԿՀ կողմից հակադարձվեց գրանցամատյանը ուսումնասիրելու համար ժամանակ չունենալու պատճառաբանությամբ: Այդպիսով ՀԿՀ-ն մերժեց այս դիմում-բողոքը՝ հիմք ընդունելով, որ այդուհանդերձ դիտորդը ի վիճակի է եղել մնալ տվյալ տեղամասում և շարունակել դիտարկել հանրաքվեի ընթացքը: Հետագայում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն ևս մերժեց հիշյալ փաստով քրեական գործ հարուցելը և վերջինիս այս որոշումն այժմ բողոքարկվել է ՀՀ դատախազություն:

ՀԸՀ-երի մակարդակում կայացած վարույթներն էլ ավելի անարդյունավետ էին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովների ներկայացուցիչներ անգամ չեն փորձել վարչական վարույթի պատրանք ստեղծել՝ պարզապես կարդալով ՀԿՀ-ի կողմից ակնհայտորեն նախապես գրված նույնական որոշումները և դիտորդներին ներկայացնող իրավաբաններին բացահայտ կերպով ասելով, որ վերջիններիս միջնորդությունները և փաստարկները լսելու հետաքրքրություն չունեն:

Դեկտեմբերի 13-ին, ժամը 19:00 ՀԿՀ-ն նշանակել էր հանրաքվեի արդյունքներն ամփոփելու նիստը: «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը 13.12.2015թ. սկսած ժամը 15:00-ից փորձել է ՀԿՀ մուտքագրել նոր դիմում-բողոքներ և հաղորդումներ հետազոտված և վերլուծված խախտումների և ձեռք բերած փաստաթղթերի և տեղեկությունների վերաբերյալ, այդ թվում բողոքներ թիվ 2, 3, 6, 12, 21, 25 ընտրատարածքային հանձնաժողովների որոշումների դեմ, որոնք կայացվել էին դեկտեմբերի 11-ին և 12-ին՝ օրենքով սահմանված եռօրյա ժամկետում, սակայն ՀԿՀ աշխատակազմը և անդամները հրաժարվել են ընդունել դրանք: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին ՀԿՀ անդամ Նունե Հովհաննիսյանը բացատրել է, որ դիմում-բողոքը չի ընդունվել, քանի որ կիրակի օրը իրենց աշխատակազմը չի աշխատել, սակայն, այդուհանդերձ, նույն օրը մոտավորապես ժամը 21:30-ի սահմաններում ՀԸՀ իրավաբանական վարչության ղեկավար Լիլիա Հակոբյանն ընդունել է դիմում-բողոքները:

Դեկտեմբերի 6-ին և դրան հաջորդած ժամանակահատվածում վերը նշված գործողությունների, անգործության և որոշումների հետ կապված ՀԿՀ և ՀԸՀ- ների դեմ շուրջ 63 հայցադիմումներ են ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան, որոնց մի մասը վերադարձվել է և պետք է կրկին ներկայացվի, մի մասը մերժվել է վարույթ ընդունելության փուլում և պետք է բողոքարկվի վերաքննության կարգով:

Դեկտեմբերի 18-ին «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում գործող հինգ կազմակերպություն, դիտորդներ, ՁԼՄ ներկայացուցիչներ, ինչպես նաև մի խումբ ՀՀ քաղաքացիներ նույն նախաձեռնության շրջանակներում գործող իրենց ներկայացուցիչների միջոցով դիմում են ներկայացրել ՀՀ ՍԴ: Վերջինիս աշխատակազմի ղեկավարը չունենալով նման լիազորություն հրաժարվել է առձեռն ընդունել դիմումը: Սակայն «Քաղաքացի Դիտորդ» նախաձեռնության փորձի հաշվառմամբ ՍԴ ներկայացման ենթակա դիմումն ուղարկվել էր նաև փոստային ծառայության միջոցով նախապես: Հիշյալ դիմումի կապակցությամբ ՍԴ աշխատակազմի ղեկավար Առուշան Հակոբյանը որոշում էր կայացրել դրա ընդունելիությունը մերժելու վերաբերյալ, որն այնուհետև բողոքարկվել էր ՍԴ նախագահ և սահմանադրության փոփոխությունների ակտիվ մասնակից և քարոզիչ Գ.Հարությունյանին, ինչի արդյունքում ներկայացված բողոքը ևս մերժվել է:

6.8 Իրավապահ մարմինների արձագանքը

Հանրաքվեի օրը «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամների իրավունքների սահմանափակման և նրանց նկատմամբ ճնշումների դեպքերով համակարգող կենտրոնը բանավոր հաղորդումներ է ներկայացրել ՀՀ ոստիկանություն՝ խախտումները վերացնելու և դիտորդների ու ՁԼՄ ներկայացուցիչների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով միջոցներ ձեռնարկելու համար: Սակայն ոստիկանությունն իրավախախտումները և իրավախախտներին բացահայտելու փոխարեն դիտորդներին և ՁԼՄ ներկայացուցիչներին բերման էր ենթարկում ոստիկանության բաժիններ՝ նրանց հեռացնելով համապատասխան տեղամասերից՝ լրացուցիչ խոչընդոտներ ստեղծելով դիտորդական առաքելության իրականացման համար:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կողմից արձանագրված և ԹԻՀԿ կայքում հրապարակված ընտրախախտումները հընթացս լուսաբանվել են ՁԼՄ-ներով, ուստի,

քրեադատավարական օրենսդրության համաձայն, դրանք համարվել են հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումներ և հիմք են հանդիսացել իրավապահ մարմինների կողմից ընտրակեղծիքների փաստերով նյութեր նախապատրաստելու համար: Վերոնշյալ, ինչպես նաև ընտրական այլ խախտումների վերաբերյալ 2015թ. դեկտեմբերի 10-ին հայտարարություն է տարածել ՀՀ գլխավոր դատախազությունը, որում, մասնավորապես, ասված է. *«ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչության, հանրաքվեի և դրան հաջորդող գործընթացների շրջանակներում ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացմանը խոչընդոտելու վերաբերյալ ահազանգերին՝ դատախազության լիազորությունների շրջանակում պատշաճ իրավական գործընթաց իրականացնելու նպատակով ՀՀ դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի կողմից դեկտեմբերի 9-ի դրությամբ ուսումնասիրվել է 446 տարբեր բնույթի տեղեկատվություն (ՁԼՄ-ների և ՀԿ-ների հրապարակումներ, նաև քաղաքացիների ահազանգեր և գրավոր դիմումներ): Դրանցից 420-ը պարունակել են առերևույթ հանցագործության հատկանիշների մասին տվյալներ, որոնք ուղարկվել են ըստ ենթակայության՝ հետաքննական և նախաքննական մարմիններին՝ նյութեր նախապատրաստելու նպատակով, իսկ 16 հրապարակում ուղարկվել է ՀՀ Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ՝ ստուգողական գործողություններ իրականացնելու նպատակով: 10 դեպքով հարուցվել է քրեական գործ»:*

Թեև իրավապահ մարմինները դեռևս շարունակում են գործերի քննությունը, սակայն չի նկատվում առանձնակի ցանկություն բուն ընտրակեղծիքների փաստերով նյութեր նախապատրաստելու և դրանք բացահայտելու ուղղությամբ: Ավելին, դիտորդի իրավունքների խախտման փաստերով նյութերի նախապատրաստման ընթացքում քրեական գործեր են հարուցվել հենց դիտորդների դեմ՝ հանձնաժողովի աշխատանքերին խոչընդոտելու մեղադրանքով, օրինակ՝ թիվ 4/1 և 9/15 տեղամասերի գործով:

6.9 Նորարարական գործիքների կիրառման արդյունքները

Ի լրումն վերոնշյալ խնդիրների, հանրաքվեի վերահսկողության նորարարական մեթոդների կիրառման արդյունքում բացահայտվել է հետևյալը.

- Ընտրական թվերի էլեկտրոնային մոնիտորինգը բացահայտել է բազմաթիվ անհամապատասխանություններ, որոնք հարցականի տակ են դնում ընտրացուցակների արժանահավատությունը և կասկած են հարուցում դրանց չարաշահման վերաբերյալ: Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ Հայաստանի մշտական բնակչության թվաքանակը 2015 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ 3,004,000 է[94]: Միևնույն ժամանակ, ըստ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տրամադրած ցուցակների՝ 2015 թ. դեկտեմբերի 5-ի դրությամբ ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը կազմում է 2,550,323[95]: Սա նշանակում է, որ Հայաստանի մշտական բնակչության գրեթե 84.9%-ը ընտրողներ են, մինչդեռ մյուսները չափահաս չեն՝18 տարեկանից փոքր են և դեռևս ընտրելու իրավունք չունեն: Սա շատ ավելի մեծ թիվ

[94] http://armstat.am/file/article/bnakch_09_15.pdf
[95] http://www.police.am/news/view/hn51221.html

է, քան «Հայաստանի Ժողովրդագրական ժողովածու 2015 թ.»-ի ներկայացրած 77%-ը[96]:

Նշված առաջին երկու աղբյուրների թվերը համեմատելիս՝ պարզվում է, որ ընտրողների թվաքանակը շատ մարզերում և բնակավայրերում գերազանցում է մշտական բնակչության թվաքանակին: Դրանց թվում են՝ Լոռու մարզը, ուր (248,974 ընտրողները կազմում են մշտական բնակչության 226,200 թվաքանակի 105.24%-ը), Գյումրի (125,695 ընտրողները կազմում են մշտական բնակչության 117,700 թվաքանակի 106.79%-ը), Վանաձոր քաղաքները (96,656 ընտրողները կազմում են մշտական բնակչության 82,400 թվաքանակի 117.3%-ը), և այլ բնակավայրերը (ինչպիսիք են Ջերմուկը, Բերդը, Շամլուղը, Ագարակը, Ախթալան, Տաշիրը, Սպիտակը, Ստեփանավանը, Ալավերդին, Չարենցավանը, Հրազդանը, Սևանը, Գավառը, Մեծամորը, Արմավիրը, Արտաշատը, Թալինը և Աշտարակը):

Նման անհամապատասխանությանը ՀՀ ոստիկանության կողմից բացատրվում է նրանով, որ ընտրողների ցուցակը մշակվել է ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկվածների թվի համապատասխան և պարունակում է Հայաստանից արտագաղթած քաղաքացիների անունները, որոնք չեն հետևել գրանցումից դուրս գալու պահանջներին: Չնայած այն հանգամանքին, որ այս հիմնախնդիրը քննադատության է արժանացել դեռևս 2012-2013թթ. համապետական ընտրություններում, հարցականի տակ դնելով ընտրական գործընթացների և ընտրությունների արդյունքների լեգիտիմությունը, քայլեր չեն ձեռնարկվել օրենսդրությունը բարելավելու, անհամապատասխանություններն ուղղելու և հանրային վստահությունը բարձրացնելու համար:

Բացակա ընտրողների անունների հնարավոր չարաշահման ցուցիչներից մեկը մասնակցության ուռճացված թվերն են: Համաձայն ՀԿՀ-ի պաշտոնական տեղեկատվության, որ հիմնված է 3 ժամը մեկ տեղամասային հանձնաժողովների տրամադրած հաղորդումների վրա[97], 101 տեղամասերում քվեարկելու համար գրանցման տևողությունը տարբեր ժամանակահատվածներում գերազանցում է 44 վայրկյան/անձ-ը, որը նվազագույնն է՝ ըստ էլեկտրոնային մոնիտորինգի թիմի կողմից 2012-2013թթ. համապետական ընտրությունների ժամանակ կատարված փորձարկումների[98]:

Սահմանադրական հանրաքվեի էլեկտրոնային մոնիտորինգի վերաբերյալ լրացուցիչ արդյունքներն առկա են առցանց ինտերակտիվ շտեմարանում[99]:

- «Վերահսկիր հանրաքվեն» կայքում մուտքագրված 12037 ընտրողների և տեղամասերում գտնվող դիտորդների ու ՁԼՄ ներկայացուցիչների դիտարկման արդյունքների համադրությամբ վեր են հանվել բացակա անձանց մասնակցության հավանական կեղծարարության դեպքեր: Այսպես, բացահայտվել է 421 դեպք, երբ

[96] http://armstat.am/file/article/demog_2015_2.pdf
[97] http://www.elections.am
[98] http://transparency.am/en/publications/view/87
[99] http://elections.transparency.am/2015/index.php?am_distribution-depends-participation,53

կայքում գրանցված՝ Հայաստանից դուրս կամ Հայաստանում գտնվող, սակայն քվեարկությանը չմասնակցող անձանց հաշվառման վայրի տեղամասերում նրանց հերթական համարների տակ կատարվել է քվեարկություն: 33 դեպքում ընտրողները քվեարկության գալով՝ պարզել են, որ իրենց փոխարեն արդեն քվեարկել են: Երկու դեպքում կատարվել է քվեարկություն մահացած անձանց փոխարեն: Հարկ է նշել, որ շուրջ 105 տեղամասերից հավաքված տվյալների մի մեծ խումբ (մոտ 36.864) դեռևս չի մուտքագրվել և վերլուծվել:

- Հանրաքվեի պաշտոնական տվյալների վիճակագրական վերլուծությունը ցույց է տվել մի շարք աղաղակող անկանոնություններ (անոմալիաներ), որոնցից հատկապես հիշարժան են՝
    - մասնակցության ցուցանիշների աճին զուգահեռ «այո» քվեների համամասնության աճը,
    - խիստ անհավասար մասնակցության միտումներ հանրապետության մակարդակում՝ այն պայմաններում, երբ «ոչ»-ի արդյունքները համադրելի են,
    - առանձին ընտրատարածքների մակարդակում «այո» քվեաթերթիկների էականորեն փոքր համամասնություն այն տեղամասերում, որտեղ առկա են եղել «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության ներկայացուցիչները:

Վիճակագրական վերլուծության ամփոփումը ներկայացված է Հավելված 1-ում:

- Միջազգային դիտորդական առաքելությունների վերլուծությունը ցույց է տվել, որ որոշ առաքելությունների մասնակցությունը եղել է ձևական և կոչված է եղել պարզապես լեգիտիմացնելու սահմանադրական հանրաքվեն: Վեց դիտորդական առաքելություններից միայն 2-ի դեպքում է հնարավոր եղել ծանոթանալ դիտարկման մեթոդաբանությանը: Մի խումբ դիտորդներ, որոնք ներկայացրել են ԱՊՀ դիտորդական առաքելությունը, ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը և Ռուսաստանի Դաշնության ԿԸՀ-ն ներկայացուցիչների պատվիրակությունը, խախտելով ընտրությունների միջազգային դիտորդության սկզբունքներն ու չափանիշները, հանրաքվեի օրը քվեարկության օրվա ընթացքում դրական են գնահատել քվեարկության ընթացքը:

Միջազգային դիտորդական առաքելությունների վերլուծության ամփոփումը ներկայացված է Հավելված 2-ում:

7 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լայնամասշտաբ դիտորդական առաքելության արդյունքում վերհանված փաստերի և բազմաթիվ ապացույցների հիման վրա կարելի է հավաստել, որ 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն իրականացվել է վերջին տարիների համար աննախադեպ մեծածավալ և բազմազան խախտումներով ու կեղծիքներով, ներառյալ՝ ընտրակաշառքներ, քվեարկության գաղտնիության ոտնահարումներ,

ահաբեկումներ, բռնություններ, քվեատուփի լցոնումներ, կրկնաքվեարկություններ, հաշվարկի ընթացքում քվեարկության արդյունքների նենգափոխումներ և այլն:

Դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների դեմ հանրապետության տարածքով մեկ կիրառվել են ահաբեկումներ և հաճախ ստեղծվել անհաղթահարելի խոչընդոտներ, ինչի արդյունքում հանրային հսկիչների մի մեծ զանգված չի կարողացել իրականացնել իր գործառույթները, հետևաբար հանրությունը զրկվել է հանրաքվեի նկատմամբ իրական և արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից և իրավունքից:

Իրավախտումներն առնվազն «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կողմից դիտարկված տեղամասերում ունեցել են այնպիսի լայն տարածում, որ լուրջ կասկածներ են հարուցում ընտրողների կամքի ազատ ձևավորման հնարավորության, արտահայտման և արձանագրման առումով: Ինչ վերաբերում է հանրաքվեի արդյունքներին, թերևս միայն քվեատուփերի համատարած լցոնումներն ու հաշվարկի ընթացքում արդյունքների կեղծման բազմաթիվ փաստերն արդեն իսկ ավելի քան բավարար հիմք են պնդելու, որ ՀԿՀ կողմից հայտարարված արդյունքները չեն արտացոլում քվեարկության իրական պատկերը:

Խախտումների և կեղծիքների համընդհանուր և միատիպ լինելը, ինչպես նաև դրանց նկատմամբ նույնական արձագանքը կամ պատշաճ արձագանքի բացակայությունը թե՛ ընտրական վարչարարությամբ զբաղվող՝ բոլոր երեք մակարդակի հանձնաժողովների, թե՛ իրավապահ մարմինների և թե՛ դատական համակարգի կողմից վկայում են դրանց համակարգված և մեկ կենտրոնից կազմակերպված և ուղղորդված լինելու մասին, ինչպես նաև՝ նշված ինստիտուտների կողմից քաղաքական պատվեր կատարելու և, այդպիսի պայմաններում, իրենց օրինական գործառույթները իրականացնելու անկարողության մասին:

Հանրաքվեն հաստատորեն ապացուցեց, որ վերջին համապետական ընտրություններից հետո տարբեր դիտորդական միջազգային կառույցների կողմից հնչեցված լավատեսական հայտարարությունները ընտրական գործընթացների բարելավման մասին անհիմն են և մտացածին: Իրականում, Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացներում չի արձանագրվել և ոչ մի առաջընթաց, և, չնայած միջազգային պարտավորությունների պահպանման տարբեր իմիտացիաներին ու արտասահմանյան աջակցության շարունակական սպառմանը (հատկապես ֆինանսական աջակցության), երկրի իշխանությունները, «անհրաժեշտության» դեպքում, պատրաստ են օգտագործել խախտումների և կեղծիքների ողջ զինանոցը՝ ցանկալի արդյունքի հասնելու կամ այդպիսին արձանագրելու համար: Այսպիսի գնով սահմանադրություն փոխելը վերջնականապես ու լիովին հաստատեց հանրության շրջանում նախապես տարածված այն մտայնությունը, որ դա «կենաց ու մահու» պայքար էր և սահմանադրական հանրաքվեն քաղաքական օրակարգ էր ներմուծվել բացառապես մեկ նպատակով՝ ապահովելու Սերժ Սարգսյանի և նրա ղեկավարած ՀՀԿ տևական վերարտադրության հիմքերը:

2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն չի համապատասխանել Վենետիկի հանձնաժողովի *Հանրաքվեների օրինակելի պրակտիկայի կանոնագրքով* ամրագրված նորմերին, ինչպիսիք են ընտրացուցակների արժանահավատությունը, հավասար ընտրական իրավունքների ապահովումը, կարծիք ձևավորելու և ազատ կամարտահայտման երաշխավորումը, պատշաճ դիտարկման

հնարավորությունը և արդյունավետ բողոքարկման համակարգը: Այդպիսով, կարելի է պնդել, հանրաքվեի արդյունքները չեն արտացոլում ՀՀ քաղաքացիների կամքը, դրանք զգալի մասով պարտադրված ու կեղծված են, ուստի անցկացված հանրաքվեն և դրա արդյունքում ընդունված փաստաթուղթը լեգիտիմ չեն:

8 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կողմից իրականացված դիտորդական առաքելությունը վեր հանեց մի շարք համակարգային բնույթ կրող խնդիրներ, որոնք պատճառ են թե ընտրական օրենսդրության անկատարության, թե շատ դեպքերում ընտրական իրավունքի պաշտպանության, ազատ և արդար ընտրությունների/հանրաքվեի ապահովման խախտումների արդյունավետ քննություն իրականացնելու ցանկության և կամքի բացակայության:

Ընտրողների կամքի ազատ արտահայտման համար անհրաժեշտ հիմքեր և պատշաճ ընտրական գործընթացներ ապահովելու համար անհրաժեշտ է, որ առանձնակի ուշադրության արժանանան և արմատական լուծում ստանան առնվազն հետևյալ առանցքային խնդիրները:

8.1 Ընտրողների ցուցակների հրապարակայնություն.

Ընտրողների ցուցակների կազմման և վարման ներկայիս իրավակարգավորումները՝ մի կողմից իրենց ընտրական իրավունքի իրականացումից փաստացիորեն զրկված արտասահմանում գտնվող հարյուր հազարավոր քաղաքացիների տվյալների ներառումը և մյուս կողմից ընտրողների ստորագրված ցուցակներին ծանոթանալու արգելքը հանդիսանում են ընտրական կեղծիքների իրականացման հիմնական և կարևորագույն գործիքը, քանի որ ժողովրդի քվեի համընդհանուր կեղծման արդյունավետությունը պայմանավորված է ցուցակներում առկա և քվեարկությանը չմասնակցած մարդկանց քանակով: Այս անձանց փոխարեն քվեարկում են ուրիշները, այդ թվում՝ հենց հանձնաժողովի անդամները՝ լրացնելով ընտրացուցակում նրանց անունների համապատասխան տողերը և լցոնելով քվեատուփերը, կամ նրանց թիվն ուղղակի ընդգրկվում է հաշվարկի մեջ՝ կեղծելով քվեարկության փաստացի մասնակցությունը և արդյունքները: Ընտրողների ցուցակների էլեկտրոնային մոնիտորինգի արդյունքում բացահայտված ուռճացված թվերը, դիտորդության արդյունքում փաստված կրկնակի և ուրիշի փոխարեն քվեարկությունների բազմաթիվ դեպքերը, որոշ լրացուցիչ ցուցակների կասկածելի մեծ ծավալները և այս համատեքստում՝ տեղամասային հանձնաժողովների կողմից դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների նկատմամբ կիրառվող՝ ընտրողների ցուցակներին նույնիսկ մոտ գալու արգելքները յուրաքանչյուր հաջորդ ընտրական գործընթացի ժամանակ ընդամենն ամրապնդում են այդ համոզմունքը:

Քանի դեռ ընտրողների ստորագրված ցուցակները մնում են գաղտնի, քաղաքացիների իրական մասնակցության տվյալները ստուգման և համադրման չեն կարող ենթարկվել, ինչն իշխանությունների նկատմամբ ծայրահեղ ցածր վստահության ֆոնին շարունակելու է

բացասական ազդեցություն ունենալ ցանկացած ընտրական գործընթացի հանրային ընկալման և դրա արդյունքների արժանահավատության վրա: Այդպիսով, ընտրողների ստորագրված ցուցակների գաղտնազերծումը օրվա հրամայական է և չունի այլընտրանք:

Հարկ է շեշտել, որ ընտրական համակարգի փոփոխության ու կատարելագործման և ոչ մի գործընթաց կամ մեխանիզմ չի կարող համարվել դրական, քանի դեռ հնարավորություն չի ընձեռվել քաղաքացիներին անձամբ վերահսկել իրենց, իրենց հարազատների և ծանոթների մասնակցությունը ընտրություններին ու հանրաքվեներին:

Այսօր, Հայաստանում առկա է թե փաստացի, թե օրենսդրության մակարդակով ստեղծված իրավիճակ, որն առավելապես պաշտպանում է քվեարկությանը չմասնակցողների իրավունքները, քան քվեարկությանը մասնակցողներինը և վերջիններիս կատարած ընտրությունը: Հաշվի առնելով ընտրակեղծիքների և խախտումների ծավալը և դրանց դեմ պայքարողների՝ քաղաքացիական հասարակության, դիտորդական առաքելությունների, մարդկային և նյութական խիստ սահմանափակ ռեսուրսի, ինչպես նաև կեղծիքների և խախտումների բացահայտման և դրանց վերաբերյալ հաղորդումների, դիմում-բողոքների ներկայացման համար սահմանված անողջամիտ և ոչ մի իրավաչափ նպատակով չհիմնավորված խիստ սահմանափակ և անբավարար ժամկետները, ընտրողների ստորագրված ցուցակները պետք է քվեարկության ավարտից հետո հրապարակայնացվեն և հասանելի դարձվեն հանրությանը էլեկտրոնային տարբերակով և որոնման հնարավորությամբ, որպեսզի հանրության լայն շերտերի միջոցով հնարավոր լինի վերահսկել երկրից բացակայող և մահացած անձանց փոխարեն քվեարկության ապահովման արատավոր գործընթացը:

Նույնականացման քարտերով քվեարկությունը թույլատրելու և դրանք չդրոշմակնքելու իրավակարգավորումների արդյունքում էապես տուժեց կրկնաքվեարկության բացառմանն ուղղված հիմնական երաշխիքներից մեկը՝ անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքումը: Ուստի, հաշվի առնելով հայաստանյան արատավոր պրակտիկան՝ անհրաժեշտ է ստեղծել նոր մեխանիզմ, որը բավարար չափով կերաշխավորի կրկնակի քվեարկության հնարավորությունը և կվերականգնի խախտված հսկելիությունը: Որպես հնարավոր միջոցներ կարելի է դիտարկել և քննարկել տարբեր երկրներում առկա հսկողության մեխանիզմները:

8.2 Վարչական ռեսուրսի օգտագործման արգելում և պատժում

Հայաստանում տեղի ունեցող բոլոր ընտրական գործընթացներում կարևորագույն լծակ է նաև վարչական ռեսուրսը: ՀՀ ընտրական օրենսդրությունը լիարժեք չի սահմանափակում ընտրական գործընթացներում հանրային իշխանություն իրականացնող անձանց միջոցով վարչական ռեսուրսի կիրառումը, ինչի արդյունքում մրցակցող շահերի և կողմերի հավասարությունն էապես խախտվում է հօգուտ իշխանական դիրքերից հանդես եկողների կամ նրանց կողմից քարոզվող հարցի, իսկ այն բացառիկ դեպքերում երբ ընտրական օրենսդրությունը նախատեսում է վարչական ռեսուրսի չարաշահումը կանխարգելող որոշակի սահմանափակումներ պաշտոնյաների համար, ապա դրանք անարդյունավետ են և մնում են դեկլարատիվ նորմեր, քանի որ հավասարակշռված չեն համապատասխան և համաչափ պատասխանատվությամբ՝ օրենսդրությամբ: Օրինակ «Վարչական

իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով պատժամիջոցներ սահմանված են միայն քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից քարոզչություն կատարելու կամ քարոզչության կարգի այլ խախտումների համար, իսկ քարոզչություն անելու իրավունք ունեցողներին, փաստորեն, թույլատրվում է անարգել կերպով օգտագործել պաշտոնական դիրքով պայմանավորված վարչական ռեսուրսը և դրա միջոցով առնվազն ազդել ընտրողների կամքի ձևավորման և ազատ կամարտահայտման վրա:

Հարկավոր է վերացնել օրենքի բացերը, նախատեսել առավել արդյունավետ և խիստ սահմանափակումներ և պատասխանատվության ենթարկել կուսակցական կամ այլ մասնավոր շահին սպասարկելու նպատակով պետական/վարչական ռեսուրսի ցանկացած օգտագործման դեպք:

8.3 Ընտրական վարչարարության բարելավում

Ընտրական գործընթացի բոլոր փուլերում ականատես լինելով բազմաթիվ աղաղակող խախտումների, ինչպես նաև համոզվելով, որ դրանց իրականացումը հնարավոր է դարձել ընտրական բոլոր մակարդակների հանձնաժողովների թողտվությամբ, առանձին դեպքերում՝ գործուն մասնակցությամբ կամ առնվազն անգործությամբ, կարելի է պնդել, որ ընտրական հանձնաժողովների ձևավորման ներկա կարգավորումները հնարավորություն չեն ընձեռնում արդյունավետ և օրենքով սահմանված կարգով իրականացնել ընտրական վարչարարություն լիարժեք ապահովելով ընտրական իրավունքի պաշտպանություն դրա բոլոր բաղադրիչներով հանդերձ:

Անհրաժեշտ է ամբողջովին վերանայել հանձնաժողովների ձևավորման և գործունեության համակարգը՝ նվազագույնի հասցնելով քաղաքական և այլ կախվածությունները, բարձրացնելով պատասխանատվությունը և մասնագիտական որակավորումը:

8.4 Բողոքարկման գործընթացների արդյունավետության երաշխավորում

Բողոքարկման սահմանված գործընթացների և դրանց կիրարկման պրակտիկայի անարդյունավետությունը փաստացի անհնարին է դարձնում ընտրական վեճերը իրավական ճանապարհով լուծելու հնարավորությունը և ընտրական իրավունքի պաշտպանությունը: Արդյունքում վերհանված խախտումների և կեղծիքների կապակցությամբ չի իրականացվում արդյունավետ քննություն, հնարավոր չի լինում գնահատել դրանց ազդեցությունը ընտրությունների կամ հանրաքվեների արդյունքների վրա, ինչը խորացնում է կասկածները և անվստահությունը գործընթացների թափանցիկության և արդարության վերաբերյալ: Խախտումների ու կեղծիքների մեջ ներգրավված դերակատարները մնում են անպատիժ, ինչը խրախուսում է ապօրինությունների հետագա կրկնությունը և անպատժելիությունը: Աճում է քաղաքացիների անվստահությունն ինչպես ընտրական համակարգի նկատմամբ, այնպես էլ դրա միջոցով խնդիրների լուծման և իշխանության փոփոխության հնարավորության նկատմամբ, ինչը ստիպում է փնտրել օրինական դաշտից դուրս լուծումներ՝ ստեղծելով վտանգներ իրավական պետության կառուցման ճանապարհին:

Առանցքային նշանակություն ունի բողոքարկման գործուն ընթացակարգի ստեղծումը, որտեղ անհրաժեշտ, թեև ոչ բավարար քայլերը պետք է ներառեն դիմում-բողոքներ և

հաղորդումներ ներկայացնելու ժամկետների երկարաձգումը, այդպիսի իրավունք ունեցող սուբյեկտերի ցանկը պետք է ընդլայնվի այնպես որ բոլոր շահառուների ընտրական իրավունքը հնարավոր լինի արդյունավետորեն պաշտպանել, ինչպես նաև արդյունքների վերջնական հաստատման ժամկետների հետաձգումը՝ մինչև վեճերի արդյունավետ լուծումը, կամ այդ ժամկետների համաչափ երկարաձգումը, ինչը հնարավորություն կընձեռնի ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության:

8.5 Դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների իրավունքների ընդլայնում

Անգամ գոյություն ունեցող սահմանափակումների և համակարգային բացթողումների պայմաններում թե՛ գիտական հետազոտությունները[100] և թե՛ առկա փորձառությունը փաստում են, որ դիտորդները և ՁԼՄ ներկայացուցիչները կարող են դրական ազդեցություն ունենալ ընտրական գործընթացի որակի վրա, որը հիմնականում դրսևորվում է ընտրական խախտումները և կեղծիքները բացահայտելու, կանխելու, փաստագրելու, լուսա-տեսանկարահանելու և հանրությանը, ինչպես նաև լիազոր մարմիններին ներկայացնելու եղանակով:

Առավել արդյունավետ ընտրական գործընթացներ ապահովելու նպատակով դիտորդներին և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերություններին նախ պետք է ընձեռվի հնարավորություն՝ իրավունք՝ արձանագրելու ընտրական գործընթացի վերաբերյալ իրենց կողմից հայտնաբերված խախտումներն ու կեղծիքները ընտրական պաշտոնական փաստաթղթերում, այնուհետև բողոքարկելու քվեարկության գործընթացում տեղ գտած խախտումներ և կեղծիքների կապակցությամբ պետական մարմինների ընդունված որոշումները կամ անգործությունը: Դիտորդական կազմակերպությունները, որոնք ստանձնում են պատասխանատվություն իրենց դիտորդների համար, պետք է նաև իրավունք ունենան դատական կարգով պաշտպանել նրանց ոտնահարված իրավունքները:

Հատկապես ուշագրավ է այն, որ հանրաքվեի պարագայում Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի պաշտպանության հարցով սահմանադրական արդարադատություն փաստացի կարող է հայցել ընդամենը երեք սուբյեկտ՝ ՀՀ նախագահը, ԱԺ-ն կամ ԱԺ պատգամավորների 1/5-րդը, ինչն, ինչպես ցույց տվեց փորձն, ուղղակի անհնարին է դարձնում հանրաքվեի շրջանակներում ընտրական իրավունքի պաշտպանությունը ՍԴ-ի միջոցով:

Պետք է վերանայվեն դիտորդների ստուգարքի պահանջները՝ թեթևացնելով ինչպես դիտարկում իրականացնող հասարակական կազմակերպությունների, այնպես էլ ԿԸՀ կողմից անհիմն կերպով ստանձնվող բեռը, և դիտորդության որակի պատասխանատվությունը դրվի միայն համապատասխան դիտորդական առաքելության վրա:

[100] Հենց Հայաստանում դիտորդների ունեցած ազդեցության խնդրին նվիրված վերջին տարիներին հրապարակված գիտական աշխատանքներից են՝ Hyde, Susan D. (2011), "*The Pseudo-democrat's Dilemma: Why Election Observation Became an International Norm"*, Cornell University Press. Ithaca; Hyde, Susan D. (2007) "*The Observer Effect in International Politics: Evidence from a Natural Experiment."* World Politics 60(1): 37-63; Bader Max and Scheemts (2014) "*Is international election observation credible? Evidence from Organization for Security and Co-operation in Europe missions"* Research and Politics 1(6); Փոլիսի Ֆորում Արմենիա, Հայաստանի 2012 խորհրդարանական ընտրությունները՝ http://www.pf-armenia.org/document/armenians-2012-parliamentary-election, pp. 34-35.

Միջազգային դիտորդներին հրավիրելու իրավասությունը պետք է տրվի ոչ միայն պետական, այլև հասարակական կառույցներին, ինչը միանշանակորեն կնպաստի զուգահեռ գործակցությունը ներպետական և արտասահմանյան ինչպես նաև միջազգային ոչ պետական կազմակերպությունների միջև հզորացնելով Հայաստանի քաղաքացիական հասարակությունը և նպատելով ժողովրդավարական գործընթացների զարգացմանը:

8.6 Հանրային վերահսկողության հնարավորությունների ընդլայնում

Ի լրումն 8.1 կետում նշված ընտրացուցակների հրապարակայնության ապահովման պահանջի, ինչը հնարավորություն կտա քաղաքացիներին ստուգել քվեարկության փաստացի մասնակիցների ցանկը և հավաստիանալ ընտրացուցակների և մասնակցության պաշտոնական թվերի արժանահավատության մեջ, հարկավոր է ողջ շահագրգիռ հանրության համար առավել վերահսկելի դարձնել բուն քվեարկության գործընթացն՝ ապահովելով շուրջօրյա տեսանկարահանում տեղամասի ներսում ու դրսում և առցանց հեռարձակում: Այս կանխարգելիչ մեխանիզմը կնպաստի ընտրախախտումների բացառմանը և կբարձրացնի հանրային վստահությունն ընտրությունների նկատմամբ:

9 ԱՄՓՈՓՈՒՄ

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը հույս է հայտնում, որ սույն զեկույցում ներկայացված խնդիրները կարժանանան թիրախային շահագրգիռ կողմերի ուշադրությանը: Մասնավորապես, ակնկալվում է, որ՝

- քաղաքացիները կկարևորեն դիտորդական առաքելության դերն ու նշանակությունը, կմասնակցեն միջազգային ստանդարտներին համապատասխանող ազատ և արդար ընտրական համակարգի ստեղծման նկատմամբ հանրային պահանջարկի ձևավորմանն ու կստանձնեն որոշակի անձնական պատասխանատվություն ընտրական գործընթացները վերահսկելու ուղղությամբ.
- համապատասխան պետական մարմինները պատշաճ ընթացք կտան սույն զեկույցում մատնանշված խախտումներին ու կեղծիքներին, իսկ ընտրական օրենսդրությունն ու պրակտիկան վերանայելիս՝ կձեռնարկեն միջոցներ վերացնելու մատնանշված համակարգային խնդիրները.
- քաղաքական կուսակցություններն ընտրական համակարգի բարեփոխումների ջատագովության գործընթացում իրենց նեղ կուսակցական շահերը հետապնդելուց զատ կպաշտպանեն առավելապես ՀՀ քաղաքացիների, դիտորդական կազմակերպությունների ու ՁԼՄ շահերը՝ ապահովելու առավելագույն հնարավորություններ հանրային արդյունավետ վերահսկողության համար.
- միջազգային կառույցներն առավել լրջորեն կվերաբերվեն իրենց պրոֆեսիոնալ հեղինակությանն ու ընտրական օրինագծերի տեքստերի կամ ընտրությունների վերաբերյալ իրենց գնահատականները կհիմնավորեն օբյեկտիվ փաստարկներով՝ ձեռնպահ մնալով հապշտապ եզրակացություններից ու քաղաքական կոնյուկտուրային սպասարկող տեքստերից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2015թ. դեկտեմբերի 6-ին անցկացված սահմանադրական հանրաքվեի մասնակցության և արդյունքների վիճակագրական վերլուծություն

Հեղինակ՝ Ռոման Ուդոտ, ԺԸԵՊ

Ներածություն

Սույն վերլուծությունը տալիս է Հայաստանում 2015թ. դեկտեմբերի 6-ին կայացած սահմանադրական հանրաքվեի արդյունքների քանակական և որակական գնահատումը: Այն հիմնված է Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի կողմից հրապարակված՝ բոլոր ընտրատեղամասերի պաշտոնական տվյալների վրա, ինչպես նաև ներառում է քաղաքացի դիտորդների կողմից դիտարկված տեղեկությունները:

Մեթոդաբանություն և եզրակացություն

ՀԿՀ պաշտոնական տվյալների վերլուծության համար օգտագործվել է 3 հիպոթեզ կամ «մոդել»:

Մոդել 1-ին՝ «Իդեալական ընտրություններ», այսինքն՝ ազնիվ, թափանցիկ, օրենքին և երկրի կողմից ընդունված միջազգային պարտավորություններին լիարժեքորեն համապատասխան, ինչպես նաև քաղաքացիների կամարտահայտությանը լիովին համապատասխան վերջնական արդյունք:

Մոդել 2-րդ՝ «Բարդ, բայց պատշաճ քվեարկություն», այսինքն՝ ընտրություններ, որոնց ընթացքում արձանագրվել են խախտումների բազմաթիվ դեպքեր: Այնուամենայնիվ, այդ խախտումները զգալի ազդեցություն չեն ունեցել վերջնական արդյունքների վրա: Պաշտոնական արդյունքները համապատասխանում են քաղաքացիների իրական կամարտահայտությանը:

Մոդել 3-րդ՝ «Կեղծված ընտրություններ», այսինքն՝ ընտրություններ, որոնց ընթացքում արձանագրվել են բազմաթիվ խախտումներ, այնքան զգալի, որ դրանց արդյունքում լիովին աղավաղվել է քաղաքացիների տեսակետը:

Առաջադրված մոդելներից յուրաքանչյուրը ստուգվել է փաստերի համապատասխանության տեսանկյունից՝ հիմնվելով հիմնականում ՀԿՀ կողմից հրապարակված պաշտոնական տվյալների վրա:

Վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս քվեարկության արդյունքների զանգվածային կեղծում բազմաթիվ տեղամասերում՝ հանրապետությունով մեկ: Որքան մեծ է եղել մասնակցությունը տեղամասերում, այնքան մեծ է եղել «այո»-ի քվեների քանակը: Եվ չնայած մասնակցությունն ու «այո»-ի քանակն աճել են նույն չափով, գրեթե նույնն է մնացել «ոչ» քվեների քանակը: Դա կարելի է բացատրել քվեարկության գործընթացների խախտումներով և կեղծիքներով, ինչպես օրինակ՝ քվեատուփի լցոնում, վերահսկվող

բազմակի քվեարկություն (կարուսել), ընտրակաշառք, պարտադրված և հսկվող քվեարկություն և դրանց տարատեսակները: Վերլուծությունը նաև հստակ ցույց է տալիս տեղամասերի փակումից հետո գրանցված բարձր մասնակցության և «այո» ձայների և քվեարկության ընթացքում դիտորդների կողմից արձանագրված խախտումների միջև կորելյացիան: Մի շարք տեղամասերի խախտումների որոշ օրինակներ ներկայացված են ստորև բերվող վերլուծության մեջ:

Ըստ վերլուծության արդյունքների, բնակչության 53-70%-ը քվեարկել է «ոչ» և 30-47%-ը՝ «այո»[101] սահմանադրական փոփոխություններին, մինչդեռ պաշտոնական արդյունքներով 63%-ը կողմ է և 32%-ը դեմ: Վիճակագրական վերլուծության տվյալներով, Երևանում գրանցվել է ընտրողների 37-42% մասնակցություն, որից՝ «այո» է քվեարկել 34-35% և «ոչ»՝ 61-62%-ը: Մինչդեռ, ըստ պաշտոնական արդյունքների ընտրողների մասնակցությունը կազմել է 46,23%, կողմը՝ 53,06%, դեմը՝ 41,36%:

Սույն վերլուծությունը ցույց է տալիս, որ չկան էական տարբերություններ Հայաստանի տարբեր մարզերի բնակիչների կարծիքների միջև: Արդյունքների համեմատությունն ըստ ընտրատարածքների ցույց է տալիս, որ առկա է որոշակի համակարծիքություն սահմանադրական փոփոխությունների մերժման առումով: Այսպիսով, հանրաքվեի **պաշտոնական արդյունքները հակասում են Հայաստանի ընտրողների կամքի դրսևորմանը:**

Ընդհանուր տեղեկություններ

2015թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետությունում կայացավ սահմանադրական հանրաքվե:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը ձեռնամուխ եղավ մի շարք քայլերի՝ ուղղված ընտրությունները թափանցիկության ապահովմանը. մուտքն ընտրատեղամաս ազատ էր, քվեատուփերը կիսաթափանցիկ էին, տվյալները օպերատիվ կերպով հրապարակվում էին: Հաջորդ օրը, դեկտեմբերի 7-ին, տվյալները տեղադրվեցին ԿԸՀ-ի կայքում՝ վերլուծության համար հարմար ձևաչափով:

Քվեարկության ողջ օրվա ընթացքում համացանցում տեղադրվում էին քաղաքացիների կամքը խեղաթյուրող փորձերի՝ լավ փաստագրված ապացույցներով հաղորդումներ: Արձանագրվել են բազմակի քվեարկության դեպքեր, այլ անձի փոխարեն քվեարկություն, լցոնում, քվեների սխալ արձանագրում, լրացուցիչ ցուցակների հետ մեքենայություններ/կեղծիքներ (որը բազմակի քվեարկության տարատեսակ է), քվեաթերթիկների անվավեր ճանաչում, ձայների գնում և այլ խախտումներ:

Ընտրությունների անկախ քաղաքացիական վերահսկողությունն իրականացրել է «Քաղաքացի դիտորդ» կոալիցիան՝ բաղկացած մի քանի տեղական հասարակական կազմակերպություններից: Համաձայն նրանց կողմից ներկայացված տվյալների, որը նրանք

[101] Այսուհետ «այո» և «կողմ» բառերը փոխեփոխ օգտագործվում են նշելու սահմանադրական փոփոխությունների օգտին քվեարկած ձայները, իսկ «ոչ» և «դեմ» քվեները՝ ներկայացնելու սահմանադրական փոփոխությունների դեմ քվեարկած ձայները:

սիրով տրամադրեցին մեզ, նրանց ներկայացուցիչները ներկա էին 1997 ընտրատեղամասերից 526-ում (26,3%): Բացի այդ, 2015թ. դեկտեմբերի 8-ի դրությամբ նրանք ստացել են բողոքներ և խախտումների վերաբերյալ հաղորդումներ 203 ընտրատեղամասից (դիտարկվող տեղամասերի 38,5%-ը), ևս 43 հաղորդում խախտումների վերաբերյալ ստացվել է քաղաքացիների կողմից:

Անկախ քաղաքացիական վերահսկողությունն արդար և թափանցիկ ընտրությունների և դրանց արդյուքների նկատմամբ հասարակության վստահությունն ապահովելու գլխավոր բաղադրիչն է: Սակայն խեղաթյուրումների մասին «Քաղաքացի դիտորդի» հաղորդումները արժանացան քննադատության: Բացի կողմնակալության մասին ավանդական մեղադրանքներից դիտորդները բախվեցին օբյեկտիվ դժվարությունների: Արդյունքում, ինչպես և սպասվում էր, դիտորդների բաշխվածության աշխարհագրությունն անհամաչափ էր:



Պատկեր 1. Դիտորդների ներկայությունը, դիտորդների բողոքները, քաղաքացիների բողոքներն ըստ ընտրատարածքների

Շատ դիտորդներ զրկված են եղել վերահսկողություն կատարելու իրավունքից: Եղել են հաղորդումներ սպառնալիքների, ահաբեկման, աշխատանքը խոչընդոտելու մասին և այլ գործոններ:

Այս համատեքստում, մեզ համար առավել հետաքրքիր է գնահատել հանրաքվեի անցկացումն՝ ըստ Հայաստանի իշխանությունների կողից ներկայացված պաշտոնական թվերի:

Այս մոտեցումն ունի մի շարք առավելություններ. ենթադրվում է, որ երկրի իշխանություններն ապավինում են սեփական տվյալներին, որոնք վերաբերում են բոլոր տեղամասերին, նրանք հասանելի են, և յուրաքանչյուրը կարող է ստուգել արդյունքները և հաշվարկները՝ ներբեռնելով տվյալները http://www.elections.am/ կայքից Excel ձևաչափով

http://res.elections.am/images/doc/resulteng06.12.15v.xlsx. Այսպիսով, մենք խուսափում ենք կողմնակալության և նույնիսկ ապացույցները կեղծելու մեղադրանքներից:

Այս պահին, հանրաքվեի անցկացումից 8 օր հետո, մեր տրամադրության տակ չկա ոչ մի ապացույց, որ պաշտոնապես հրապարակված տվյալները շինծու են և հակասում են ընտրատեղամասերից ստացված վերջնական արձանագրություններից:

Մեթոդաբանություն

Չկա այնպիսի ընտրություն կամ հանրաքվե, որից հետո պարտվող կողմը չի մեղադրում հաղթող կողմին խարդախության և չարաշահումների մեջ: Հանրաքվեից հետո ի հայտ եկան բազմապիսի գնահատականներ՝ սկսած «կատարյալ, ազատ և արդարից» մինչև զանգվածային խախտումների մասին պնդումները, և նույնիսկ քաղաքացիների կամքի ամբողջական աղավաղումը:

Այստեղ, մենք առանձնացնում ենք երեք ենթադրություն կամ մոդել, որոնք մենք կփորձարկենք՝ հիմնվելով պաշտոնապես հրապարակված վիճակագրության վրա:

Մոդել 1-ը՝ «իդեալական ընտրություն». ազնիվ, թափանցիկ, օրենքին և երկրի կողմից ընդունված միջազգային պարտավորություններին լիարժեքորեն համապատասխան, ինչպես նաև քաղաքացիների կամարտահայտությանը լիովին համապատասխան վերջնական արդյունք:

Մոդել 2-ը՝ «բարդ, բայց պատշաճ քվեարկություն». ընտրություններ, որոնց ընթացքում արձանագրվել են խախտումների բազմաթիվ դեպքեր: Այնուամենայնիվ, այդ խախտումները զգալի ազդեցություն չեն ունեցել վերջնական արդյունքների վրա: Պաշտոնական արդյունքները համապատասխանում են քաղաքացիների իրական կամարտահայտմանը:

Մոդել 3-ը՝ «կեղծված ընտրություններ». ընտրություններ, որոնց ընթացքում արձանագրվել են բազմաթիվ խախտումներ, այնքան զգալի, որ դրանց արդյունքում լիովին աղավաղվել է քաղաքացիների տեսակետը:

Վերլուծության համար օգտագործվել են ՀԿՀ պաշտոնական տվյալները, ինչպես նաև որոշ ենթադրություններ և օրինաչափություններ, որոնք պարբերաբար նկատվում են ընտրությունների ժամանակ:

Օրինակ՝ Սոբյանինի-Սուխովոլսկու մեթոդ, ինչպես այն անվանում են Ռուսաստանում, որը նկարագրում է ընտրատեղամասերի բաշխումն ըստ «մասնակցություն/ձայների հարաբերակցություն» առանցքների[102]:

[102] А. А. Собянин, В. Г. Суховольский. Демократия, ограниченная фальсификациями: выборы и референдумы в России в 1991-1993 гг. М, 1995



Պատկեր 2. Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդի օրինակ

Կամ ընտրատեղամասերի մեկ այլ բաշխում, որը ցույց է տալիս մասնակցության և քվեարկության հարաբերակցությունը:



Պատկեր 3. Տեղամասային ընտրական հանձնաժողովների նորմալ բաշխվածությունն ըստ յուրաքանչյուր թեկնածուի ձայների %-ի

Ընդհանուր գաղափարն այն է, որ կան որոշ վիճակագրական օրենքներ և բաշխվածություններ՝ կախված բնակչության կարծիքներից: Ազատ և արդար ընտրությունների ժամանակ մենք ստանում ենք բացատրելի և կայուն պատկեր: Ցանկացած արհեստական միջամտություն հանգեցնում է այդ կախվածությունների նկատելի աղավաղումների: Ընդ որում, առանձին ընտրատեղամասի արդյունքների վրա արհեստական ազդեցությունը հանդիսանում է կեղծման կամ այլ չարաշահման, օրինակ, վերահսկվող քվեարկության նշան:

Կամ այնպիսի դասական կեղծիքը, ինչպիսին լցոնումն է, որն, ըստ սահմանման, տեղի է ունենում որևէ մեկ ընտրատեղամասում, Սոբյանին-Սուխովոլսկու[103] դիագրամի վրա հանգեցնում է սովորական «կոմպակտ» ամպի տեղաշարժման:



Պատկեր 4. Խեղաթյուրումներ, որ բացահայտվել են ըստ Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդի

Տվյալ գրաֆիկի վրա ընտրատեղամասի նախնական դիրքը (կանաչ կետ) փոխվում է՝ պայմանավորված լցոնմամբ: Եթե լցոնվել է N թվով քվեաթերթիկ, որը կազմում է գրանցված ընտրողների n%-ը, ապա այդ կետը X առանցքի վրա տեղաշարժվում է n չափով (քվեարկածների թիվն ավելացել է n-ով) և նույն չափով՝ Y առանցքի վրա (քանի որ դրանում օգտագործվում է նաև ընտրացուցակներում գրանցված ընտրողների հարաբերակցությունը):

Ձանգվածային լցոնումների դեպքում շեղումն ունի այն պատկերը, որը ներկայացված է վերևում:

Արդյունքների այսպիսի աղավաղումը բավականին բնորոշ երևույթ է: Այն կարելի է բնութագրել որպես «+n/+n/0» «ընտրողների մասնակցություն/այո/ոչ» տիրույթում, որտեղ բոլոր փոփոխականները նշվում են որպես ընտրացուցակի համամասնություն, որտեղ «մասնակցությունը» ընտրողների մասնակցությունն է (մասնակիցներ/ցուցակ), «այո»-ն «կեղծարարին ցանկալի արդյունքով քվեներ/ցուցակ» հարաբերակցությունն է և «ոչ»-ը՝ « ընդդեմ կեղծարարին ցանկալի արդյունքի քվեներ/ցուցակ» հարաբերակցությունը:

[103] Նույն տեղում:

Պետք է նշել, որ «+n/+n/0» շեղումը տեղի է ունենում կեղծիքներից շատերի դեպքում: Այլոց փոխարեն վերահսկվող զանգվածային քվեարկությունը ընտրատեղամասում (կարուսել) մաթեմատիկորեն նույն լցոնումն է, միայն «մարդկանց կողմից»: Այն մարդկանց ձայների գնումը (ընտրակաշառք), որոնք չէին նախատեսում գնալ քվեարկության, ևս տալիս է նույն պատկերը. դա հանգեցնում է մասնակցության և «այո» քվեների քանակի համաժամանակյա և հավասար մեծացման:

Այլ կերպ ասած, անսպասելիորեն, մեկ որոշակի ընտրատեղամասի ընտրողները զգում են մղում՝ գնալու և քվեարկելու կեղծարարին ցանկալի արդյունքի համար: Միևնույն ժամանակ, կեղծարարի դիրքորոշման հակառակորդների մոտ նման մղում չի նկատվում, և նրանց ձայների քանակը ընտրատարածքում մնում է նորմալ:

Մեկ այլ խեղաթյուրում է քվեաթերթիկների տրցակներից վերաբաշխումը, երբ մի թեկնածուի ձայները հաշվարկվում են այլ թեկնածուի օգտին: Ձայների նման կեղծման դեպքում Սոբյանին-Սուխովոլսկու բաշխումը աղավաղվում է հետևյալ կերպ.



Պատկեր 5. Քվեների սխալ գրանցում. Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդ

Իսկ գրաֆիկները շեղվում են հետևյալ կերպ.



Պատկեր 6. Քվեների սխալ գրանցում. հիստոգրամ

Այս շեղումը կարելի է բնութագրել որպես «0/+n/-n» «մասնակցություն/այո/ոչ» տիրույթում: Մասնակցությունը չի փոխվում, սակայն քվեարկությանը մասնակցածների մի մասը հանկարծ մտքափոխվում է իր ընտրության հարցում:

Հնարավոր են նաև խարդախություններ հայտնաբերելու այլ եղանակներ պաշտոնական տվյալների շնորհիվ: Նրանց մեծ մասը նույնպես հիմնված է ուսումնասիրվող գործընթացների պատահական բնույթի վրա: Այդ մեթոդներից են. վերջին թվի վերլուծությունը, մասնակցության դինամիկայի պաշտոնական ցուցանիշի վերլուծությունը, թվերի արհեստական կլորացումը, տարբեր բնույթի տվյալների նույնական արժեքները, մաթեմատիկական սխալները և այլն:

2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքները

Պաշտոնական տվյալները, որոնք հրապարակվել են 2015թ. դեկտեմբերի 7-ին, լուրջ մտահոգություն առաջացրեցին: Այսպես, Սոբյանին-Սուխովոլսկու բաշխումը Հայաստանի ողջ տարածքում ունի հետևյալ տեսքը.



Պատկեր 7. Հանրաքվեի պաշտոնական արդյունքները. Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդ (ողջ Հայաստան)

Ակնկալվող կոմպակտ ամպը շեղված է հենց 45 աստիճանի ուղղությամբ:

Ըստ վերը ներկայացված մոդել 3-ի (կեղծված ընտրություններ)՝, դա այնպիսի համատարած կեղծման վկայություն է, ինչպիսին են լցոնումը, ընտրակաշառքը և զանգվածային բազմակի քվեարկությունը: Իսկապես, պատկերի վրայի՝ քվեատուփերի լցոնման երեք լավ փաստագրված դեպքերը չեն հակասում մոդելին:



Պատկեր 8. Հանրաքվեի պաշտոնական արդյունքները. Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդը և ընտրատեղամասեր, որտեղ կատարվել է լցոնում

16/42 տեղամասի դեպքում հնարավոր էր հաշվարկել լցոնած ծրարների թիվը և այդպիսով հաշվարկել շեղումը (կանաչից դեպի սև կետ): 17/4 և 16/9 ընտրատեղամասերի դեպքում ցուցադրված է միայն լցոնման արդյունքում առաջացած խեղաթյուրման ուղղությունը:

Պատկերներ 9 և 10. Լուսանկարներ #16/42 ընտրատեղամասից

16/42 ընտրատեղամասում լցոնումը հայտնաբերվել է առավոտյան ժամը 10-ին՝ հանձնաժողովի աշխատանքի հենց սկզբից: Միայն դա բացատրում է «լղոզման» մեկ երրորդ մասը: Դեռ մի ամբողջ օր մնում էր ձայներ գնելու, «կարուսելի» և այդ տիպի այլ խախտումների համար: Կան երեկոյան կեղծիքների նախապատրաստման անուղղակի ապացույցներ: Օրինակ՝ հանձնաժողովի միևնույն անդամը վիճակահանությամբ «քաշում է» քվեատուփի մոտ առավոտյան և երեք երեկոյան հերթափոխերը: Այս դերը կարևոր նշանակություն ունի այնպիսի ընտրակեղծիքների համար, ինչպիսիք են լցոնումը և բազմակի քվեարկությունը: Նման ելքի հավանականությունը արդար վիճակահանության դեպքում գնահատվում է չնչին՝ 0,00804:



Պատկեր 11. Վիճակահանության անհավանական արդյունք

Բացի այդ, եղել են հաղորդումներ քվեների սխալ արձանագրման մասին (քվեաթերթիկների տեղափոխում «ոչ» տրցակից դեպի «այո» տրցակ): Թիվ 34/3 տեղամասից ստացված նման հաղորդագրություններից մեկն ակնհայտ երևում է պաշտոնական տվյալներում (պատկերի վրա նշված է սև սլաքներով):



Պատկեր 12. Թիվ 34 ընտրատեղամաս. Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդ

1-ին և 2-րդ մոդելների տեսանկյունից Պատկեր 8-ում բերված աղավաղումները կամ «լղոզումները» սովորաբար բացատրվում են առանձին ընտրատարածքների առանձնահատկություններով: Սկզբունքորեն, 41 ընտրատարածքների 41 տվյալների խմբերի բաշխումը գրաֆիկի վրա կարող էր կամայական լինել, և դրանով իսկ կամայական պատկեր տալ: Սակայն պարզ չէ, թե ինչու 41 ընտրատարածքները դասավորվեցին մեկ գծի վրա: Նման ելքի հավանականությունը չափազանց փոքր է: Այնուամենայնիվ, ընտրատարածքային առանձնահատկությունների հարցը կարևոր է և առանձին ուսումնասիրություն է պահանջում:

Երևան

Տարածքային առանձնահատկություններից խուսափելու համար կցանկանայինք սկսել ուսումնասիրել Երևանի պատկերը: Իրոք, մեծ, առաջադեմ հաղորդակցության միջոցներով ժամանակակից քաղաքից, ինչպիսին Երևանն է, կարելի էր ակնկալել քիչ թե շատ միատարր քվեարկություն:

Նախկին քվեարկություններում Երևանը դրսևորել է համանմանություն ու համակարծիքություն: Կոմպակտ «ամպի» ստորև բերված օրինակն արտացոլում է 2013թ. նախագահական ընտրությունների Երևանում կայացած քվեարկության պատկերը:

Երևանի 2013 և 2015 թթ. քվեարկության պաշտոնական արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ պատկերը մոտ 1.5 անգամ ավելի լղոզված է դարձել:



Պատկեր 13. 2013 և 2015 թթ. քվեարկության համեմատությունը Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդը Երևանում

Մոդել 1-ը բացատրում է այդ երևույթը տարբեր ընտրատեղամասերում քաղաքացիների կարծիքների տարբերության աճով:

Մոդել 3-ի շրջանակներում քաղաքացիների կամարտահայտումը շարունակում է դիտվել միատեսակ, սակայն կեղծիքների չափերը 2013-ից մինչև 2015 աճել են՝ բերելով գրաֆիկի աղավաղման: Սա հիմնականում «+n/+n/0» տիպի աղավաղում է:

Մոդել 2-ը, որպես 1-ին և 3-րդ մոդելների հիբրիդ, ասում է, որ կեղծիքները չեն ազդել վերջնական արդյունքի վրա: Այս մոտեցմանը մենք կանդրադառնանք վերջում:

Աղավաղում (Լղոզում)

Սոբյանինի-Սուխովոլսկու դիագրամը Երևանի քվեարկության արդյունքներով ունի հետևյալ տեսքը.



Պատկեր 14. Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդը Երևանի համար. «այո» քվեարկված և «ոչ» քվեարկված քվեաթերթիկներ

Մոդել 1-ը բացատրում է այս պատկերը նրանով, որ երևանցիների շրջանում չկա համերաշխություն սահմանադրական փոփոխությունների հարցում: Նրանց կարծիքները էականորեն տարբերվում են թաղամասից թաղամաս:

Հարց է առաջանում, թե ինչու են տատանումները տեղի ունենում միայն 45 աստիճանի տակ: Որևէ քաղաքացու կարծիքը մի շարք պատահական գործոնների, համոզմունքների, նախասիրությունների և այլնի արդյունք է: Եվ այդ պատահականությունը պետք է ձևավորի որոշակի ամպ, այլ ոչ թե գիծ: Գծի պատահական ձևավորումը քիչ հավանական է: Երբեմն այն փորձում են բացատրել ինչ-որ անհայտ օրինաչափություններով, այսպես կոչված «թաքնված փոփոխականներով», սակայն որևէ «թաքնված փոփոխական» մեզ հայտնի չէ:

Ըստ **մոդել 3-ի՝** երևանցիների շրջանում առկա է համակարծիքություն, ուղղակի այն աղավաղված է. լողոումը տեղի ունեցել մասնակցության և «կողմ» ձայների համաժամանակյա աճով, այսինքն՝ «n+/n+/0» (մասնակցություն/այո/ոչ) տիպով: Նման խեղաթյուրումը, ինչպես արդեն նշել ենք, առաջանում է լցոնումների, զանգվածային վերահսկվող քվեարկության և հօգուտ «այո» ձայների գնումով: Ի տարբերություն առեղծվածային «թաքնված փոփոխականների»՝ նման կեղծիքների դեպքերը լավ ուսումնասիրված և փաստագրված են: Միակ հարցն այն է, թե որքան տարածված են նման խախտումները, քանի որ ոչ բոլոր դեպքերն է հնարավոր փաստագրել:

Աշխարհագրական անհամապատասխանություններ

Ընտրական աշխարհագրության մասնագետ և https://www.electoralgeography.com կայքի հեղինակ Ալեքսանդր Կիրեևը մի հետաքրքիր դիտարկում է կատարել. հաճախ հարևանությամբ գտնվող տեղամասերում տալիս են իրարից էապես տարբերվող արդյունքներ, իսկ երբեմն նույնիսկ իրար հակառակ են:



Պատկեր 15. Թիվ 4 ընտրատարածքի ընտրատեղամասերի գտնվելու վայրը և նրանց արդյունքները (մոխրագույն սյունակ % չքվեարկածներ/ցուցակ, կանաչ սյունակ -% «այո» քվեարկված քվեաթերթիկներ/ցուցակ, կարմիր սյունակ -% «ոչ» քվեարկված քվեաթերթիկներ/ցուցակ)

Քարտեզի վրա մոխրագույն շերտը չքվեարկածների տոկոսն է ընդհանուր ցուցակից, կանաչը՝ «այո» քվեարկածների և կարմիրը՝«ոչ»-ի տոկոսը:

Մոդել 1-ը չի կարող բացատրել «այո» քվեարկության հանկարծակի պոռթկումները, որոնք, ի դեպ, չեն տարածվում հարևան տեղամասերի վրա: Ցանկացած լեգիտիմ նախընտրական քարոզչություն չէր կարող չազդել հարակից տարածքների վրա: Հանրահավաքները, պաստառները, համերգները, թերթերը, ռադիո և հեռուստահաղորդումները չէին կարող ազդել միայն մեկ տեղամասի վրա: Միակ բացատրությունը կարող է լինել այն, որ որևէ աներևակայելի արդյունավետ քարոզիչ անցնում է դռնեդուռ խստորեն իր տեղամասի սահմաններում և քարոզում է նրանց, ով մտադրություն չուներ մասնակցելու քվեարկությանը: Ընդ որում, քարոզում է 100%-ոց արդյունավետությամբ (յուրաքանչյուր լրացուցիչ ձայն «կողմ» ձայն է, որի արդյունքում և ձևավորվում է Պատկեր 16-ի 45 աստիճանի անկյունը): Նման քարոզչի առկայությունը կարող է բացատրել «+n/+n/0» տեսակի շեղումը: Սակայն մենք չունենք տվյալներ, որ նման ձևով դռնեդուռ քարոզարշավ է անցկացվել «այո» քվեի օգտին, մի կողմ դնելով դրա արդյունավետությունը:

Այս տարածքի նույն տվյալները Սոբյանինի-Սուխովոլսկու դիագրամի վրա ունեն հետևյալ տեսքը.



Պատկեր 16. Թիվ 4 Ընտրատարածքի ընտրատեղամասերը. Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդ

Մոդել 3-ը հեշտությամբ բացատրում է այս տոպոգրաֆիկ և վիճակագրական երևույթները: Համաձայն դրա, 45 աստիճանով աղավաղումը քվեատուփերի զանգվածային լցոնման, կարուսելի և ձայների գնման արդյունք է նրանց շրջանում, ով չէր պատրաստվում մասնակցել քվեարկությանը: Այս խախտումներով պայմանավորված վիճակագրական աղավաղումները մանրամասն նկարագրվել են վերևում:

Մյուս կողմից, նման խախտումները կարող են հաջողությամբ պսակվել մեկ տեղամասում, մինչդեռ դրանք կարող են կանխվել դիտորդների կողմից կամ մերժվել տեղամասային

հանձնաժողովների կողմից մյուս տեղամասում: Ի տարբերություն հասարակական կարծիքի, որը ագրեգացված ֆունկցիա է և աստիճանաբար փոխվում է տարածքից տարածք, խախտման փորձը և դրա հաջողությունը բինար ֆունկցիա է, որն, ընդհանուր առմամբ, կախված չի տեղամասերի տեղակայումից: Այսպես, մենք դիտարկում ենք արդյունքների ցրում հարևան տեղամասերում:

Անշուշտ, ի տարբերություն հիպոթետիկ դռնեդուռ քարոզչությանը, 2015թ. դեկտեմբերի 6-ին արձանագրվել են նկարագրված խախտումների բազմաթիվ դեպքեր:

Հաղորդումներ խախտումների մասին

ԺԸԵՊ-ին տրամադրվել են «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդների կողմից հավաքագրված տվյալները: Մենք կարող ենք դիտարկել որոշ օրինաչափություններ՝ հիմնվելով այդ տվյալների վրա:

Օրինակ՝ ուսումնասիրել այն ընտրատեղամասերի, որտեղից ստացվել և որտեղից չեն ստացվել բողոքներ, թվի հարաբերակցությունը տվյալ ընտրատեղամասերի «կողմ» ձայների մասնաբաժնի նկատմամբ:



Պատկեր 17. Ընտրատեղամասերի բաշխվածությունն՝ ըստ «այո» քվեարկված քվեաթերթիկների %-ի (5% տիրույթ, Երևան)



Պատկեր 18. Բողոք ներկայացված տեղամասերն ընդհանուր թվով տեղամասերի շարքում՝ ըստ «այո» քվեարկածների արդյունքների տարբեր հատվածների (5% տիրույթ, Երևան)

Մենք տեսնում ենք մի քանի փաստ: Դիտորդները հավասարաչափ բաշխված են եղել տարբեր տեսակի ընտրատեղամասերում («կողմ»-ի տոկոսային արժեքի ողջ սպեկտրով): Սակայն հարաբերական առավելագույնը միջինը մեկ ընտրատեղամասի հաշվով ստացվում է 60 տոկոսին մոտ:

Մոդել 1-ը չի կարող բացատրել այդ կախվածությունը: Ընտրախախտումներ չեն եղել, և հետևաբար, դիտորդները իրենք են խախտումներ հորինել:

2-րդ և 3-րդ մոդելների համաձայն, 50%-ից ավելի «այո» ձայները կապված են որոշակի անօրինական գործողության հետ, որը բերել է բարձր ակտիվության և քաղաքացիների ավելի մեծ թվով բողոքների:

Ոմանք կարող են կասկածի տակ դնել դիտորդների տվյալները, քանի որ դրանք կարող էին հատուկ աղավաղվել 50%-ից ավելի «կողմ» ձայներ հավաքած տեղամասերի արդյունքները կասկածի տակ դնելու նպատակով: Բայց պետք է հաշվի առնել, որ այդ բողոքները ստացվել և հրապարակվել են ընտրությունների ողջ օրվա ընթացքում, երբ դեռևս հայտնի չէին վերջնական արդյունքները: Եվ մնում է առեղծված, թե ինչպես կարող էին դիտորդները նախապես իմանալ այն տեղամասերը, որտեղ պետք է լիներ 50%-ից բարձր թվով «այո» քվե, որպեսզի համակարգեին իրենց գործունեությունը:

Այսպիսով, հիմնվելով վերը նշված փաստերի ու օրինաչափությունների ամբողջության վրա, կարող ենք ասել, որ 1-ին մոդելը (կատարյալ ընտրություններ**)** հակասում է դրանց և անհիմն է:

Մնացած մոդելները՝ **2-րդ մոդելը** (բարդ, բայց պատշաճ ընտրություններ) և **3-րդ մոդելը** (կեղծված ընտրություններ) ընդունում են կեղծիքների առկայությունը, սակայն տարակարծիք են այն հարցում, թե արդյոք այդ խախտումներն էապես ազդել են ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

Աղավաղումների գնահատում

Երկու մոդելներն էլ ենթադրում են, որ տեղ գտած կեղծիքները որոշակիորեն աղավաղել են իրական պատկերը: Մինչ այս պահը մեր արձանագրած շեղումները կամ «+n/+n/0» (մասնակցություն/այո/ոչ), կամ «0/+n/-n» (մասնակցություն/այո/ոչ) տեսակի են:



Պատկեր 19. Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդը Երևանի համար. խեղաթյուրումների ուղղությունները և նախնական խմբեր

Վերևի պատկերում այդ շեղումները նշված են սլաքներով, որից երևում է, որ ա) երկու տեսակի խախտումներն էլ տեղ են գտել, բ) կեղծիքները ուղղված են միայն մեկ ուղղությամբ և գ) միշտ կան «ազնիվ» ընտրատեղամասեր, որտեղ անհնար է իրականացնել կեղծիքներ տարբեր պատճառներով. միշտ առկա են մնացորդային, «ազնիվ» կլաստերներ: Այսպիսով, այս գրաֆիկից երևում է, որ երևանցիների նախնական համերաշխությունը ա) գոյություն ուներ, բ) «դեմ» է եղել տեղամասային ցուցակներում ընդգրկվածների մոտ 23%-ը (!), «կողմ»՝ մոտ 13%-ը՝ ցուցակից: Մասնակցության չաղավաղված չափը կազմել է մոտ 37%:

Այն կարելի է հաշվարկել սովորական տոկոսներով, մասնակցածների և ոչ թե ընտրողների թվից:

Երևանի ընտրացուցակներում ընտրողների թիվը կազմում է 845,903 ընտրող: Իրականում քվեարկությանը մասնակցել է 312,984 ընտրող (37%), այդ թվում, «կողմ»՝ 109,967 (845903x13%) ձայն (այսինքն քվեարկությանը մասնակցածների 35%-ը) և «դեմ»՝ 194,557 (845903x23%) ձայն (այսինքն քվեարկությանը մասնակիցների 62,16%-ը): Մոտ 3% կարող էին կազմել անվավեր քվեաթերթիկները:

Իրական արդյունքները կարելի է գնահատել նաև այլ կերպ՝ հիմնվելով գրաֆիկի մնացորդային գագաթների վրա:



Պատկեր 20. Տեղամասերի բաշխումն՝ ըստ մասնակիցների թվի (5% տիրույթ, Երևան)



Պատկեր 21. Տեղամասերի բաշխումն՝ ըստ «այո» քվեարկվածների %-ի (5% տիրույթ, Երևան)



Պատկեր 22. Տեղամասերի բաշխումն՝ ըստ «ոչ» քվեարկվածների %-ի (5% տիրույթ, Երևան)

Հիմնվելով պատկերի վրա՝ մասնակցությունը կարելի է գնահատել 42,5%, «կողմ»՝ 34% «դեմ»՝ 61%, մինչդեռ ըստ պաշտոնական տվյալների Երևանում մասնակցությունը կազմել է 46,23%, «կողմ»՝ 53,06%, «դեմ»՝ 41,36%:

Այսպիսով, **2-րդ մոդելը (Բարդ, բայց պատշաճ ընտրություններ)** հակասում է դիտարկված փաստերին: Միակ մոդելը, որին չեն հակասում Երևանում դիտարկված փաստերը, հանդիսանում է 3-րդ մոդելը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Երևանում ընտրությունները կեղծվել են էապես: Խախտումներն այնքան զգալի են եղել, որ դրանք ամբողջովին աղավաղել են քաղաքացիների կամարտահայտումը:

Ամբողջ Հայաստանը



Պատկեր 23.Հանրաքվեի պաշտոնական արդյունքները. Սոբյանին-Սուխովոլսկու մեթոդը (ողջ Հայաստանի համար)

1-ին մոդելը (կատարյալ ընտրություններ) արդեն քննարկման ենթակա չէ: Երևանում, որտեղ ըստ պաշտոնական տվյալների, քվեարկել է ընտրողների 30%-ը, վերը դիտարկված ընտրախախտումները թույլ չեն տալիս ընտրությունները համարել «իդեալական»:

Սակայն, **2-րդ մոդելը** դեռևս կարող է դիմանալ փորձարկմանը: Հնարավոր է, որ Երևանից դուրս քվեարկությունը կեղծվել է ոչ զգալի չափով, և արդյունքում, չնայած մայրաքաղաքում տեղ գտած կեղծիքներին, իշխանությունները, այնուամենայնիվ, ստացել են պատշաճ արդյունքներ: Հնարավոր է, որ դիտարկվող լղոզումը, այնուամենայնիվ, պայմանավորված է տարածքային առանձնահատկություններով:

3-րդ մոդելը ևս կարող է դիմանալ փորձարկմանը որոշ փաստերով: Անշուշտ, մեզ դեռևս հայտնի չէ որևէ փաստ, որը հակասեր 3-րդ մոդելին:

«Նաումովի» կազուսը

Երևանի և մարզերի միջև քվեարկության առումով մեծ տարբերության առկայության վերաբերյալ կասկածներ առաջացրեց ռուս լրագրող Դմիտրի Նաումովի հետ տեղի ունեցած դեպքը: Նաումովը, որը հավատարմագրվել էր ԿԸՀ-ի կողմից, ընկել էր մի ընտրատարածք, որտեղ բնակչությունը իբրև թե ունի վառ արտահայտված իշխանամետ դիրքորոշում: Ի տարբերություն այլ միջազգային դիտորդների, Նաումովը երկու ընտրատեղամասում անցկացրեց ողջ օրը՝ մանրակրկիտ ձևով վերահսկելով քվեարկության և հաշվարկի ընթացքը: Իրականում նրան պարզապես հետաքրքրում էր տեղական ընտրությունների ընթացքը, որը տեղի էր ունենում հանրաքվեի հետ նույն օրը, իսկ հանրաքվեին առնչվող շշմեցնող արդյունքները հանդիսացան անսպասելի կողմնակի արդյունք:

Հանրաքվեի արդյունքներն, իսկապես, դժվար բացատրելի էին:



Պատկեր 24. Հանրաքվեի ժամանակ «այո» քվեարկված քվեաթերթիկների համեմատական դիագրամը թիվ 20 ընտրատարածքի տեղամասային ընտրական հանձնաժողովների թվում

Նաումովը եղել է նույն շենքում տեղակայված 20/43 և 20/44 ընտրատեղամասերում: Հարկ է նշել, որ այդ երկու ընտրատեղամասերը նախկինում աչքի չեն ընկել քվեարկության առանձնահատկություններով:



Պատկեր 25. 2013 թ. ՀՀ նախագահի ընտրության ժամանակ Ս.Սարգսյանի օգտին քվեարկած քվեների համեմատական դիագրամ թիվ 20 ընտրատարածքի տեղամասային հանձնաժողովների թվում

2013թ.-ի տվյալներում այս տեղամասերը, որոնք ներկված են դեղին գույնով, ունեին 20/42 և 20/43 համարները:

2-րդ մոդելը չի կարող բացատրել այդ պարադոքսը: Հավանականությունը, որ լրագրողը պատահաբար հայտնվել է հենց այն ընտրատեղամասերում, որտեղ առկա է եղել անհամաձայնություն և դավադրություն ընդդեմ կառավարության, զրոյական է:

3-րդ մոդելը հեշտությամբ բացատրում է «Նաումովի կազուսը». Հեռավոր շրջաններն աչքի են ընկնում խոշոր չափերի հասնող խարդախություններով արտաքին վերահսկողության բացակայության պատճառով: Ընտրությունների ողջ օրվա ընթացքում մեկ լրագրողի կողմից անընդմեջ վերահսկողությունը բավարար էր, որպեսզի բացահայտվեին քվեարկության իրական արդյունքները:

Տարածքային առանձնահատկությունների չափը

Սակայն, վիճակագրական պատկերն ընդհանուր առմամբ հիմք է տալիս պնդելու, որ տարածքային առանձնահատկություններն, այնուամենայնիվ, առկա են:



Պատկեր 26. Տեղամասային հանձնաժողովների բաշխվածությունը ըստ «Այո» քվեարկված քվեաթերթիկների %-ի (1% տիրույթ, Հայաստան)

2-րդ մոդելը, ըստ որի վերջնական աղավաղումը փոքր է, «կողմ» ձայների առաջին գագաթը 30-35 տոկոսի շրջանում բացատրում է որպես Երևանում առկա համակարծության արդյունք: Սակայն, քանի որ ընտրողների մեծ մասը մայրաքաղաքից չէր, ապա նրանց համակարծությունը «կողմ»-ի 75%-ի շրջանում պարզապես գերակշռել է երևանցիների կարծիքը: Այսպիսով, հանրաքվեի վերջնական արդյունքները, որում հաղթեցլ են «այո»-ի կողմնակիցները, արտացոլում է երկրի բնակչության դիրքորոշումը:

3-րդ մոդելը, ըստ որի տեղի են ունեցել զանգվածային կեղծիքներ, դիտարկում է առաջին գագաթը որպես բոլոր ընտրատարածքների «ազնիվ» ընտրատեղամասերի մնացորդային գագաթ: Ըստ այս մոդելի՝ երկրի բնակչության կարծիքների տարբերությունն աննշան է, և համահայկական համակարծությունը գտնվում է հենց «այո»-ի 30-35%-ի շրջակայքում, իսկ երկրորդ գագաթը կեղծարարության արդյունք է յուրաքանչյուր ընտրատարածքում:

Այս խնդիրը լուծելու համար դիտարկենք տվյալներն ըստ ընտրատարածքների:



Պատկեր 27. Տեղամասային հանձնաժողովների բաշխվածությունն՝ ըստ «Այո» քվեարկված քվեաթերթիկների %-ի (5% տիրույթ, Հայաստան)

Հակառակ սպասումներին, առաջին գագաթը, իրոք, նման է համապետական համակարծությանը, որում ներդրում ունեցան ողջ երկրի 38 ընտրատարածքները՝ բացառությամբ 17-րդի, 22-րդի և 37-րդի: «Կողմ» գագաթը գտնվում է 30-35%-ի, իսկ «դեմ»-ը, հետեւաբար, 65-70%-ի շրջանում:

Բացի այդ, հարկ է նշել, որ չկա ակնկալվող կոմպակտ տարածքային համակարծություն, և բոլոր ընտրատարածքների պատկերները նույնքան կասկածելիորեն են լղոզված, որքան՝ Երևանինը:

Համապետական համակարծություն

Այս երևույթի հետագա ուսումնասիրության համար մենք բաժանում ենք բոլոր տվյալները 5%-անոց տիրույթների և խմբավորում ընտրատարածքներն ըստ քվեների և ընտրողների ցուցակի համամասնության, այլ ոչ թե՝ ըստ քվեարկությանը մասնակցածների: Ստացված բաշխման վրա գույնի խտությունը ցույց է տալիս տվյալ տիրույթի տեղամասերի և տվյալ ընտրատարածքի տեղամասերի քանակի հարաբերակցությունը: Առավելագույն թվով տեղամասեր ունեցող տիրույթն ունի առավել ընդգծված գունային խտություն:



Պատկեր 28. Տեղամասային հանձնաժողովների բաշխվածությունն՝ ըստ քվեարկության մասնակիցների թվի՝ ագրեգացված և ըստ յուրաքանչյուր ընտրատարածքի



Պատկեր 29. Տեղամասային հանձնաժողովների բաշխվածությունն՝ ըստ «այո» քվեարկված քվեաթերթիկների %-ի ագրեգացված և ըստ յուրաքանչյուր ընտրատարածքի



Պատկեր 30. Տեղամասային հանձնաժողովների բաշխվածությունն՝ ըստ «ոչ» քվեարկված քվեաթերթիկների %-ի ագրեգացված և ըստ յուրաքանչյուր ընտրատարածքի

Անսպասելիորեն մենք բացահայտեցինք բոլոր ընտրատարածքների ընտրողների համերաշխությունը. «դեմ» քվեարկածների քանակի հարաբերակցությունը ընտրացուցակներում ընդգրկվածների թվի վրա գործնականում մնում է նույնը:

2-րդ մոդելը չի կարողանում բացատրել տեղամասերի միջև մասնակցության թվի և «կողմ» ձայների մասով մեծ ցրվածությունը և համերաշխությունը «դեմ» ձայների առումով:

3-րդ մոդելը բացատրում է այդ երևույթը հետևյալ կերպ. «+n/+n/0» տիպի կեղծիքը չի ազդում «դեմ» ձայների վրա, բայց զգալիորեն աղավաղում է ինչպես մասնակցության, այնպես էլ «կողմ» ձայների պատկերը: Ուստի, դիտարկվող երևույթը պայմանավորված է ոչ թե տարբեր տեղամասերում քվեարկած քաղաքացիների կարծիքների տարբերությամբ, այլ աղավաղումների մասշտաբների տարբերությամբ: Այլ կերպ ասած, տարածքները տարբերվում են զուտ կեղծիքների մասշտաբներով:

Այսպիսով, միակ մոդելը, որը չի հակասում դիտարկվող փաստերին, **3-րդ մոդելն է,** որը բացատրում է բոլոր անհամապատասխանությունները «+n/+n/0» (մասնակցություն/այո/ոչ) տիպի զանգվածային շեղումներով: Ինչպես ներկայացվել է «Մեթոդաբանություն» բաժնում, նման աղավաղումները տեղ են գտնում լցոնումների, զանգվածային վերահսկվող քվեարկությունների, կարուսելների, ընտրակաշառքների, վերահսկվող հարկադրված քվեարկությունների արդյունքում:

Հիմնվելով այս մոդելի վրա՝ կարելի է փորձել վերականգնել նախնական արժեքները, որոնք արտացոլում են քաղաքացիների իրական կարծիքը:

Բոլոր ընտրատեղամասերը «կողմ» ձայների առումով տալիս են հետևյալ ագրեգացված բաշխումը (տես «All» սյունակը նախորդ պատկերների վրա):



Պատկեր 31. Տեղամասային հանձնաժողովների բաշխվածությունն՝ ըստ «ոչ» քվեարկված քվեաթերթիկների %-ի (5% տիրույթ, Հայաստան)



Պատկեր 32. Տեղամասային հանձնաժողովների բաշխվածությունն՝ ըստ «այո» քվեարկված քվեաթերթիկների %-ի (5% տիրույթ, Հայաստան)

Այսպիսով, կառուցելով բաշխումը 5% քայլով, մենք կարող ենք տեսնել մնացորդային «ազնիվ» «դեմ» քվեարկության գագաթներ՝ ցուցակի 15%-ի չափով և «կողմ» ձայներ՝12.5%-ի չափով:

Նմանատիպ հաշվարկներ անելով 2% քայլով՝ մենք ստանում ենք նույնական պատկեր.



Պատկեր 33. Տեղամասային հանձնաժողովների բաշխվածությունն՝ ըստ «ոչ» քվեարկված քվեաթերթիկների %-ի (2% տիրույթ, Հայաստան)



Պատկեր 34. Տեղամասային հանձնաժողովների բաշխվածությունն՝ ըստ «այո» քվեարկված քվեաթերթիկների %-ի (2% տիրույթ, Հայաստան)

«դեմ»՝ ցուցակի 16%-ի չափով, և «կողմ»՝ ցուցակի 14%-ի չափով:

Նույնիսկ այս փուլում կարող ենք եզրակացնել, որ «ոչ» ձայների չաղավաղված թիվը մի փոքր բարձր է «այո»-ի քանակից: Համարելով, որ անվավեր քվեաթերթիկների քանակը փոքր է եղել, քվեարկության մասնակիցների իրական քանակը կարելի է հաշվարկել որպես «այո» և «ոչ» քվեների հանրագումար: Այս ենթադրությունը թույլ է տալիս հաշվարկել չաղավաղված քվեների մասնաբաժինը ավանդական եղանակով, այսինքն՝ հիմք ընդունելով մասնակիցների քանակը՝ 45-47% «կողմ» և 53-55% «դեմ»:

Հիշեցնենք, որ վերևում մենք ստացել ենք մնացորդային «ազնիվ» գագաթ «կողմ» ձայների համար 30-35%-ի միջակայքում և «դեմ» ձայների համար՝ 65-70% միջակայքում: «Նաումովի կազուսը» տալիս էր 20% «կողմ» և 80% «դեմ»:

Ակնհայտ է, որ մեթոդների ճշգրտությունը բավարար չէ քանակական գնահատումներ անելու համար, սակայն դրանք տալիս են մեկ ընդհանուր պատկեր. Հայաստանում սահմանադրության փոփոխության կողմնակիցները ավելի քիչ են եղել, քան ընդդիմադիրները:

Կամ, այլ կերպ ասած, բոլոր վերոնշյալ հաշվարկներն ու նկատառումները ստիպում են հանգել եզրակացության, որ հանրաքվեի պաշտոնական արդյունքները հակասում են հանրաքվեի իրական մասնակիցների կարծիքներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

2015 թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեում միջազգային դիտորդական առաքելությունների աշխատանքի վերլուծություն

Հեղինակներ՝ Սերգեյ Տկաչենկո, Ելիզավետա Ռեխտման, ԺԸԵՊ

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն դիտարկող միջազգային դիտորդական առաքելությունների և խորհրդարանական պատվիրակությունների աշխատանքի մոնիտորինգն իրականացվել է թե՛ բաց աղբյուրներից (ԶԼՄ, տպագիր մամուլ, ինտերնետային կայքեր, հեռուստատեսություն) և թե՛ հարցազրույցի մեթոդով դիտորդներից ու հանրաքվեի ընթացքում միջազգային դիտորդ կազմակերպությունների ու պատվիրակությունների ներկայացուցիչներից ստացված տեղեկությունների հիման վրա:

Միջազգային դիտորդական առաքելությունների մոնիտորինգն ու գնահատումն իրականացվել է 2005 թ. հոկտեմբերի 27-ին ՄԱԿ-ում ընդունված *Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների հռչակագրի* սկզբունքներին ու չափանիշներին համապատասխան: Այդ հռչակագիրը ստորագրել են տարբեր երկրներում միջազգային դիտորդություն իրականացնող առաջատար միջազգային կառույցներն ու կազմակերպությունները:

Հիշարժան է այն փաստը, որ ՀՀ ընտրական օրենգրքի հոդված 29-ի 2-րդ մասի համաձայն՝ միջազգային կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել հրավերի առկայության դեպքում: Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել չեն կարող: Սույն մասում նշված կազմակերպություններին և անձանց դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝

1) Հանրապետության նախագահը

2) Ազգային ժողովի նախագահը

3) վարչապետը

4) կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ):

Այս առանձնահատկությունը հստակ պատկերացում է տալիս, որ ԿԸՀ-ն և ՀՀ ղեկավարությունը քաջ գիտակցում են և հաշվի են առնում, թե որ կառույցներին ու կազմակերպություններին հրավեր ուղարկեն (ելնելով նրանց փորձից, դիտարկման մեթոդաբանությունից և այլն): Սակայն, Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմը (EPDE) այդպես էլ չկարողացավ նման հրավեր ստանալ հանրապետության ղեկավարությունից՝ չնայած բազմաթիվ դիմումներին: (2015 թ. դեկտեմբերի 4-ին News.am և

Armenia Today ինտերնետ պորտալները հրապարակել են հաղորդագրություններ, որ ԿԸՀ-ն Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմին (EPDE) չի հավատարմագրել որպես միջազգային դիտորդ դեկտեմբերի 6-ին կայանալիք հանրաքվեի համար): [104], [105]

Համաձայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվության՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ժամանակ դիտորդական առաքելություն են իրականացրել 6 միջազգային առաքելությունների, կազմակերպությունների ու պատվիրակությունների 123 միջազգային դիտորդներ հետևյալ կազմով՝

1. ԱՊՀ դիտորդական առաքելություն
2. ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողով
3. Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) պատվիրակություն
4. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (փորձագիտական թիմ)
5. Օտարերկրյա ԿԸՀ ներկայացուցիչների պատվիրակություն
6. ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների ներկայացուցիչներ:

Դիտարկման և գնահատման արդյունքների վրա հիմնված ընդհանուր հետևություններ և եզրակացություններ

1. Այն, որ ՀՀ ղեկավարությունը չի արձագանքել սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն դիտարկելու և որպես միջազգային դիտորդ հավատարմագրվելու հրավեր ստանալու վերաբերյալ Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմի (EPDE) դիմումին, վկայում է ՀՀ ղեկավարության՝ առավել հավատարիմ վերաբերունք ցուցաբերող առաքելություններին ու պատվիրակություններին քվեարկության ընթացքը դիտարկելու հրավեր ուղարկելու հնարավոր ընտրովի մոտեցման մասին:
2. Անցկացված մոնիտորինգի արդյունքում միայն երկու միջազգային առաքելությունների տեղեկատվական ռեսուրսներում է հաջողվել ծանոթանալ դիտորդության անցկացման իրենց մեթոդաբանությանը: Միջազգային դիտորդական առաքելությունների, պատվիրակությունների ու կազմակերպությունների գերակշիռ մեծամասնությունը չեն անցկացրել նախնական մամուլի ասուլիսներ, չեն բացատրել ՀՀ սահմանադրության հանրաքվեի քվեարկության ընթացքի վերաբերյալ իրենց դիտարկումների մեթոդաբանությունն ու ուսումնասիրությունը:
3. Որոշ միջազգային դիտորդներ, խախտելով ընտրությունների միջազգային դիտորդության սկզբունքներն ու չափանիշները, հանրաքվեի օրը քվեարկության ավարտից շատ առաջ պատրաստակամությամբ ԶԼՄ-ներով դրական են գնահատել քվեարկության ընթացքը: Չսպասելով, որ ընտրատեղամասերը փակվեն, ԶԼՄ-ներում դիտորդության ողջ ընթացքի վերաբերյալ իրենց դրական գնահատականն են ներկայացրել և քվեարկության արդյունքների վերաբերյալ իրենց գոհունակությունն արտահայտել 4 միջազգային դիտորդներ, որոնք ներկայացնում են ԱՊՀ դիտորդական առաքելությունը, ԱՊՀ

[104] News.am, http://news.am/arm/news/299939.html
[105] Armenia Today http://www.armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=139284

միջխորհրդարանական վեհաժողովը և Ռուսաստանի Դաշնության ԿԸՀ-ն ներկայացուցիչների պատվիրակությունը: (Նույն կերպ դիտարկման արդյունքներում կարելի է ծանոթանալ այդ կազմակերպությունների տվյալների ամբողջական ցուցակին)

4. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քվեարկության ընթացքի դիտարկման արդյունքների վերաբերյալ իրենց հայտարարությունն են ներկայացրել միջազգային առաքելություններ, պատվիրակություններ և կազմակերպություններ: Սակայն տվյալ կազմակերպությունների ամբողջական հաշվետվությունները և ապացուցողական բազան, որի հիման վրա արվել են այդ հայտարարություններն ու եզրակացությունները, հետագա մոնիտորինգի կենթարկվեն այդ հաշվետվությունները պատրաստելուց և հրապարակելուց հետո:

1. ԱՊՀ դիտորդական առաքելություն[106]

Պաշտոնական հրավերը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունից

Անդամներ՝ 44[107] (ՀՀ ԿԸՀ կայքի համաձայն) և 78[108] (ԱՊՀ գործադիր կոմիտեի պաշտոնական կայքի համաձայն, ներառյալ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը): Առաքելության կազմի մեջ մտել են Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Թուրքմենստանի, Ուզբեկստանի Հանրապետության ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի, Ռուսաստանի և Բելառուսի Միության խորհրդարանական ժողովի, ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչները:[109]

Առաքելության ղեկավար՝ Եվգենի Սլոբոդա

Առաքելության սկիզբը՝ 2015 թ. նոյեմբերի 26

Առաքելության գործունեությունը՝

- *հանդիպում ՀՀ ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանի հետ*
- *հանդիպում ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Աշոտ Հովակիմյանի հետ*
- *հանդիպում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ*
- *հանդիպում ՀՀ գլխավոր դատախազության ղեկավարության հետ*
- *այցելություններ տարածքային ընտրական հանձնաժողովներ*

[106] ԱՊՀ գործադիր կոմիտեի պաշտոնական կայք, http://www.cis.minsk.by/news.php?id=5805
[107] 2015 թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպությունների ցանկ http://res.elections.am/images/doc/ditint06.12.15.pdf
[108] ԱՊՀ գործադիր կոմիտեի պաշտոնական կայք, http://www.cis.minsk.by/news.php?id=5805

[109] ԱՊՀ գործադիր կոմիտեի պաշտոնական կայք, http://www.cis.minsk.by/news.php?id=5805

Գնահատական հանրաքվեի օրը

ԱՊՀ դիտորդական առաքելության անդամ, Բելառուսը ներկայացնող Միխայիլ Պետրուշին.

«Մենք արձանագրեցինք, որ ընտրատեղամասերում քվեարկությունն անցկացվում է օրենքի շրջանակում: Քաղաքացիները հանգիստ իրենց քաղաքացիական պարտքն են կատարում: Այս ընթացքում ոչ մի խնդիր չենք արձանագրել, ընտրատեղամասերում հանձնաժողովի անդամները մեր բոլոր հարցերին տալիս են հստակ, կոնկրետ պատասխաններ և տրամադրում են տեղեկատվություն: Մենք կարծում ենք, որ հասարակությունը ճիշտ ընտրություն կկատարի».[110]

ԱՊՀ դիտորդական առաքելության ղեկավար Եվգենի Սլոբոդան հայտարարել է, որ հանրաքվեն ընթանում է կազմակերպված և հանգիստ:[111]

http://armenpress.am/arm/news/828537/nablyudateli-sng-dovolniy-khodom-golosovaniya.html

ԱՊՀ պետությունների դիտորդական առաքելության ներկայացուցիչների մամուլի ասուլիսը դիտարկման արդյունքների վերաբերյալ տեղի է ունեցել 2015 թ. դեկտեմբերի 7-ին ժամը 11:00-ին Անի պլազա հյուրանոցում:

Գնահատական հանրաքվեից հետո

ՌԴ Դաշնության խորհրդի սահմանադրական օրենսդրության և պետականաշինության հանձնաժողովի նախագահ Անդրեյ Կլիշաս. «նախագահական կառավարման ձևից խորհրդարանականին անցման նպատակով անցկացված հանրաքվեն ևս մեկ անգամ հաստատեց Հայաստանում ժողովրդավարության բարձր մակարդակը»:

«Կարելի է նշել, որ բոլոր տեղամասերում եղել են հանգիստ և աշխատանքային պայմաններ: Անկասկած, ապահովվել են քաղաքացու կամարտահայտության ազատությունը (փակ քվեախցիկներ, թափանցիկ քվեատուփ) և, ընդհանուր առմամբ, ընտրական հանձնաժողովների անդամների խիստ բարյացկամ հարաբերությունները ինչպես դիտորդների, այնպես էլ հանրաքվեի ընթացքում քվեարկող քաղաքացիների նկատմամբ», - ասել է ՌԴ Դաշնության խորհրդի հանձնաժողովի նախագահը:[112]

«Ամեն ինչ ընթացել է գործող օրենսդրության համաձայն: Բոլոր ընտրատեղամասերը կահավորված են եղել սահմանված պահանջներին համապատասխան: Մեր այցելած ընտրատեղամասերի մեծ մասում կային ինչպես տեղական, այնպես էլ միջազգային դիտորդներ», - ասել է պատգամավորը: Իր բառերով՝ հանրաքվեի ընթացքին ակտիվորեն հետևել են նաև ՁԼՄ ներկայացուցիչները:[113]

---

[110] *Նովոստի Արմենիա միջազգային տեղեկատվական գործակալություն* http://newsarmenia.am/am/news/armenia/-APH-ditordnery-goh-en-/

[111] Вестник Кавказа («Կովկասի լրատու» ինտերնետային պարբերական), http://www.vestikavkaza.ru/news/Referendum-v-Armenii-protekaet-spokoyno-nablyudateli-ot-SNG.html

[112] РИА Новости («Ռիա նովոստի» գործակալություն), http://ria.ru/world/20151206/1337202458.html

[113] РИА Новости(«Ռիա նովոստի» գործակալություն), http://ria.ru/world/20151206/1337202458.html

Հանրաքվեի արդյունքների գնահատում մամուլի ասուլիսի ժամանակ

Դեկտեմբերի 7-ին հանրաքվեի արդյունքներն ամփոփող մամուլի ասուլիսի ժամանակ ԱՊՀ դիտորդական առաքելության ղեկավար Եվգենի Սլոբոդան հայտարարել է. «Քվեարկությունն անցել է ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն: Առաքելության կարծիքով՝ հանրաքվեն ընթացել է ազատ և բաց մթնոլորտում, պետական իշխանության մարմինները քաղաքացիներին հնարավորություն են տվել արտահայտելու իրենք կամքը»,-ասաց Սլոբոդան երկուշաբթի օրը Երևանում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ: Նա նաև նշել է, որ առաքելության անդամները որևէ խախտում չեն արձանագրել:[114]

ԱՊՀ դիտորդական առաքելության անդամ, ՌԴ Պետդումայի պատգամավոր Նիկոլայ Արեֆևը նշել է, որ սահմանադրության փոփոխությունների հանաքվեն համարում է լեգիտիմ: «Ուզում եմ ասել, որ անձամբ ես եղել եմ 15 ընտրատեղամասերում: Մենք չենք նկատել օրենսդրության խախտում ո՛չ ընտրողների, ո՛չ ընտրական հանձնաժողովների, ո՛չ դիտորդների և ո՛չ էլ վստահված անձանց կողմից», - շեշտել է Նիկոլայ Արեֆևը: ՌԴ Պետդումայի պատգամավորի հավաստմամբ՝ ամեն ինչ անցել է հարթ: «Եվ հավանաբար հանրաքվեի ցույց տված արդյունքը հենց հայ ժողովրդի կամարտահայտման արդյունքն է»,- հավելել է Նիկոլայ Արեֆևը:[115]

2. ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողով

Պաշտոնական հրավերը՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից

Անդամներ՝ 23 (Բելառուսի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն, Ղրղզստանի Հանրապետություն, Մոլդովայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Տաջիկստանի Հանրապետություն)

Ղեկավար՝ Ակրամշո Ֆելալիև (Տաջիկստան)

Կարճաժամկետ առաքելություն

Գործունեություն՝

- *հանդիպում ՀՀ ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանի հետ*
- *փորձագիտական խմբի հաշվետվության նախապատրաստում ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստման և անցկացման երկրաժամկետ մոնիտորինգի վերաբերյալ (հաշվետվությունը ներկայացվել է ՀՀ ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանին, և ՀՀ* Ազգային ժողովի նախագահի տեղակալ *Հերմինե Նաղդալյանին):*[116]

[114] Interfax, http://www.interfax.ru/world/483532
[115] News.am, http://news.am/arm/news/300548.html
[116] ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի պաշտոնական կայք http://www.iacis.ru/pressroom/news/mezhdunarodnyy_institut_monitoringa_razvitiya_demokratii/nablyudateli___ot_mpa_sng_vstretilis_s_rukovodstvom_tsik_respubliki_armeniya/

Հաշվետվության եզրակացություն

Հանրաքվեի անցկացման նախապատրաստությունը կարելի է բնութագրել որպես ՀՀ ընտրական օրենսդրությանը և ընտրությունների ոլորտում ՀՀ ստանձնած կարևորագույն միջազգային պարտավորություններին համապատասխան: Միջոցառումները անցկացվում են ԿԸՀ հաստատած «Հանրաքվեի նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի» համաձայն: Տեղական ՁԼՄ-ները լիակատար լուսաբանում են հանրաքվեի նախապատրաստման բոլոր փուլերը, տեղեկացնելով քաղաքացիներին հանրաքվեի և առաջարկվող սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ:[117]

- հանդիպում ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ *Հերմինե Նաղդալյանի, ինչպես նաև նոր սահմանադրության նախագծի ընդունմանը կողմ և դեմ արտահայտվող խորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչների հետ:*[118]

http://armenpress.am/arm/news/828472/nablyudateli--mezhparlamentskoiy--assamblei-sng-obeshchayut-provesti.html

Գնահատական հանրաքվեի օրը

Բելառուսի Ազգային ժողովի ներկայացուցիչների պալատի պատգամավոր Եվգենի Օբոլոնսկին հայտարարել է, որ Հայաստանում հանրաքվեն անցկացվում է «նորմալ, առանց միջադեպերի»:[119]

Գնահատական հանրաքվեից հետո

Դիտորդական առաքելության ղեկավար Ակրամշո Ֆելալիևը հայտարարել է, որ հանրաքվեն հաստատել է այն փաստը, որ Հայաստանի Հանրապետությունը պահպանում է իր առանցքային պարտավորությունները՝ թույլ տալով քաղաքացիներին ազատ կամարտահայտվել Սահմանադրության փոփոխությունների հարցով: «Ընտրական գործընթացի թափանցիկությանը նպաստել են ընտրատեղամասերում ազգային և միջազգային դիտորդները, քաղաքական կուսակցությունների վստահված անձինք, լրատվամիջոցների ներկայացուցիչները»,- ընդգծել է Ակրամշո Ֆելալիևը:[120]

Առաքելության անդամ, ՌԴ Պետդումայի պատգամավոր Վասիլի Լիխաչովը սահմանադրության հանրաքվեի արդյունքները գնահատել է որպես «առավելապես ժողովրդավարական, առավելապես պատասխանատու և առավելապես դրական»: «Ինձ համար՝ որպես իրավաբանի, խիստ կարևոր է, որ տեղամասերում լիովին պահպանվել են միջազգային ընտրական չափանիշները», մասնավորապես՝ 2002 թ. ԱՊՀ մասնակից

[117] ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի պաշտոնական կայք http://www.iacis.ru/pressroom/news/mezhdunarodnyy_institut_monitoringa_razvitiya_demokratii/proshla_vstrecha_nablyudateley_ot_mpa_sng_s_zamestitelem_predsedatelya_natsionalnogo_sobraniya_respubliki_armeniya/

[118] ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի պաշտոնական կայք http://www.iacis.ru/pressroom/news/mezhdunarodnyy_institut_monitoringa_razvitiya_demokratii/nablyudateli_ot_mpa_sng_vstretilis_s_predstavitelyami_parlamentskikh_politicheskikh_partiy_armenii/

[119] News.am http://news.am/arm/news/300377.html

[120] News.am, http://news.am/arm/news/300538.html

պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին կոնվենցիան, Եվրախորհրդի համանման կոնվենցիան, ընդգծել է պատգամավորը:[121]

3. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) պատվիրակություն

Անդամներ՝ 11

Ղեկավար՝ Անդրեաս Գրոս

Դորիս Ֆիալա (Շվեյցարիա) կամ Չարլզ Զորդանա (Անդորա)

Ան Գոդֆրի

Անդրեաս Գրոս

Քրիստոֆ Բեկեր

Բոգդան Տորկատորիու

Նիք Ռայթ

Մայքլ Հիլջեր

Գործունեություն

- Հանդիպում ՀՀ Ազգային ժողովում[122]
- ԵԽԽՎ դիտորդական առաքելության կազմում Հայաստանի հարցով համազեկուցող Ալան Միլի հանդիպումը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանրաքվեի օրը,[123] որի ընթացքում Միլը դրական գնահատական է տվել հանրաքվեին և Վենետիկի հանձնաժողովի հետ Հայաստանի համագործակցությանը:

http://armenpress.am/arm/news/828549/prezident-prinyal-sodokladchika-monitoringovoiy-komissii.html

Գնահատական հանրաքվեից հետո

Պատվիրակության ղեկավար Անդրեաս Գրոսը հայտարարել է, որ Հայաստանում սահմանադրական հանրաքվեի անցկացումը «պայմանավորված էր ոչ թե Հայաստանի հասարակության կարիքներով, այլ քաղաքական շահերով, և շատ քաղաքացիների կողմից ընկալվել է ավելի շուտ որպես վստահության քվեարկություն կառավարության հանդեպ, այլ

[121] Ru.Euronews.com, http://ru.euronews.com/newswires/3104557-newswire/
[122] News.am, http://news.am/arm/news/300166.html
[123] PanArmenian.net, http://www.panarmenian.net/arm/news/201849/

ոչ թե քվեարկություն փոփոխության համար»: Պատվիրակության հաղորդման համաձայն՝ հանրաքվեին եղել է ընտրողների համեմատաբար ցածր մասնակցություն՝ բնակչության շուրջ 50%: Երկուս ու կես տարվա բարեփոխումների գործընթացը բավարար ներառական չի եղել, և խորհրդարանն ընդամենը մի քանի շաբաթ ժամանակ է ունեցել՝ քննարկելու սահմանադրության տեքստը: Հանրային քննարկումների համար նախատեսված ժամանակը ևս սահմանափակ է եղել՝ երկու ամիս, որի ընթացքում դժվար է եղել համաձայնության հասնելը: Այսպիսով՝ սահմանադրական առանցքային փոփոխությունը՝ կառավարման նախագահական համակարգից անցումը դեպի խորհրդարանականի, շատ քաղաքացիներ ընկալել են որպես գործիք, որով գործող նախագահը մտադիր է պահպանել իշխանությունը՝ իր նախագահության երկրորդ և վերջին ժամկետի ավարտից հետո:[124]

Պատվիրակության դիտորդները նշել են նաև քվեարկության ընթացքում արձանագրված որոշ խնդիրներ, այդ թվում՝

- ընտրացուցակներում անճշտություններ (ներառյալ այն անձանց անունները, ովքեր գտնվում են արտերկրում կամ մահացել են), որ հանգեցրել են նկատառումների, որ այդ ցուցակներն օգտագործվել են բացակաների փոխարեն բազմակի քվեարկության համար

- ընտրողների զանգվածաբար կաշառման, նրնց վրա ճնշում գործադրելու, կառուսելի կիրառման կասկածներ

- գործադիր իշխանության կողմից վարչական ռեսուրսի չարաշահում

- ընտրական մարմինների պաշտոնատար անձանց վրա ճնշման գործադրման և կաշառման փորձի կասկածներ[125]

Վերոնշյալ խնդիրներից բացի պատվիրակության հայտարարության մեջ դիտարկման արդյունքներում նաև նշվում է հանձնաժողովի անդամների ոչ բավարար պատրաստվածությունը, մասնավորապես ձայների հաշվման գործընթացում: Դիտորդները նաև նշել են (տեղամասից դուրս) շարժական քվեարկության հետ կապված խնդիրների մասին, ինչի կապակցությամբ սահմանափակ կարողություններ ունեցող ընտրողները փաստացիորեն դուրս են մնացել քվեարկության գործընթացից:[126]

Հայտարարություն դիտարկման արդյունքների մասին

Դեկտեմբերի 7-ին ԵԽԽՎ-ն հրապարակել է հայտարարություն դիտորդության արդյունքների մասին:[127]

Հայտարարության մեջ նշվում է դիտորդական առաքելության տևողությունը (դեկտեմբերի 4-7), առաքելության գործունեությունը (հանդիպում խորհրդարանական խմբերի

[124] Mediamax.am, http://www.mediamax.am/am/news/foreignpolicy/16352/
[125] Mediamax.am, http://www.mediamax.am/am/news/foreignpolicy/16352/
[126] ԵԽԽՎ կայք , http://assembly.coe.int/nw/xml/News/News-View-en.asp?newsid=5932&lang=2
[127] ԵԽԽՎ կայք , http://assembly.coe.int/nw/xml/News/News-View-en.asp?newsid=5932&lang=2

ղեկավարների ու անդամների, ԿԸՀ նախագահի, քաղաքացիական հասարակության և ՁԼՄ-ների, ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի փորձագետների հետ):

Հայտարարության մեջ հիշատակվում է առաքելության երեք անդամի անուն՝ Անդրեաս Գրոս (առաքելության ղեկավար), Դորիս Ֆիալա (Շվեյցարիա), Ալան Միլ (ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցող):

4. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (փորձագիտական թիմ)[128]

Կազմակերպությունը չի իրականացնում դիտորդական առաքելություն դեկտեմբերի 6-ի հանրաքվեի ընթացքում:[129] Կազմակերպության 4 փորձագետներ գնահատում են հանրաքվեի անցկացման գործընթացը: Փորձագիտական թիմի ձևաչափը չի ենթադրում հանրաքվեի գործընթացի և ձայների հաշվարկի համապարփակ մոնիտորինգ:

Փորձագիտական թիմը պաշտոնապես հրավիրվել է ՀՀ կառավարության կողմից

Ժամանակահատված՝նոյեմբերի 26-դեկտեմբերի 13

Վերջնական հաշվետվություն՝ հանրաքվեից երկու ամիս անց

Ուսումնասիրման ուղղություն՝ հանրաքվեի անցկացման օրենսդրություն, որ կանոնակարգվում է քարոզչության միջոցով, և ՁԼՄ դերն ու հանրաքվեի անցկացման կազմակերպումը:

5. Օտարերկրյա ԿԸՀ ներկայացուցիչների պատվիրակություն

Ընդամենը՝ 33 ներկայացուցիչ

a) ՌԴ ԿԸՀ պատվիրակություն[130]

Ղեկավար՝Օլեգ Լավրով

Գնահատական հանրաքվեի օրը

ՌԴ ԿԸՀ նախագահ Վլադիմիր Չուրով. «Բոլոր ընթացակարգերը պահպանվում են, ամեն ինչ հանգիստ է, մենք չենք դիտարկել ոչ մի միջադեպ, ոչ մի խախտում»:[131] Միաժամանակ Չուրովը նշել է, թե որոշ կազմակերպչական «բացթողումներ» են նկատել հանրաքվեի անցկացման ժամանակ օրինակ՝ ընտրատեղամասին անհամապատասխան շենք, ընտրատեղամասերից մեկում ընտրողների ցուցակները անհասանելի տեղում են կախված եղել:

[128] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, http://www.osce.org/odihr/elections/armenia/203956
[129] ԱրմԻնֆո լրատվական գործակալություն, http://www.arminfo.am/index.cfm?objectid=08116CE0-9919-11E5-81DA0EB7C0D21663
[130] ԱրմԻնֆո լրատվական գործակալություն,, http://www.arminfo.info/index.cfm?objectid=13FE03D0-9809-11E5-A13F0EB7C0D21663
[131] АМИ Новости-Армения, http://newsarmenia.am/news/armenia/nablyudateli-ne-zafiksirovali-narusheniy-na-referendume-v-armenii-churov/

Գնահատական հանրաքվեից հետո

ՌԴ ԿԸՀ անդամ Օլեգ Լավրով՝ քվեարկությունն ընթացել է հանգիստ և նախատեսված օրենսդրական ընթացակարգերի շրջանակում. «Դիտորդները խախտումներ չեն նշել, տեղամասերում հանգիստ է եղել, գործնականում եղել են ՀՀ ԱԺ-ում ներկայացված բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներ: Կեսօրին դիտարկվել է մեծ աշխուժություն, անգամ տեղամասերում ոչ մեծ հերթեր են գոյացել», - հայտնել է Լավրովը քվեարկության ավարտից հետո:[132]

Դեկտեմբերի 7-ին ՌԴ ԿԸՀ պատվիրակության ղեկավար Վլադիմիր Չուրովը հայտարարել է, որ ՀՀ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն կարելի է կայացած համարել, իսկ ողջ մասնակցությունն անգամ գերազանցել է սպասելիքները:[133]

ԶԼՄ-ների ցուցակ

1. *Նովոստի Արմենիա* միջազգային տեղեկատվական գործակալություն http://newsarmenia.am/
2. News.am լրատվական-վերլուծական գործակալություն http://news.am/rus/
3. Armenia Now.com http://www.armenianow.com/
4. PanArmenian. net http://www.panarmenian.net/rus/news/201456/
5. www.1in.am RUS
6. www.azatutyun.am Radio Liberty ENG, առցանց հեռարձակում
7. www.hetq.am Rus ENG
8. www.ditord.am ENG blog
9. www.Civilnet.am առցանց հեռարձակում
10. www.epress.am
11. www.mediamax.am
12. www.hanraqve.com
13. www.transparency.am
14. www.armenpress.am
15. www.hayeli.am – նախատեսվող մամուլի ասուլիսների հայտարարություններ
16. www.sputnicarmenia.ru

[132] РИА Новости («Դիա նովոստի» գործակալություն), http://ria.ru/world/20151206/1337224141.html#ixzz3tbywwksS
[133] SputnikArmenia, http://sputnikarmenia.ru/armenia/20151207/1323561.html

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

«Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
Երևան 0019, Անտառային փող. 164/1
Հեռ. +374 10 569589 / +374 10 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
Ինտ. կայք՝ www.transparency.am

«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան ՀԿ
Երևան 0002, Փ.Բուզանդի փող. 101, բն. 4
Հեռ.՝ +374 10 500665 / +374 99 588 576
Էլ. փոստ՝ europeinlaw@gmail.com
Ինտ. կայք՝ www.ela.am

«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Գյումրի 3102, Պուշկինի փող. 96
Հեռ. +374 312 50622
Էլ. փոստ՝ admin@asparez.am
Ինտ. կայք՝ www.asparez.am

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Վանաձոր, Տիգրան Մեծի փող. 59
Հեռ.՝ +374 322 42268
Էլ. փոստ՝ hcav@hcav.am
Ինտ. կայք՝ www.hcav.am

Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմ / «Եվրոպական փոխանակում» ՀԿ
Բեռլին 10999, Erkelenzdamm 59
Հեռ. +49 30 616 714640
Էլ. փոստ՝ www.european-exchange.org
Ինտ. կայք՝ www.epde.org